

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ.Գրիգորյան, Հ. Հովհաննիսյան, [Լ. Հովսեփյան], [Ա. Մանուկյան],
Ս. Ղուկասյան

**ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ**

ՊՐԱԿ Ա

**ԵՐԵՎԱՆ
ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2022**

ՀՏԴ 81'33

ԳՄԴ 81.1

Կ 530

Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը:

Պատասխանատու խմբագիր՝ Գ. Գրիգորյան

Կ 530 Կիրառական լեզվաբանության հարցեր / Գ.
Գրիգորյան, Հ. Հովհաննիսյան, Լ. Հովսեփյան,
Ա. Մանուկյան, Ս. Ղուկասյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ
հրատ., 2022. Պրակ Ա.- 102 էջ:

Գիրքը պարունակում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի աշխատա-
կիցների աշխատանքները, որոնք 2013-15թթ. հրապարակվել են
տարբեր հանդեսներում, ժողովածուներում: Պրակում ընդգրկված
նյութերը վերաբերում են արդի փորձառական հնչյունա-
բանության, հնչույթի տեսության, սխալ և ճիշտ արտաբերության,
հայերենի այբուբենի տառերի հաճախության, Սամվել Անեցու
կյանքի ու գրական գործունեության, գրաբարում ածականների
բաղդատականության կարգի, հաղորդակցման տիպերի և կիրա-
ռական լեզվաբանության ուսումնասիրության այլ խնդիրների:

ՀՏԴ 81'33

ԳՄԴ 81.1

ISBN 978-9939-9298-2-8

© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2022

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Կիրառական լեզվաբանությունը նոր սերնդի մասնագիտություն է, որը զարգանում է գերարագորեն: Այժմ կիրառական լեզվաբանության սահմանները բավականին ընդլայնվել են և ներառում են համակարգչային ծրագրերի մշակման, մեքենական թարգմանության, տեքստային կորպուսների պատրաստման, որոնման համակարգերի, soft ծրագրերի ստեղծման դաշտերը:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժինը, որի աշխատանքներն ընթանում են հետազոտական մի քանի ուղղություններով (բնագրային համաբարբառների կազմում, կիրառական և համակարգչային լեզվաբանության արդի խնդիրների ուսումնասիրություն, փորձառական հնչյունական հետազոտություններ և այլն), ընդլայնում է իր սահմանները՝ ներառելով նաև երկլեզվյան զուգադրությունների, կորպուսային լեզվաբանության խնդիրները:

Կիրառական լեզվաբանության արդի գիտական հարցերի վերաբերյալ գրվել են հոդվածներ՝ համակարգչային լեզվաբանության արդի խնդիրների, գրաբարի էլեկտրոնային կորպուսի ստեղծման նպատակների, բառարանագրության արդի խնդիրների և այլ կիրառական հարցերի վերաբերյալ: Փորձառական հնչյունաբանության բնագավառում կատարվել են հնչյունաբանական վերլուծություններ ամենատարբեր խնդիրների հայտնաբերման, վերլուծության և եզրահանգումների վերաբերյալ (հնչյունների անկում, հպաշփական բաղաձայնների փորձառական ուսումնասիրություն, հնչյունների և տեքստերի տևողության ուսումնասիրություն, հնչերանգի հետազոտություններ և այլն): Ուսումնասիրությունները կատարվել են ձայնի վերլուծության նորագույն համակարգչային ծրագրերի միջոցով, որոնցից

ամենատարածվածը PRAAT ծրագիրն է: Վիճակագրական լեզվաբանության ոլորում ուսումնասիրվել են հարցական նախադասությունները Հին Կտակարանի աշխարհաբար և գրաբար գրքերում (Եսայու, Երեմիայի, Եզեկիելի և Դանիելի աշխարհաբար և գրաբար մարգարեություններում), արևելահայերեն և արևմտահայերեն Ավետարաններում (Մարկոս, Ղուկաս, Հովհաննես, Մատթեոս):

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժինը հրապարակում է աշխատակիցների հոդվածներն ու զեկուցումները պարունակող «Կիրառական լեզվաբանության հարցեր» ժողովածուների շարք՝ ըստ տարիների: Նյութերը քաղվում են լույս տեսած տարբեր ամսագրերից ու ժողովածուներից՝ առանց հեղինակային կամ խմբագրական միջամտության: Շարքի առաջին պրակը պարունակում է բաժնի աշխատակիցներ Գ.Գրիգորյանի, Հ. Հովհաննիսյանի, Լ. Հովսեփյանի, Ա. Մանուկյանի, Ս. Ղուկասյանի աշխատանքները, որոնք 2013-15թ.թ. հրապարակվել են տարբեր հանդեսներում և ժողովածուներում:

Գ.Գրիգորյան

2013

ԱՐԴԻ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ
ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

Գրիգորյան Գայանե
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Սույն հոդվածում ներկայացված է տեղեկություն արտերկրում գործող ուսումնական և գիտահետազոտական այն հաստատությունների մասին, որտեղ ուսումնասիրություններ են կատարվում լեզվաբանության, մասնավորապես հնչյունաբանության բնագավառում՝ ներկայացնելով այն նորություններն ու առաջընթացը, որոնք արձանագրվել են այդ հաստատություններում:

Վերջին տարիներին փորձառական հնչյունաբանության նկատմամբ մոտեցումը փոխվել է, քանի որ փոխվել են այն միջոցներն ու մեխանիզմները, որոնք կիրառվում են խոսքի արտասանության և ընկալման գործընթացում: Եթե նախկինում լեզվաբանները տալիս էին խոսքի գրավոր նկարագրությունը, հնչյունաբանական վերլուծությունները կատարվում էին լողական, անհատական (սուբյեկտիվ) մակարդակով, ապա այժմ հնարավորությունների սահմանները բավականին ընդլայնվել են: Այս մոտեցումը տևեց մինչև այն պահը, երբ հայտնվեցին լաբորատորիաներ, որոնք հնարավորություն ընձեռեցին տալու խոսքի ամբողջական և գիտական հավաստի նկարագրությունը:

Հնչյունաբանները տասնամյակների ընթացքում հիմնականում օգտվում էին ինժեներական ակուստիկայի, կապի, բնախոսության (ֆիզիոլոգիայի), հոգեբանության և խոսքի ախտաբանության (պաթոլոգիայի) ոլորտներում առկա մեթոդներից, այսինքն՝ դիտարկման առարկան՝ խոսքը,

ուսումնասիրվում էր ոչ լեզվաբանական տեսանկյունից, այլ ուրիշ գիտաճյուղերի դիտարկումների ներքո: Մրա արդյունքում 1950-ականներին ի հայտ եկան միջգիտաճյուղային խմբեր, որոնցից էին *Հասկինսի լաբորատորիաները*:

Հասկինսի լաբորատորիաները հետազոտողների բազմագիտաճյուղային միջազգային անկախ կազմակերպություն է, որն իրականացնում է խոսակցական և գրավոր լեզվի հետազոտություններ: Գիտության մի շարք ճյուղերի համագործակցության արդյունքում նրանք կատարում են նորարարական հետազոտություններ, որոնք բացահայտում են մեր ըմբռնումները խոսքի վերաբերյալ և ցույց տալիս այն ուղիները, որոնք կատարելագործում են մարդկային հաղորդակցությունը կամ վերացնում խոսքի ընկալման ու արտասանության հետ կապված արատները:

Այժմ էլ շատ համալսարաններ փորձառական հնչյունաբանությունը ուսումնասիրում են այլ գիտաճյուղերի հետ մեկտեղ: Օրինակ, *Միդնեյի համալսարանում* խոսակցական լեզվի ախտաբանության (Speech Language Pathology) բաժնում ուսումնասիրում են բուժական խնդիրներ՝ կապված արտասանելու, այդ թվում կակազելու, խոսելու, գրելու, կարդալու, ըմբռնելու հետ:

Լոնդոնի գլոբալ համալսարանում կա Ուղեղի ֆակուլտետ, որը ներառում է հոգեբանության և լեզվական գիտությունների բաժին, որն ուսումնասիրում է մարդու ուղեղը, լեզուն և վարքը: Այստեղ համախմբված են մասնագետներ մի շարք բնագավառներից՝ ճանաչողություն, նեյրոգիտություն, լեզվաբանություն, հնչյունաբանություն, կրթություն, կապ, առողջապահություն, բժշկություն: Սա հնարավորություն է տալիս հասկանալու երևույթի բազմակողմանի, հիմնարար և կիրառական խնդիրներ:

Խոսքի ընկալման և լեզվի կենտրոնը, որը գործում է *Մակքարի համալսարանի* (Միդնեյ) մարդու վերաբերյալ գիտությունների ֆակուլտետի լեզվաբանության բաժանմունքում,

բաղկացած է մի շարք հետազոտական խմբերից՝ խոսքի հետազոտություն, Աուդիոլոգիա (Audiology), խոսքի և լեզվի պաթոլոգիա, հոգելեզվաբանություն, հաշվողական լեզվաբանություն, խոսքի և լեզվի տեխնոլոգիաներ և այլն: Կենտրոնի գիտահետազոտական խմբերն իրականացնում են միջգիտաճյուղային կիրառական հետազոտություններ: Կենտրոնը նաև համագործակցում է խոսքի և լեզվի ախտաբանական կլինիկաների հետ:

Աշխարհի մի շարք երկրներում գործող ***Խոսքի տեխնոլոգիայի և ուսումնասիրման լաբորատորիաները*** հայտնի են որպես խոսքի տեխնոլոգիաների համաշխարհային առաջատար կազմակերպություններ: Այս լաբորատորիաները գտնվում են SRI International գիտահետազոտական ինստիտուտի կազմում, որը զբաղվում է գիտության առաջընթացով: Այստեղ աշխատում են գիտնականներ, ինժեներներ, համակարգչային մասնագետներ և լեզվաբաններ, նրանք ստեղծում են նոր տեխնոլոգիաներ այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են ազդանշանային գործընթացները, հնչյունաբանություն/ հնչյութաբանություն, մաթեմատիկական մոդելավորում, ինժեներական ծրագրեր և այլն:

1990-ականներին ***Խոսքի տեխնոլոգիայի և ուսումնասիրման լաբորատորիաներում*** մշակվեցին նոր տեխնոլոգիաներ, և ստեղծվեց Nuance Communications-ը, որն այսօր համաշխարհային շուկայի առաջատարներից է: Nuance-ի ծրագրային լուծումներն իրականացվեցին՝ օգտագործելով ընդամենը մարդու ձայնը՝ խոսքը, և հնարավորություն տվեցին ավտոմատացված կերպով ստանալ տեղեկություններ և իրականացնել ավտոմատացված ծառայություններ:

Իլլինոյսի համալսարանի գրականության, մշակույթի և լեզվաբանության դպրոցի հնչյունաբանության և հնչյութաբանության լաբորատորիան, որը ստեղծվել է 1967թ., աջակցում է մասնագետներին և ուսանողներին՝ հետազոտություններ կատարելու և ուսուցանելու խոսքի

հետազոտության բնագավառում՝ խոսքի արտաբերում, ընկալում, վերլուծում, խոսքի ձևավորում և կադապարում: Ներկայում լաբորատորիայում գործածվում են նորագույն սարքավորումներ և տեխնիկա՝ փորձառական հնչյունաբանական հետազոտություններ կատարելու համար: Լաբորատորիայում կատարվում է բարձրորակ թվային ձայնագրման և խոսքի ընկալման և արտաբերման փորձարկումներ, ուսումնասիրվում է խոսքի աերոդինամիկան, էլեկտրագլոտոգրաֆիան (Electroglottography), էլեկտրապալատոգրաֆիան, (Electropalatography (EPG)), արվում է հավաքագրված տվյալների վերլուծություն:

Էդիներորգի համալսարանի փիլիսոփայության, հոգեբանության և լեզվական գիտությունների դպրոցում գործում է լեզվաբանության և անգլերենի բաժինը, որն ուսումնասիրում է մարդկային լեզվի հնչյունաբանությունն ու հնչույթաբանությունը փորձարարական և ինժեներական տեսանկյուններից: Բաժինն աշխատում է երկու ուղղություններով՝ հնչյունաբանական լաբորատոր հետազոտություններ և մարդու հոգելեզվաբանություն:

Բելառուսի ազգային ակադեմիայի Ինժեներական կիրեռնետիկայի ինստիտուտում 1974 թ. առ այսօր գործում է խոսքի ճանաչման և վերլուծության լաբորատորիան, որն իրականացնում է ծրագրային (software - սոֆտվեր) և սարքային (hardware - հարդվեր) նախագծեր: Դրանցից է խոսքի վերլուծության բազմալեզու մոդելը, որը հիմնված է խոսքի ազդակների ֆորմանտների նկարագրության վրա: Օրինակ, այդպիսի մոդել է ստեղծվել ռուսերենի, անգլերենի, գերմաներենի և ֆրանսերենի համար: Լաբորատորիայում ստեղծել են նաև ռուսերենի, բելառուսերենի, ուկրաիներենի, լեհերենի և չեխերենի սինթեզատոր, որը հնարավորություն է տալիս տեքստը վերածելու հնչող խոսքի:

Ստենֆորդի համալսարանի հնչյունաբանական լաբորատորիան, որը լեզվաբանության ֆակուլտետի կազմում է

գործում, ուսումնասիրում է խոսքի արտաբերական, ձայնաբանական, ընկալողական երևույթները սոցիալական և իմացական տեսանկյուններից: Լաբորատոր հետազոտություններն այստեղ կենտրոնացված են երեք թեմաների շուրջ՝ հնչյունաբանական փոփոխություններ և ընկալում, հանրալեզվաբանություն, նախադասության գործընթաց: Լաբորատորիան սարքավորված է ձայնագրման խցիկներով՝ խոսքի արտաբերման և ընկալման/ըմբռնման գիտափորձ կատարելու համար: Լաբորատորիան համալրված է համակարգչային տարբեր ծրագրերով, որոնք ապահովում են օպտիմալ ակուստիկ վերլուծություններ:

Ստենֆորդի համալսարանում անցկացվում են տարբեր հետազոտություններ. ինչպես են ունկնդիրները ընկալում խոսքը, ինչպես են փոխգործակցում լեզվական և սոցիալական գործոնները խոսքի ընկալման և ճանաչման ընթացքում: Այստեղ ուսումնասիրվում են հնչյունական այն հատկանիշները, որոնք ստեղծում են տարբեր ոճեր արտաբերության մեջ: Որոշ հնչյունաբաններ կենտրոնանում են ձայնավորի որակի վրա, ոմանք էլ ուսումնասիրում են վերհնչությային հատկանիշները (խոսքի դադար, հնչերանգ, շեշտ), որոնք լեզվական և սոցիալական նշանակություն ունեն:

Ընկալման, խոսքի և ազդանշանի ընթացքի կենտրոնը Մուռնեյի համալսարանի Ճարտարագիտության և ֆիզիկական գիտությունների ֆակուլտետում գործող գիտական կենտրոններից մեկն է, որը հիմնադրվել է 1986 թ. պրոֆ. Յոզեֆ Կիտլերի կողմից: Կենտրոնի նպատակն է ուսումնասիրել ազդանշանային գործընթացները և ստեղծել համակարգչային ծրագրեր մուլտիմեդիայի պատկերավորման և վիդեո/աուդիո կիրառման դաշտում: Դա Մեծ Բրիտանիայում գործող ամենամեծ գիտահետազոտական կենտրոններից մեկն է, որը զբաղվում է ազդանշանի մշակման և մեկնաբանման հարցերով: Այստեղ փորձարկումներ են կատարվում համակարգչային ընկալման, թվայնացված ազդանշանների գործընթացի, ուսուցման և

մեքենայացված արհեստական բանականության ուսումնասիրման, համակարգչային գրաֆիկայի, համակարգչային պատկերի վերլուծության և մուլտիմեդիայի, կապի բնագավառներում: Կենտրոնում գործում են վեց գիտահետազոտական լաբորատորիաներ, որոնք զբաղվում են մեքենայական լսողության, հաղորդակցության հետազոտության և այլ հիմնահարցերով:

Նիդեռլանդների Մասստրիխտ համալսարանի հոգեբանության, նեյրոգիտության, ուղեղի պատկերավորման ինստիտուտում գործում է խոսքի վերլուծության լաբորատորիա, որտեղ կատարում են ձայնաբանական հետազոտություններ՝ ձայնագրություններ, լսողական վերլուծություններ՝ օգտագործելով համակարգիչ, բարձրախոս, ականջակալ և այլն, որոնք կատարվում են ձայնամեկուսիչ խցիկներում: Համակարգչային ծրագրերից օգտագործում են Պռաստը և Գոլդվեյլը՝ փորձառական հետազոտություններ կատարելու համար: Խոսքի արտաբերման փորձարկումները լաբորատորիայում իրականացվում են նաև այլ նպատակներով: Օրինակ, փորձարկման մասնակիցը նայում է համակարգչի էկրանին ցուցադրված պատկերին, անվանում է դա, որից հետո հաշվարկվում է պատկերի ցուցադրման պահից մինչև արտաբերության պահը եղած ժամանակահատվածը, թեստի ընթացքում մասնակցի կատարած սխալների քանակը: Այս ամենը կատարվում է անձայնանցիկ տաղավարում ֆոնային աղմուկը կանխելու նպատակով:

Մասստրիխտ համալսարանի այս լաբորատորիայի հետազոտական կարևոր թեմաներից է խոսակցական լեզվի ճանաչումը: Փորձարկումները կատարվում են տարիքային տարբեր խմբերի համար, օրինակ՝ ուսումնասիրվում են նորմալ զարգացած երեխաների կարողալու խանգարումները, դիալեքսիա ունեցող մանկահասակների խոսքը, ինչպես նաև շրջակա միջավայրի ճանաչումը ձայների և երաժշտության հնչյունների ընկալման միջոցով:

Ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեթոդների և սարքերի մասին

Քանի որ հնչող խոսքը արագ և անցողիկ երևույթ է ժամանակի մեջ, ուստի այս առումով լեզվաբանները դժվարությունների առջև են կանգնում: Սակայն հարցի լուծման ուղիներից մեկը խոսքը ձայնագրելն է, երբ խոսքը վերածվում է նյութական մի ձևի, որը կոչվում է տեսողական ձևափոխություն (*visual transformation*):

Առաջին բանը, որ սովորաբար արվում էր և դեռևս արվում է փորձառական հնչյունաբանության լաբորատորիայում, խոսքի ձայնագրումը և դրա փոխակերպումն է էլեկտրական էներգիայի: Այս էլեկտրական էներգիան, որը փոխակերպված խոսքն է, իր հերթին փոխակերպվում է տեսողական ձևի՝ թղթի վրա: Տեսողական ներկայացման համար անհրաժեշտ է նաև նկատի ունենալ ժամանակի առանցքը: Այսպիսով, հնչյունաբանը ի վիճակի է լինում ուսումնասիրելու ֆիքսված խոսքը, հետ և առաջ տանելու, լսելու մի շարք անգամներ, ցանկացած հատվածներ և այլն: Եթե կազմելու լինենք այս երևույթի փոխակերպման, ձայնագրման և պատկերավորման դիագրամը, ապա կունենանք հետևյալը՝

Խոսք – պերմանենտ¹ ձայնագրում- արձանագրում/գրանցում

Փորձառական հնչյունաբանության մեջ գործածվող առավել տարածված մեթոդը մագնիսական ժապավենի վրա ձայնագրումն էր: Չայնի վերլուծության համար գործածվող սարքերից էին խոսափողը (միկրոֆոն), օդաչափիչը (Aerometer), էլեկտրագլոտոգրաֆը (Electroglottograph), արագացուցիչը (Accelerometer), էլեկտրամկանագիրը (Electromyograph), որոնք օգտագործվում են նաև այլ բնագավառներում՝ բժշկության, ֆիզիկայի և այլն:

¹ Պերմանենտ ասելով՝ հասկանում ենք անփոփոխ ձայնագրությունը:

Ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեջ օգտագործվում են հետևյալ սարքերը.




Խոսափող (Microphone): Փոխակերպում է ձայնային ալիքը էլեկտրական ազդակների:




Օդաչափիչ (Aerometer): Հայտնաբերում և փոխակերպում է օդի հոսքը էլեկտրական ազդակների:



Էլեկտրագլոտոգրաֆ (Electroglottograph): Նախատեսված է դիտարկելու 2 ձայնալարերի միջև կոնտակտային մակերեսը: Բարձր հաճախականության հոսանքն անցնում է 2 էլեկտրոդների միջով, և ձայնալարերի բացումն ու փակումը առաջացնում է տատանումներ, որից դիմադրողականությունը փոխվում է:




Աքսելերոմետր(Accelerometer): Սա մի սարք է, որը հայտնաբերում է շարժման արագության փոփոխությունը: Հնչյունաբանական լաբորատորիայում դա օգտագործվում է, օրինակ, պարանոցի պատի կամ քթի խոռոչում տատանումները հայտնաբերելու համար:



Էլեկտրամկանագիր (Electromyograph): Էլեկտրամկանագիրը հնարավորություն է տալիս բացահայտելու

և ձայնագրելու էլեկտրական ազդանշանները, որոնք առաջացել են մկաններում:



Տատանագրիչ (oscillograph): Սա էլեկտրական ազդանշանները դիտելու և չափելու սարք է (լատ. *oscillum տատանում* + հուն. *grapho գրում էմ*):

Ժամանակակից հնչյունաբանության մեջ այժմ օգտագործվող նորագույն մեթոդներից է խոսքի ճանաչման և սինթեզի ավտոմատ ծրագրերի և համակարգչային վերլուծության կիրառումը: Ինչպես հեռախոսները, համակարգիչները և այլ սարքեր չափերով փոքրացան, այնպես էլ ձայնի վերլուծության սարքերը, որոնք մեծ տեղ էին գրավում սենյակում, ամփոփվեցին ընդամենը համակարգչի մեջ, որում տեղադրվեցին ձայնային վերլուծության տարբեր ծրագրեր:



Ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեջ օգտագործվող խոսքի վերլուծության ծրագրերից այժմ օգտագործվում է մի ծրագիր, որի անունն է Պռաստ: Praat-ը (հոլանդերեն՝ «խոսք, խոսել») համակարգչային ծրագրային փաթեթ է, որը հնչյունաբանության մեջ նախատեսված է խոսքի վերլուծության, այդ թվում սպեկտրաֆիկ վերլուծության և

խոսքի սինթեզի համար: Դա մշակվել է և շարունակում է զարգանալ Պոլ Բոերսմայի (Paul Boersma) և Դեյվիդ Ուինինկի (David Weenink) կողմից Ամստերդամի համալսարանում: Ծրագիրը ստեղծվել է 1995թ. (տարբերակ 3.1), ունեցել մի քանի տարբերակներ. վերջինը ստեղծվել է 2013-ի հունվարին (տարբերակ 5.3.39):

Ներկայում գոյություն ունեն մի շարք սոֆտվեր ծրագրեր, որոնք իրականացնում են ձայնի վերլուծություն: Դրանցից են նշված Պոաստը, Գոլդվեյվը (Goldwave), Վասալը (WASP), Աուդասիթին (Audacity), Վոյսըգեյնը (VoiceAgain) և այլն: Նորագույն համակարգիչների մեջ տեղադրված է ձայնի վերլուծության ծրագիր՝ ձայնի ձայնագրիչ (Sound Recorder), որը հնարավորություն է տալիս ձայնագրել և ստանալ ձայնի պատկերը: Վերջինս ստանալուց հետո կարելի է հաշվարկել ժամանակը, կտրել ձայնապատկերի ցանկացած հատված, պատճենահանել, արձագանք տալ, հատվածները բազմիցս լսել և այլն:

Григорян Гаяне - Состояние современной экспериментальной фонетики зарубежом.

В данной статье представлена информация о деятельности тех научно- исследовательских учреждений, университетов и институтов за рубежом, которые занимаются лингвистикой, в частности фонетикой и экспериментальной фонетикой. Представлены новости и технический прогресс, которого ученые добились в этих учреждениях в сфере экспериментальной фонетики.

В последние годы, экспериментальный подход к фонетике изменился в связи с изменениями в механизмах, которые используются для обработки произношения речи. Если в прошлом лингвисты давали письменное описание речи, а фонетические анализы делались слуховым, индивидуальным (субъективным)

путем, то в настоящее время границы возможностей довольно расширились в этой сфере.

Grigoryan Gayane - The State of Modern Experimental Phonetics Abroad.

This article provides information on the activities of the scientific research institutions and universities abroad which are engaged in linguistics, especially in phonetics and experimental phonetics. The author provides news and technical progress that scientists have made in these institutions in the field of experimental phonetics.

In recent years, experimental approach to phonetics has been changed due to changes in the mechanisms that are used to process speech pronunciation. If in the past linguists have given the written description of speech, phonetic analyzes were done through individual (subjective) hearing, nowadays the boards of possibilities have been expanded in this sphere.

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԽԱԼ ԵՎ ՃԻՇՏ ԱՐՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Գրիգորյան Գայանե
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Թվականները, առաջին հայացքից, ամենից հեշտն են արտաբերության իմաստով: Սակայն պարզվում է, որ ամենից շատ սխալներ անում են հենց այս խոսքի մասի արտաբերության ժամանակ: Գրության մասին խոսելիս գործը հեշտ է այնքանով, որ դրանք գրվում են հիմնականում թվանշաններով, թեև արտաբերվում են ամբողջությամբ:

Անդրադառնանք թվականներին դասական դասակարգմամբ՝

1. **Քանակական թվականներ**
2. **Դասական թվականներ**

Քանակական թվականներն իրենց հերթին տեսակավորվում են 3 խմբերի՝ **բացարձակ, բաշխական և կոտորակային:**

1. Քանակական թվականների արտաբերությունը

1.1 Բացարձակ թվականների *արտաբերությունը*

1.1.1. Բացարձակ թվականների միավորների *արտաբերությունը*

Բացարձակ թվականների միավորների արտաբերությունը բարդություն չի ներկայացնում, սակայն թերևս այստեղ են անում ամենից շատ սխալները:

Մի, մեկ*, երկու (*երկուս, երկու* սխալ արտաբերմամբ), **երեք** (*իրեք*), **չորս** (*չոռս*), **հինգ** (*հինգը*), **վեց** (*վեցը*), **յոթ** (*յոթը*), **ութ**

(*ութը*), **ինն** (*իննը, ինը`* չնայած ժամանակի ընթացքում ունանց համար կանոնական է դարձել նաև *ինը* ձևը):

1.1.2. Բացարձակ թվականների տասնավորների *արտաբերությունը*

Տասն թվականի գրության և արտասանության սխալի մասին բազմիցս խոսվել է, քանի որ դա այնքան շատ տարածված է, որ արդեն վտանգ կա սխալ ձևը որպես ճիշտը ընկալելու: Ինչպես նկատում ենք, այն թվականներում, որտեղ երկրորդ բաղադրիչը սկսվում է ձայնավորով, նրան նախորդող **տասն** թվականի **ը**-ն չի արտասանվում, օրինակ` **տասնուութ**, կամ, երկրորդ բաղադրիչի` բաղաձայնով սկսվելու դեպքում, արտասանվում է սխալ տեղում, օրինակ` **տասնըչորս** (ճիշտը` **տասընչորս**):

Քիչ չեն արտասանական սխալները նաև բացարձակ թվականների տասնավորների արտաբերության ժամանակ: Այստեղ պիտի կատարել համակարգային փոփոխություն: Քանի որ **տասն**ավորները բաղկացած են *տասն* թվականից և որևէ միավորից, ապա դրանք պետք է արտասանել` **տասընմեկ, տասներկու** (*տասըներկու*-ի **ը**-ն սղվում է), **տասներեք** (*տասըներեք* -ի **ը** -ն սղվում է), **տասընչորս, տասընհինգ, տասընվեց, տասընյոթ, տասնութ** (*տասընութ* -ի **ը** -ն սղվում է), **տասնինն** (*տասընինն* -ի առաջին **ը** -ն սղվում է), այլ ոչ թե` **տասնըմեկ, տասնըյերկու, տասնըյերեք, տասնըչորս, տասնըհինգ, տասնըվեց, տասնըյոթ, տասնըութ, տասնըինը**, (կամ` **տասնըիննը**):

Քսան թվականը երբեմն արտաբերում են `քշսան, քանի որ **քսան** թվականն արտաբերելիս թեթևակի լսելի է ը ձայնավորը` **ք** և **ս** բաղաձայնների միջև:

Երեսուն թվականը շատ հաճախ արտաբերում են **եռեսուն**, հավանաբար ի նկատի ունենալով **եռակի, եռագույն, եռյակ** բառերը, որոնց արմատը **եռ**-ն է:

*Մեկ թվականն առաջացել է գրաբարյան մի և ակ ածանցի միացումից՝ մի+ակ= մեկ:

Դեր է կատարում նաև **քառ** արմատով կերտված բառերի (**քառասուն**, ինչպես նաև **քառագույն**, **քառակի**, **քառյակ**) գոյությունը, հետևաբար ընդունելի է դառնում **երեսուն** թվականի **եռեսուն** տարբերակը:

Հիսուն թվականի արտաբերությունը ևս աղավաղում են՝ հնչեցնելով **հիցուն**.. նույն կերպ՝ **վաթսուն**-ը՝ **վացուն** , **ութսուն**-ը՝ **ուցուն**:

Կլոր տասնավորների արտաբերության ժամանակ հիմնական սխալներն արվում են **ութսուն** (80) թվականի դեպքում՝ **ութանասուն** արտաբերմամբ՝ **յոթանասուն**-ի նմանությամբ (շատ անգամ էլ նույնիսկ գրում, նույնիսկ տպագրում են **ութանասուն**):

Իննսուն թվականի ճիշտ արտասանությունը **ինընսունն** է, սակայն արտասանում են **իննըսուն**:

1.1.3.. Բացարձակ թվականների հարյուրավորների *արտաբերությունը*

Հարյուրավորների արտաբերությունն էլ աղավաղվում է **հարյուր**-ը *հայրուր* կամ *հարուր* դարձնելու հետևանքով (հիշենք, որ նման վերաբերմունք են ցուցաբերել **Մարիամ** անվան նկատմամբ՝ *Մայրամ*):

1.1.4.. Բացարձակ թվականների հազարավորների *արտաբերությունը*

Հավանաբար շեշտելու համար **հազար** թվականի մեծությունը բառն արտաբերում են **զ**-ի երկարացմամբ(*հազզար*): Նման մի երևույթ է ումանց կողմից թե՛ **միլիոն**, թե՛ **միլիարդ** թվականների լ-ի երկարացումը (*միլլիոն*, *միլլիարդ*) ինչը կատարում են՝ շատ անգամ ամենևին էլ չիմանալով, որ այդ

բառերը իրենց (հունարեն) և բազմաթիվ այլ լեզուներով գրվում և արտասանվում են 2 լ-ով: Փաստորեն սխալմամբ հնչեցնում են ճիշտը, չնայած դպրոցական դասագրքերում և բառարաններում կանոնական է 1 լ-ով ձևը:

1.2. Բաշխական թվականների *արտաբերությունը*

Քանի որ բաշխական թվականները կազմվում են
ա) բացարձակ թվականների վրա **-ական** ածանցի ավելացումով կամ
բ) բացարձակ թվականի կրկնությամբ (միացման գծիկով),

հետևաբար **բաշխական թվականների** արտաբերության ժամանակ արվող սխալները պայմանավորված են **բացարձակ թվականների** արտաբերության սխալներով:

1.3. Կոտորակային թվականների *արտաբերությունը*

Քանի որ **կոտորակային թվականները** կազմվում են
ա) **բացարձակ թվականի** և **-(ե)րորդ** վերջածանցի** միջոցով կամ

բ) **բացարձակ թվականի**, **-(ե)րորդ** և **ական** բաղադրյալ վերջածանցի միջոցով,

հետևաբար **կոտորակային թվականների** արտաբերության ժամանակ արվող սխալները պայմանավորված են **բացարձակ թվականների** արտաբերության սխալներով:

Կարելի է առանձնացնել կոտորակային թվականների 2 տեսակներ.

ա) **սովորական** (1/5),

բ) **տասնորդական** (1,5):

Եթե **սովորական կոտորակային թվականը** կազմվում է **բացարձակ թվականի**, **(ե)րորդ** և **ական** բաղադրյալ վերջածանցի

միջոցով, ապա **տասնորդական թվականը** կազմվում է **բացարձակ թվականի, ամբողջ բառի, բացարձակ թվականի** և

ա) 10-ի դեպքում՝ **-որդ ու ական** բաղադրյալ վերջածանցի միջոցով,

բ) **100, 1000, 10 000 թվականների** դեպքում՝ **երորդ ու ական** բաղադրյալ վերջածանցի միջոցով.

****Այս ածանցով և բացարձակ թվականով կազմվում են դասական թվականները (դասականների մասին խոսք կլինի հետո)**՝ բացառությամբ՝ **առաջին** թվականի:

1,5 – մեկ ամբողջ, հինգ տասնորդական,

1.05 – մեկ ամբողջ, հինգ հարյուրերորդական

1, 005 – մեկ ամբողջ, հինգ հազարերորդական:

Ինչ վերաբերում է **կոտորակային թվականների** արտաբերությանը, ապա շատ դեպքերում չեն արտաբերում **տասնորդական, հարյուրերորդական, հազարերորդական** բառերը, որը բացի լեզվաբանական թերություն լինելուց՝ հանգեցնում է թվաբանական սխալների:

2. Դասական թվականների արտաբերությունը

Դասական թվականներից **երկու, երեք և չորս**-ը կազմվում են քանակական թվականներով և **որդ** ածանցով, իսկ մնացած դասական թվականները՝ **երորդ** ածանցով՝ բացառությամբ **մեկ** թվականի, որը արտահայտվում է **առաջին** ձևով: Սակայն բարդություններում **մեկ** թվականը կազմավորվում է **երորդ** ածանցի ավելացումով (**տասնմեկերորդ, քսանմեկերորդ, երեսունմեկերորդ** և այլն), իսկ **երկու, երեք և չորս** թվականներով

կազմված բարդությունները՝ ոչ թե **բորդ**, այլ՝ **երբորդ** ածանցի (**քասներկուերորդ, երեսուներեքերորդ, քառասունչորսերորդ**):

Դասական թվականները գրավորում արտահայտվում են մի քանի կերպ.

1. Բառի ամբողջական գրությամբ՝ **առաջին, երկրորդ, հարյուրերորդ** և այլն:

2. Հայերեն այբուբենի տառերով՝ **ա** (1-ին, այսինքն՝ առաջին), **բ, գ** և այլն:

3. Հայոց այբուբենի տառերի անուններով՝ **այբ** (1-ին, այսինքն՝ առաջին, **բեն** (2-րդ), **գիմ** (3-րդ) և այլն: Սակայն <<Շատ սովորական է դարձել մեր այբուբենի տառերի անունների փոխարեն կիրառել այլ այբուբենի տառերի անունները, __ նկատել է Խաչատուր Կանայանը: __ Ասում են. «Ես պարապում եմ *բե* (կամ *գե*) դասարանում»: Հայերենի այդ տառերի անուններն են՝ *բեն, գիմ*, իսկ հնչյունները՝ *բբ, գգ*>> (9.9):

4. Արաբական կոչվող հնդկական թվանշաններով և **րդ** մասնիկով, մեջտեղում՝ գծիկ, օրինակ՝ 2-րդ, 65-րդ, 109-րդ՝ բացառությամբ՝ **մեկ** թվականի, որը պատկերվում է **1-ին** ձևով, ինչն էլ մի դեպքում արտասանվում է **մեկին** (հունվարի մեկին), իսկ մյուս դեպքում՝ **առաջին** (առաջին տարին): Ի դեպ, նշենք, որ գրում են նաև **հատոր 4, համար 5, գլուխ 6, էջ 7**, սակայն դրանք արտասանելով **հատոր չորրորդ, համար հինգերորդ, գլուխ վեցերորդ, էջ յոթերորդ**:

5. Լատիներեն այբուբենի տառերով (հռոմեական թվանշաններով)՝ I, II, III, IV, V, VI, VII, VIII և այլն:

Թվարկությունների ժամանակ թվականից հետո դրվում է փակող, կլոր փակագիծ կամ միջակետ, հետևաբար արաբական կոչվող հնդկական թվանշանից հետո **-րդ** չի դրվում:

Դասական թվականների սխալ արտաբերության վառ օրինակներ են **երբորդ, չորրորդ** թվականները մեկ **ր**-ով արտաբերելը: Եթե **չորրորդ** թվականը մեկ **ր**-ով արտասանելիս

(նույնիսկ գրելիս) ընդամենը տվյալ թվականի աղավաղումն է, ապա **երրորդ** թվականը մեկ **ք**-ով արտասանելիս (նաև գրելիս)՝ տվյալ թվականի փոխարինումն է վերջածանցով (**-երրորդ**):

Թվականների արտաբերության ժամանակ նկատելի են ոչ միայն հնչյունական սխալներ, այլև բառերի բացթողումներ: **Կոտորակային թվականների** տասնորդական տեսակը արտաբերելիս չեն արտաբերում *տանորդական, հարյուրերորդական, հազարերորդական* անվանումները, որոնք հանգեցնում են իմաստային սխալի: Օրինակ՝ 1,5՝ մեկ ամբողջ հինգ տասնորդական, 1,05՝ մեկ ամբողջ հինգ հարյուրերորդական, 1,005՝ մեկ ամբողջ հինգ հազարերորդական:

Ստորև ներկայացված աղյուսակում տրված են թվականների սխալ և ճիշտ արտասանությունները.

Մխալ արասանությունները	Ճիշտ արտասանությունները
Երկուս, երկու	Երկու
Իրեք	Երեք
Չոռս	Չորս
Հինգը	Հինգ
Վեցը	Վեց
Յոթը	Յոթ
Ութը	Ութ
Իննը	Ինը
Տաս	Տասը***, տասըն
Տասնըմեկ	Տասընմեկ
Տասնըյերկու	Տասներկու
Տասնըյերեք	Տասներեք
Տասնըչորս	Տասընչորս
Տասնըհինգ	Տասընհինգ
Տասնըվեց	Տասընվեց
Տասնըյոթ	Տասընյոթ

Տասնրուֆ	Տասնուֆ
Տասնրիննր	Տասրնիննր
Քրսան	Քսան
Քառսուն	Քառասուն
Հիցուն	Հիսուն
Վացուն	Վաթսուն
Ուցուն, ութանասուն	Ութսուն
Իննրսուն	Ինընասուն
Հայրուր, հարուր	Հարյուր
Հազգար	Հազար

***Հեռանալով կամ անտեղյակ լինելով բառի արմատից՝ օրինական ուժ են տվել **տասր** ձևին, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ **տաս** բայը **ը** որոշիչ հոդով:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ա. Աբրահամյան**, Գրաբարի ձեռնարկ, երրորդ հրատ., 1964, Երևան, էջք 64-73:
2. **Ս.Գ. Աբրահամեան, Բ. Յ. Վերդեան, Վ. Ա. Քոսեան**, Հայերեն լեզուի դասագիրք, 1966, Երևան, <<Լոյս>> հրատ., էջք 110-115:
3. **Է. Բ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1-ին, 1976, Երևան:
4. **Է. Բ. Աղայան, Հ. Խ. Բարսեղյան**, Հայոց լեզու, դասագիրք միջնակարգ դպրոցի V-VIII դասարանների համար, 1965, Երևան, <<Լոյս>> հրատարակչություն, էջք 158-167:
5. **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հատոր I, 1952, Երեվան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., երկրորդ մաս՝ **Թվական** (էջք 129-340):
6. Առձեռն բառարան Հայկազեան լեզուի (2-րդ էջում՝ Առձեռն բառարան հայերեն լեզուի), երկրորդ տպագրություն, 1865, Վենետիկ, ի սուրբ Ղազար:

7. **Հ. Բարսեղյան**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, 1973, Երևան:

8. **Ս. Գյուլբուդաղյան**, Թվական անունը ժամանակակից հայերենում, 1964, Երևան:

9. **Խ. Կանայան**, Լեզվական շեղումները և պայքարը դրանց դեմ, 1969, Երևան, էջ 9-րդ:

10. **Ս. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հատոր երկրորդ (Ձ – Կ), 1944, (Յ)Երևան, ՀՍՍՌ, պետհրատ, «Թուական», էջ 121-րդ:

11. **Վ. Քոսյան, Թվական** [*Հայկական սովետական հանրագիտարան*], հատոր 4-րդ, 1978, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., էջ 220-րդ]:

Gayane G. Grigoryan - Correct and Incorrect Pronunciation of Numerals of the Modern Armenian Language - In the given article we showed examples of incorrect pronunciation of all types and species of numerals of the modern Armenian language. In the meantime we provided the correct versions of pronunciation of numerals. Many of them are also given in parallel in a table.

Гаяне Г. Григорян - **Правильные и неправильные произношения числительных современного армянского языка** - В данной статье впервые показаны примеры неправильных произношений всех видов и подвидов числительных современного армянского языка, одновременно приведены их правильные виды. Многие из них даны также в параллельной таблице.

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ ԿՅԱՆՔՆ
ՈՒ
ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
/ «Ո՞վն, ո՞ւստն և զիարդն». ՍԱՄՈՒԷԼ/

Հովհաննիսյան Հայկանուշ
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Տասներկուերորդ դարի պատմիչ Սամվել Անեցու ինքնության մասին քիչ տեղեկություն է ավանդված հայ պատմագրության մեջ, թերևս միայն պատմագիրների կարգում անվան հիշատակմամբ:

Նրա մասին՝ որպես հայ պատմիչի, իրեն ժամանակային առումով ամենամոտ հիշատակությունը գտնում ենք նրա հայրենակից և ժամանակակից ու նրա ժամանակագրության՝ Քրոնիկոնի առաջին ընթերցողներից և օգտվողներից մեկի՝ Մխիթար Անեցու «Պատմութեան» մեջ: Մխիթարը հայ պատմագիրների շարքում իրեն շարակարգում է Սամվելից անմիջապես հետո՝ որպես վերջին գործի հեղինակ: Նա թվարկում է իրենից առաջ եղած պատմիչներին և նրանց գործերը՝ խոսքն ամփոփելով այսպես. «Տեր Յովհաննես: Եւ Ասողիկ: Եւ Լաստիվերտցին: Եւ Կոզանն: Եւ Սամուէլ երիցու: Իսկ ամենի վերջինն՝ այս որ ի մենջս գրեալ:»¹

Կիրակոս Գանձակեցին, որն ապրել է նրանից անմիջապես հետո՝ 13-րդ դարի հենց սկզբից մինչև դարի վերջին քառորդը, իր «Հայոց Պատմության» մեջ Արիստակես Լաստիվերտցուց, Մատթէոս Ուռհայեցուց հետո դնում է. «Եւ Սամուէլ քահանայ կաթողիկէին Անույ: Եւ ապա մեծիմաստ և

¹Մխիթարայ Անեցոյ «Պատմութիւն», էջ 15.1879թ., Ս.Պերերբուրգ:

հանճարեղ վարդապետն Վանական:»² Վերջինս եղել է իր և իր սննդակից դասընկերոջ՝ Վարդան Արևելցու ուսուցիչը:

Եվ երկրորդ անգամ նրա մասին նշում է իր գրքի 84-րդ էջում. «Ձի մինչ ցՄելիքշահ սուլթանն գրեալ էր զպատճառս տիրելոյն նոցա / արարների.Հ.Հ. / մեծիմաստ վարդապետն, որ Սարկաւագն կոչէր, և երկրորդեալ էր Սամուէլ քահանայի»: ³ Պետք է ասել, որ **Սամուէլ քահանայի** աշխատանքը եղել է նրա ձեռքի տակ, սեղանի գիրք, որից շատ հատվածներ նույնությամբ մեջբերված են նրա «Պատմութեան» մեջ առանց աղբյուրի հիշատակման: /Ակադեմիկոս Հ. Մելիք Օհանջանյանը Կ.Գանձակեցու քննական բնագիրը կազմելիս՝ նկատել է այդ: Իսկ մենք էլ Գանձակեցու գործի Համաբարբառը խմբագրելիս՝ առանձին դուրս ենք գրել բոլոր այն հատվածները, որոնք նույնությամբ վերցված են Սամվել Անեցու «Հավաքմունք ի գրոց պատմագրաց» գործից:

Նրա ընկեր Վարդան Արևելցին իր «Պատմութիւն տիեզերական» երկում, թվարկելով 11-12 դարերի գրական գործիչներին՝ շնվհաննես Սարկավագից հետո նշում է. «և Սամուէլ երէց Անեցին, որ զգաւագանսն յօրինեաց Քրոնիկոնին»: ⁴

Մենք ներկայացրինք միայն նրան անմիջականորեն մոտ ժամանակաշրջանի հեղինակների վկայությունները՝ կարևոր համարելով դրանք:

Գիրքը՝ «Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» վերնագրով, հրատարակվել է 1893թ. էջմիածնում՝ «Յառաջաբանով/ձեռագրերի/համեմատութեամբ, յաւելուածներով և ծանօթութիւններով» Արշակ Տեր Միքելեանի ջանքերով և «Հրամանաւ Ամենապատիւ Տ.Տեղակալի Հայրապետության Հայոց

²Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», 1961թ., Երևան:

³Նույն տեղում:

⁴ Վարդան Արևելցի-Բարձրաբերդեցի, «Պատմութիւն Տիեզերական», 1861թ., Մոսկվա:

Տ.Երեմիայ Եպիսկոպոսի»։ Այս ուսումնասիրությունն էլ կատարված է՝ հիմք ունենալով այդ հրատարակությունը։

Քննության են առնվել Սամուէլ Անեցու ժամանակի, ուսման ու կրթության, նրա միջավայրի, «Հաւաքմունքի...» և «Պատմութիւն վարուց Ներսիսի եպիսկոպոսի» գործերի միջև եղած կապի, դրանով իսկ դրանց հեղինակների նույնության, գրքի մեկենասի, գրության ժամանակի, գործի ամբողջականության հարցերը՝ կապված հեղինակի կյանքի և գրական գործունեության հետ։

Մեծավաստակ գիտնական Արշակ Տեր-Միքելեանը Սամուէլ Անեցու վերաբերյալ տեղեկություններ փորձել է գտնել նրա իսկ գործերի մեջ։ Նա գրքի «Յառաջաբանում» հեղինակի անձնավորության բացահայտման համար միայն մի կովան է գտել ամբողջ երկասիրության մեջ, «Ինքը միայն մի տեղ է իւր անունը յիշատակում, այն է էջ 128.» Եւ ընկերք սորա /Սարգսի Փառիսոսոցոյ/ տէր Խաչատուր և Գրիգոր և Յովհաննէս և Սամուէլ, ամենեքեան սոքա Անեցիք։»⁵ Փակագծում եղած ծանուցումը Ա.Տեր-Միքելեանինն է։

Եվս մի կովան. «Ներսէս Լամբրոնացու «Մեկնութիւն Սաղմօսաց» գործի յիշատակարանի մեջ ևս յիշում է Սամուէլ ուն՝ 1190 թուից / տես. ստորև էջ 231.233 / նույն տեղում /⁶ նշում է նա՝ երկբայելով սակայն երկու Սամուէլների նույնության վրա։ Պետք է ճշտել, որ 231 էջի վկայումը նույն Լամբրոնացու վարքագրության մեջ է և ոչ նրա հիշատակարանի։

Բայց արդյո՞ք միայն «Եւ ընկերք սորա՝ տէր Խաչատուր և Գրիգոր և Յովհաննէս և Սամուէլ, ամենեքեան սոքա Անեցիք» փաստագրումը բավարար հիմք կարող է տալ հաստատելու, որ դա հենց պատմագիր Սամուէլ Անեցին ինքն է։ Չէ՞ որ պարմիչը

⁵ Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, 1893թ., Էջմիածին, «Յառաջաբան»։

⁶Նույն տեղում։

նույն կերպ կարող էր ասել և ուրիշների մասին՝ նրանց ներկայացնելիս:

Գրքում մեկ այլ, առավել հաստատող արձանագրում էլ կա՝ 1161 թվին Վրաց Գեորգի թագավորի կողմից Անիի գրավման նկարագրությունը, որին ականատես է եղել «Քրոնիկոնի գաւազանի» հեղինակը. «Ի ՈԺ. թվին թագաւորն Վրաց Գօրգի՝ էառ զԱնի՝ ի յունիս ի ԺԳ. և ապա օգոգոսս ամսամտին՝ կոտորեաց զՇահիարմենն. ԷՌ.աւ զութսուն Ռ.սն. և այսորիկ ականատես եղաք մեք»:⁷ Եվ ապա շարահարում. «Ի ԳՌ. գրով այն էր զոր գերեաց, թող զանկեալ դիակունսն՝ որ **ծածկէր** զանդաստանս մեր»:⁸ Այս փաստին՝ այսպիսի մանրամասնությամբ նկարագրված, անհնար է հավատ չընծայել, թե Մամվելն ականատես է եղել իր նկարագրած դեպքերին:

Թեկուզ և «**ծածկէր**» բայի անկատար ժամանակաձևը և «**զանդաստանս մեր**» բառակապակցությունը, որոնք ապացուցում են, որ կատարվածը ականատեսի նկարագրություն է: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ դեռևս 1161թ. Մամվելը գտնվում էր Անիում, իսկ Գանձակեցու օգնությամբ էլ ճշտել, որ նա եղել է «քահանայ կաթողիկէին Անույ»: Եվ շատ հնարավոր է, որ ինքն էլ մասնակցել է պատերազմական գործերի ամփոփագրմանը, որ այդպես մանրակրկիտ տեղեկություններ է փաստագրել:

Եթե նա 1161թ. այնքան հասուն ու ճանաչված մեկն է եղել, որ արժանացել է Վրաց թագավորական գործերի ամփոփագիրը կազմելու պատվին, ինչպես ցույց տրվեց վերում, ապա կարող ենք նրա կենսագրական շղթան է՛լ առավել ետ պտտել՝ հասցնելով մինչև Անիի առաջին առումը Վրաց Դավիթ թագավորի կողմից ՇՀԳ. 1124 թիվը, որի առիթով նա այնպիսի մանրամասներ է ներկայացնում, որը կարող է անել և իմանալ միայն ականատեսը, թեև այս անգամ չի նշում այդ հանգամանքը: Նա նկարագրում է

⁷Մամուլի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 137, 1893թ., Էջմիածին:

⁸Նույն տեղում, էջ 137:

երկրի ծանր վիճակը սկյութների և արաբների ասպատակությունների պատճառով, երբ Անին գտնվում էր արաբ Ապլսուարի իշխանության տակ, և բացատրում, թե ինչու հայերը՝ «տարակուսեալ և տառապեալ բնակիչք Անույ և Շիրակ գաւառի» ձեռնատու եղան Վրաց թագավորին՝ քաղաքը նրան հանձնելով, ազատվելու համար այդ վայրի ցեղերի պատճառած տառապանքներից: Ապա նկարագրում է Վրաց թագավորի կողմից գերեվարված Ապլսուարի որդու՝ Փատլունի կողմից Անիի պաշարումը, Իվանէի քաջամարտությունները, մանավանդ Այծյամ անունով կնոջ խիզախությունը, որն իր անվան համապատասխան թեթևաշարժ ու համարձակ՝ պարիսպներից կովում էր պաշարողների դեմ: Պատմում է ականատեսի աչքով ու տպավորությամբ բնակիչների կրած տանջանքների, շրջակայքում փռված դիակների ոսկորների, գիշերով քաղաքից փախչողների և նրանց նահատակության մասին: Այդ ամենից հետո է, որ ստիպված քաղաքը հանձնվում է Փատլունին՝ պայմանով, որ նա վրեժ չհանի Վրաց թագավորին հայերի ձեռք մեկնելու համար: Փատլունն սկզբում համաձայնվում է, բայց հետո դրժելով երդմանը, շատ է նեղում բնակիչներին հարկապահանջությամբ՝ հասցնելով նրանց ծայր աղքատության: «եկն եհաս ի վերայ **մեր** վերջին աղքատութիւն և տառապանք անհնարինք ... Եւ աստանօր յաւելեալ յաճախապէս՝ մի զհետ միոյ մինչև յաւուրս յայսմիկ յորում **եմքս**»:⁹ Այսինքն մինչև այն ժամանակները, երբ Սամվել Անեցին դեռ հյուսում էր իր «Գաւազանը», մինչև առնվազն 1182 թիվը: Վերջին միտքը մի շղթա է կապում 1124 թվից մինչև 1182 թվերի միջև: Եթե նա ներկա չլիներ իր նկարագրած դեպքերին, իր հոգու վրա չկրեր այդ անպատմելի տառապանքները, ինչպէ՛ս կարող էր գրել «**ի վերայ մեր**» և այն ժամանակների վիճակը համեմատության մեջ դնել ժամանակագրությունը գրելու պահի հետ: Պատմում է մեծ

⁹ Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, 1893թ., Էջմիածին:

նգևորությամբ ու ցավով, բայց ոչ մանկական, այլ գիտակից մարդու հիշողության նստվածքով: Ուրեմն նա այդ ժամանակ մոտ 14-15 տարեկան եղած պետք է լիներ, որ կարողանար մոտ գտնվել քաղաքի պարիսպների գլխին, տեսնել մարտնչող, այծյամի պես թեթևաշարժ, նետերից խոցուվող, բայց անվախ Այծյամ երիտասարդ կնոջ սխրանքը: Ամենայն վստահությամբ կարելի է ասել, որ նա ներկա է եղել այդ ճակատամարտին, քանի որ այդ փաստն արձանագրող ուրիշ շատ հեղինակներ բավարարվել են միայն փաստի արձանագրմամբ, իսկ Սամվելը նման մանրամասներ է հաղորդում, որ ուրիշ ոչ մի հեղինակի մոտ չկան: /Մ.Ուռհայեցի, էլ չենք խոսում հետագա շրջանի պատմիչներից, որոնք իրենց նյութը քաղել են սրանցից:/ Ուրեմն նա այս հատվածը հյուսել է ոչ թե ըստ լուրերի, այլ ականատեսի վկայությամբ:

Նա իր «Քրոնիկոնի» մեջ այնպիսի եզակի փաստեր է ներառել, որ չունեն իր ժամանակակից հեղինակները, որովհետև դրանք ինքն է տեսել, կամ լսել ականատեսներից. ինչպես օրինակ Անիի Ամենափրկիչ եկեղեցու փուլ գալը. «Ի ՇՁ /1131թ / թվին փլաւ ամենափրկիչն յԱնի. ի մարերի ի ԺԵ. յաւուր Ե շաբաթոջ»:¹⁰ կամ արեգակի խավարման փաստը 1132 թվին. «ՇՁԱ. Արեգակն խաւարեցաւ յօգոստոս Բ. ի չորեքշաբաթոջ աւուր ի սկսման յեօթն ժամէն՝ մինչև ցհասարակաւոր Թ. ժամուն»:¹¹, որոնցով բացահայտվում է իր ժամանակակից լինելը նկարագրվող դեպքերին:

Սամվելի կյանքի հետընթաց ուսումնասիրությունը կատարելով՝ հասնելով 1124թ. արդեն վստահաբար կարելի է ասել, որ վերը հիշատակված ՇՀԸ. թվագրության տակ նշված չորս ընկերների մասին փաստագրումը՝ «ամենեքեան սոքա Անեցիք» վերաբերվում է իրեն: Նա հենց այն Սամվելն է, որը

¹⁰ Սամուելի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, 1893թ., Էջմիածին:

¹¹Նույն տեղում:

ընկերն էր Երեմիա Անձրևի, բայց ոչ Սարգիս Փառիսոսցի «մեծ վարդապետի», ինչպես կարծում է արժանահիշատակ Ա.Տեր-Միքելեանը. «Եվ ընկերք սորա /Սարգսի Փառիսոսցույ./¹²: Նախ ժամանակային, տարիքային առումով նա ընկեր լինել չէր կարող: Մեծ վարդապետ Սարգիս Փառիսոսցին իր մահկանացուն կնքել է «Ի ՇՀԸ / 1129 /» թվին, երբ Անեցի Սամվելը դեռ պիտի հասցներ ապրել մինչև դարավերջ, որպեսզի իր ժամանակագրությունն հասցներ առնվազն 1182թ. / ՌՃՁԲ. / որտեղ ըստ հրատարակչի և ըստ հաջորդ գրչի ավարտվում է Սամվելին վերագրվող մասը, դրան ավելացրած վերջին էջի երկրորդ պարբերության նյութը, որում այդ ժամանակը աճում է ևս տասնչորս տարով՝ հասնելով 1196թ.: Մյուս կողմից, եթե Սարգիս մեծ վարդապետը իրենց հասակակից ընկեր լիներ, «**մեծ վարդապետ**» չէր հորջորջվի իր ընկերոջ կողմից՝ տարիքի և վաստակի պակասի պատճառով: Եվ կամ 18-19 տարեկանը իրեն «**մեծ վարդապետին**» ընկեր չէր համարձակվի համարել պատկառանքի պատճառով՝ ի նկատի ունենալով նաև Սամվելի համեստ պահվածքը: Դա հիմա էլ անթույլատրելի է:

Ի դեպ, պետք է նշել, որ պատմության հենց այս հատվածում, որտեղ թվում է թե այն օգնում է պարզելու հեղինակի ինքնությունը, հանդիպում ենք մի անհարթության: Այստեղ նա նշում է. «Ի ՇՀԸ. թվին փոխի յաշխարհես մեծվարդապետն Սարգիս՝ որ ի Փառիսոսոյ՝ որդի քահանայի միոյ և աշակերտ սորա Երեմիա որ յասելն վարդապետին թէ՛ լուռ լեր, զամս Գ. լուռ եկաց՝ ընդ միտս և ընդ Աստուծոյ խօսէր, որ և Անձրև կոչեցաւ: Եվ ընկերք սորա՝ տեր Խաչատուր և Գրիգոր և Յովհաննէս և Սամուէլ. ամենեքեան սորա Անեցիք:»¹³

Այս նույն պատմությունը կա նաև Վարդան Արևելցու մոտ, մի տարբերությամբ միայն, որ այնտեղ Սարգսի փոխարեն Յովհաննէս Սարկավազն է: Ահա այդ հատվածը ևս՝ քաղված նրա

¹²Նույն տեղում, Յառաջաբան, Ա.Տեր-Միքելեան:

¹³Նույն տեղում:

«Տիեզերական Պատմութիւնից». «Էին և վարդապետք յայնմ ժամանակի Յովհաննէս, որ և Սարկաւազ ի գաւառէն Փառիսոսոյ ի քահանայական ազգէ, որոյ յիշատակ ճառագայթիցն փայլին մինչև ցարդ՝ ի բանս իւր, և ի նմանէ աշակերտեալն Երեմիա, որ և Անձրևիկ զամս երեսուն չորակեր եղև և այնչափ հլու վարդապետին իւրոյ, որ ի սաստելն երբեմն «թե լուռ լեր» զամս երիս ընդ այլ մարդ չխօսեցաւ, բայց եթէ ընդ վարիչս իւր՝ ի կարասիս»:¹⁴

Մեջբերումները ներկայացնում ենք ընդարձակ ծավալով՝ համեմատելու և ցույց տալու համար Սամվելի մոտ արձանագրված Սարգիս վարդապետի՝ «որ է ի Փառիսոսոյ» և Վ.Արևելցու՝ Յովհաննէս վարդապետի՝ «որ և Սարկաւազ ի գաւառէն Փառիսոսոյ» նույն անձ լինելը, ավելի շուտ պատմության՝ նույն անձի մասին լինելը, որը Սամվելի ու Գանձակեցու մոտ՝ «Ի ՇՀԸ. թվին փոխի յաշխարհես» իսկ ըստ Վ.Արևելցու՝ «հանգեաւ ի հինգ հարիւր վաթսուն և ութ թուին»¹⁵, իսկ մի տարի հետո՝ «լծակից» ընկերը՝ Դավիթ Ալավկա որդին: Հնարավոր է արդյոք, որ այդքան զուգադիպություն լիներ երկու տարբեր անձանց միջև, եթե այդ երկու անունների տակ մեկ անձ չընդունվի: Երկուսն էլ՝ Փառիսոսցի, երկուսն էլ քահանայի ընտանիքից, երկուսն էլ ունեցել են Երեմիա - Անձրև /իկ/ աշակերտ, որն այնչափ հլու է եղել իր վարդապետին, և նրա մի սաստից լռել է երեք տարի, և երկուսի մահից հետո մահացել է իրենց ընկեր Դավիթ Ալավկա որդին: Իսկ որ Դավիթը **ի Հայոց Արևելյան կողմանց է**, դա աներկբա է: Փառիսոս գավառը ևս այնտեղ է:

Իսկ գուցե սա նույն ժամանակներում գործած այն Սարգիս վարդապետն է, որի մասին Կ. Գանձակեցին, թվարկելով Նետրսես

¹⁴ Վարդան Արևելցի-Բարձրաբերդեցի, «Պատմութիւն Տիեզերական», 1861թ., Մոսկվա:

¹⁵ Վարդան Արևելցի-Բարձրաբերդեցի, «Պատմութիւն Տիեզերական», 1861թ., Մոսկվա:

Շնորհալուց առաջ եղած Գրիգոր Գ. կաթողիկոսի գործերն ու այդ շրջանի հոգևոր գործիչներին, նշում է.

«Եւ այլ ոմն վարդապետ սքանչելի Սարգիս անուն ի վանքս, որ կոչի ասորերէն Քարաշիթաւ ... Եւ միւս ևս եպիսկոպոս, Յովսէփ անուն, այր երևելի ի կողմանս Անտիոքու:»¹⁶ Որ Սարգիս վարդապետին էլ կարող ենք համարել «ի կողմանց Անտիոքու» վստահեցնում է նախ բառի ասորերէն մեկնաբանությունը, և ապա խոսքի շարունակությունը. «Իսկ յարևելս արք անուանիք և գիտնականք»¹⁷ և թվարկում է **Հայոց Արևելից կողմանց** երևելի մարդկանց անունները, ի թիվս որոնց և «մտահարուստն Յովհաննէս, Սարկաւագ կոչեցեալ, ի Հաղբատ:»¹⁸ Իսկ Հաղբատն ու Փառիսոսը շատ հեռու են Ասորվոց Քարաշիթավից:

Ուղղակի Սամվելի մոտ՝ Հովհաննէսին վերագրվող հանգամանքները շփոթվել են Սարգսի հետ: Իսկ որ Հովհաննէս Սարկավագի հետ շատ արտառոց դեպքեր են կատարվել, կարելի է տեղեկանալ հենց Կ. Գանձակեցու գրքից:

Ի դեպ Հովհաննէս Սարկավագի մահվան թիվն էլ նշված է նույն՝ ՇՀԸ տարին՝ Սարգիս վարդապետի մահը նշող 128 էջի հաջորդ՝ 129 էջում:

Սարգիս Փառիսոսցի կամ Հովհաննէս Փառիսոսցի անունների ճշգրտումն այնքանով է կարևոր, որ նրանք առնչվում են Սամվել Անեցու հետ: Ո՞վ է իվերջո եղել նրա վարդապետը, ուսուցիչը: Իհարկե նա ուսանել է «առ ոտս» մեծին վարդապետի՝ Յովհաննէս Սարկավագ Փառիսոսցու և հետագայում էլ իր ժամանակագրությունը կազմելիս, իր վարդապետի գիրքն է եղել ձեռքի տակ, որից շատ մեջբերումներ է արել և հաճախակի մեծագույն հարգանքով վկայակոչել նրան:

¹⁶Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», էջ 112, 1961թ., Երևան:

¹⁷Նույն տեղում:

¹⁸Նույն տեղում, էջ 112:

Եթե ոչ, ինչու՞ չի հիշատակել Մատթեոս Ուռհայեցուն, և մեր պատմիչներին թվարկելիս խոսքն ավարտում է. «... և ի վերջին ժամանակս Ստեփաննոս վարդապետ մականունն Ասողնիկ:»¹⁹, առանց նշելու Ուռհայեցու անունը, որն իրեն առավել մոտ է ժամանակային առումով, և որը կարող էր օգտակար լինել 958-1163թ.թ. պատմությունը շարադրելիս: Չի նշել նաև Ուխտանէս Եպիսկոպոսին՝ նրանից առաջ, որն այնքան կարևոր նյութ է հաղորդում Հայոց միաբանությունից Վրաց եկեղեցու բաժանման մասին. այն դեպքում, երբ Մխիթար Այրիվանեցին նրան հիշում է որպես «սուրբն Ուխտանէս»:

Չի նշել, որովհետև օգտվել է իր վարդապետի՝ Յովհաննէս Սակավագի պատմությունից, որում այդ ամենը ամփոփված է եղել: Ի վերջո, մեկի մասին, որից այնքան օգտվել է «Գաւազանը» հյուսելիս և հընթացս դրվատանքի խոսքեր ասել նրա մասին, մի՞ թե կբավականանար միայն մի չոր ու ցամաք տեղեկություն տալով նրա մահվան տարեթվի մասին. «Ի ՇՀԸ. ամին փոխեցաւ ի Քրիստոս մահուամբ վարդապետն մեծ, որ Սարկաւազն կոչիւր ի Հաղբատ:»²⁰

Այսպիսով Սամվել Անեցու կյանքի ընթացքը ետ պտտելով՝ հասնում ենք Հայոց ՇՀԸ՝ 1129թ., ապա ՇՀԳ՝ 1124թ. Անիի առումը Վրաց Դավիթ թագավորի կողմից: Այստեղից կարելի է հետևեցնել, որ նա կարող է ծնված լինել մոտ 1110թ.: Եվ ահա թե ինչու: Եթե նա աշակերտել է Սարգիս կամ Յովհաննէս Փառիսոսցուն, որը մահացել է 1129թ. /ՇՀԸ./ նա մոտ 18-19 տարեկան պետք է որ լինէր այդ պահին, եթե ոչ ավելի, որ կարելի լինէր նրան դրանից մի քանի տարի առաջ ճանապարհվել հեռու վայրեր ուսումնառության նպատակով: Դա էլ իր հերթին հաստատում է այն միտքը, որ Դավիթ թագավորի կողմից 1124թ.

¹⁹ Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, 1893թ., Էջմիածին:

²⁰Ս. Անեցոյ, «Հաւաքմունք...», 1893թ., Էջմիածին:

Անիի գրավման ժամանակ՝ նա գործունյա պատանի է եղել և մասնակցել է քաղաքի պաշտպանության մարտերին և աչամբ տեսել Այծյամ կնոջ սիրանքները, որ հետագայում այդպես գեղումնալից ու ընդարձակ վերապատմել է իր գրքում՝ հակառակ ժամանակագրական մեթոդի սուղ պահանջների:

Եթե Սամվելի ծննդյան մոտավոր թիվն համարենք 1110 թվականը, ապա դա կհամապատասխանի Սկևռա միաբանության անդամ Սամուել գրչի այն վիճակին, երբ ՈԼԹ. թվին գրել ավարտել էր Ներսես Լամբրոնացու կատարած Սաղմոսների մեկնությունը, նրա վարքագրությունը և մոտ էր «հույ էմ ի սոցին ծերութեան ալեօքս հոճեալ»:²¹

Սամվել Անեցու ինքնությունն ու ժամանակը ճշգրտելու համար պետք է պարզել մի կարևոր հարց ևս. արդյո՞ք «Հաւաքմունքի» և «Պատմութիւն վարուց Ներսիսի Եպիսկոպոսին» գործերը նույն հեղինակի գրչին են պատկանում: Չէ՞ որ միայն «Պատմութիւն վարուց...» - ի և նրան կից Ներսես Լամբրոնացու Սաղմոսների մեկնության հիշատակարանի մեջ է նշվում, որ գրվածքների հեղինակի անունը Սամուել է: «... և ինձ Սամուել նուաստի հրաման ետ զսկսեալն ի նմանէ աւարտել»:²²

«Ի թուականի Հայոց ՈԼԹ. գրեցաւ աստուածախումբ մատենիս օրինակն ձեռամբ Սամուելի նուաստ և յետին գրչի հրամանաւ սրբասնեալ վարդապետի և արհիեպիսկոպոսի մերոյ տեառն Ներսիսի»:²³

Իսկ «ամենեքեան սոքա անեցիք» բառահոդվածը դեռևս հաստատուն ոչինչ չի ասում, թե հենց այդ Անեցի Սամուելն ինքն է «Հաւաքմունք...»-ի հեղինակը, ինչպես պարզ ասել է Կ.Գանձակեցին իր մասին. «ամենեքեան սոքա Գանձակեցիք, ուստի և ես»:²⁴

²¹Նույն տեղը, Սամուել. «Պատմութիւն Վարուց Ներսիսի Եպիսկոպոսին» 1893թ. Էջմիածին:

²²Նույն տեղում:

²³Նույն տեղում, / կից հիշատակարան /

²⁴Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», 1961թ., Երևան:

Հարցի պարզաբանման, նրան պատասխան տալու համար բավական է համեմատության մեջ դնել երկու գործերից հատվածներ, և պարզ կդառնա նրանց լեզվավորական նույնությունն ու լեզվի անբասիր մաքրությունը՝ հարազատությունը դասական գրաբարին, դրանով իսկ այդ գործերի՝ նույն գրչի արդյունք լինելը:

Այսպես. համեմատենք հետևյալ հատվածները՝ քաղված երկու գործերից.

1. «Իսկ իմ մոռացեալ զտգիտութիւն և զանուսումնութիւն իմ ի թախանձելոյ ձեր, սրբազգեացոյ Գրիգոր, յաղթեցայ ի սիրոյ կամաց ձերոց, առ ի գրել, գոր կամեցար, և այժմ օժանդակեալ ի Հոգւոյն Սրբոյ՝ ժողովեցից ի սոցանէ կարճ ի կարճոյ զախորժակս ձեր զբանից հանդէս»:²⁵

«Արդ ով սրբազգեաց տեր իմ Գրիգոր, հարկեցայ ի թախանձելոյ ձեր զեղկելի անձն իմ ի մշակութիւն այս գործոյ մոռանալով զբաջադմունս կենցաղականիս»:²⁶

«Յորժամ տեսին զանհնարին աղէտ կործանման զգլխաւորի տեղւոյս անձնատուրք եղեալք ընդ ձեռամբ վիշապին, կամաւ ելին փախստեամբ առ կայսրն Յունաց»:²⁷

Եվ « Պատմութիւն վարուց...» - ից.

«Իսկ իմ ի գրելոյ զմատեանս ոչ թուլացեալ, քանզի առնուի ի սմանէ / գործից Հ.Հ./ զլուսաւորութիւն հոգւոյ առընթեր նստեալս միայնութեամբ սուրբ ուխտիս ... ինամօքն Քրիստոսի ի վերջին կէտս ժամանակեցի և սպասաւորեցի զկնի եկելոցոյ մատռուակութեամբ»:²⁸

«Այլ ես աղաչեմ յիմս վաստակս սխալանաց բայից և բառից թերութեան ընթերցողացոյ ներումն շնորհել, զի զայդչափ զօրեցի իմովս տկարութեամբ յարմարել, և ի վայելելն ի դոյն

²⁵Ս. Անեցւոյ «Հաւաքմունք...» 1893թ. Էջմիածին:

²⁶Նույն տեղում:

²⁷Նույն տեղում:

²⁸Ս. Անեցւոյ «Հաւաքմունք...». Պատմութիւն վարուց ...»1893թ. Էջմիածին:

հոգւոյ մխիթարութեամբ՝ ցօղ աղօթից ձեր կաթեցէ ի գոգ մերոյն հանգստեան»:²⁹

«Ընդ նուազել թագաւորութեան և իշխանութեան Հայոց յորժամ յափշտակեցաւ յԲամայէլացոցն մայրաքաղաքն Անի, և տարագրեցան թագաւորքն մեր ի գաւառս և յիշխանութիւնս արքային Յունաց»:³⁰

Այսպիսի հատվածներ կարելի է շատ նշել, բայց բերված նմուշներից էլ երևում է լեզվի և ոճի նույնությունը: Նույնիսկ որոշ հատվածներ սկսվում են նույն բառակապակցություններով՝ «Իսկ իմ», կարծես մեկը մյուսի կրկնությունն է տարբեր տեղերում, և հյուսված նույն համեստ ինքնարժեգրկման ոգով, որն իհարկե ընդունված ոճ է մեր միջնադարյան պատմիչների մոտ՝ ուրիշին մեծարել, իրեն ցածրացնել, դրանով իսկ՝ բարձրացնել: Այսպես են վարվել անգամ նույն դարի Ասորվոց պատրիարք Միքայել Ասորին, ինչպես նաև մեր Յովհաննէս Կաթողիկոս Դրասխանակերտցին՝ 10-րդ դարասկզբին:

Բայց այս երկու գործերի հեղինակների նույնը լինելու օգտին առավել է խոսում «Պատմութիւն վարուց...» - ի մեջ եղած հետևյալ հատվածը, որը կապ է հաստատում երկու գործերի միջև: Ահա այդ. «Եվ աւանդեաց ի նա /Ապլդարիպը Աւշինին. Հ.Հ./ /զմասն/ /զուցե և՛ զմատն. Հ.Հ./ մեծի և գլխաւորի առաքելոյն Պետրոսի՝ գոր ունէին Հայք ըստ **նախագրեալ պատմութեանն**»:³¹ «**Նախագրեալ պատմութիւնը**» ոչ այլ ինչ է, եթե ոչ «Հաւաքմունքը», քանի որ դրանից առաջ գրված Ներսէս Լամբրոնացու Սաղմոսների մեկնությունը Սամվելը չէր կարող համարել «պատմութիւն»: Նա այն համարել է «աստուածախումբ մատեան»: Իսկ այդ նախագրեալ պատմութեան մեջ, որ է «Հավաքմունքը», ասվում է. նախ՝ «ՋԿԹ... սրբոյն Պետրոսի մատն բերաւ ի Հայս»:³²

²⁹Նույն տեղում:

³⁰Նույն տեղում:

³¹Ս. Անեցոյ «Հաւաքմունք...», 1893թ., Էջմիածին:

³²Ս. Անեցոյ «Հաւաքմունք...», 1893թ., Էջմիածին:

ապա՝ «Ի ՇՀԲ. ամին ի բոնութենէ Տաճկաց ել Օշին իշխանն ի ժառանգութենէ իւրմէ ... ունելով ընդ իւր և գմատն սուրբ առաքելոյն Պետրոսի»:³³

Սա ուրիշ ինչի՞ մասին է խոսում, եթե ոչ երկու գործերի միջև եղած հեղինակային ընդհանրութեան: Եթե «Հաւաքմունքը» ուրիշի գործ լինէր «Պատմութիւն վարուց...»-ի հեղինակ Սամուէլի համար, նա չէր ասի «**ի նախագրեալ պատմությանն**»: Այդպես կարող են արտահայտվել միայն տվյալ գրվածքի հեղինակները, այս դեպքում՝ երկու գործերի, ինչպես վարվել է Սամվել Անեցին «Հաւաքմունք...»-ի մեջ, Լևոնի որդի Թորոսի մասին կրկին պատմելիս «որպէս վերոյ գրեցաք»:³⁴

«Նախագրեալ պատմութիւն» արտահայտությունը մի փոքրիկ նրբերանգ էլ է հաղորդում՝ այն, որ այդ պատմությունը այնքան էլ վաղ չի գրվել, քանի որ նրա մեջ եղած նյութերը դեռ թարմ են գրողի հիշողության մեջ, հեղինակը դեռ իր գրածի տպավորության տակ է: Որից էլ կարելի է եզրակացնել, որ նա իրոք 1186թ., երբ նշում էր Ռուբենի աթոռակալության թվաքանակը, դեռ գրում էր իր «գաւազանը». «ՌՃԿԴ. Ի ՈՏԳ. թվին իշխանքն սպանին զչարասիրտն Մլեհ ի Սիս և բերալ զՌուբեն՝ գորդի Ստեֆանէի ... եղին յաթոռն Հայոց Կիլիկիա ամս ԻԲ.»:³⁵

Վերին հատվածը՝ մեջբերված «Պատմութիւն վարուցից» հուշում է ևս մի կարևոր միտք, այն, որ «Հավաքմունք...»-ը ավելի վաղ է գրվել, քան առաջին գործը, որի գրության ավարտի ժամկետը հատուկ նշված է՝ «ի ՈԼԹ.»: «Ի թուկանի Հյոց ՈԼԹ գրեցաւ աստուածախումբ մատենիս օրինակն հրամանաւ սրբասնեալ վարդապետի և արհիեպիսկոպոսի՝ մերոյ տեառն Ներսիսի:» ³⁶ /խոսքը Ներսես Լամբրոնացու Մաղմունների մեկնության արտագրության մասին է: /

³³Ս. Անեցույ «Հաւաքմունք...», 1893թ., Էջմիածին:

³⁴Ս. Անեցույ «Հաւաքմունք...», 1893թ., Էջմիածին:

³⁵Նույն տեղում:

³⁶Նույն տեղում:

Ներսեսը թեև այդ գործը նախապես հանձնարարել էր վարժապետ Գեորգին, բայց քանի որ նրան պետք է վերցնել իր հետ որպես ուղեկից Հռոմոնց կայսեր մոտ գնալու համար, գործը հանձնարարում է Սամվելին, և նա այն ավարտելով ՈԼԹ. թվին, վերջում էլ գրում է Նրեսեի վարքագրությունը: «Եւ յաւարտումն սորին /Սաղմոսների մեկնության. Հ.Հ./ փոքր ինչ թողի ձեզ զպատմութիւնն կենաց սորին ընթացից, զի մի մնասցէ տարակոյս յառաջել ժամանակին սորին քննողի ո՛վն, և ու՛ստն, և զհարդն, որպէս և մեք այսօր ունիմք զբազում հարց մերոց և վարդապետաց Հայոց այս ինքն զԴավիթ Ներգինեցին, և զԳրիգոր Նարեկացի, և զՍովսէս Խորենացի, որոց բանիցն պարարտութենէ զուարճանամք, և զհարդն կենաց և վարուց փափագելով՝ զիտել ոչ ունիմք և ոչ մի բան վասն երանելեացն պատմութեան»: ³⁷ Այստեղից, այս հատվածից անգամ երևում են «Սամուէլ նուաստ գրչի» խորը գիտելիքները մեր գրականության պատմության վերաբերյալ:

Ուրեմն արդեն ութսունին մոտ վաստակաշատ քահանային, որին «արբազեաց Գրիգորը» հանձնարարել էր գրելու «Քրոնիկոնի զավագանը», և որը Սամվելը ջանադիր աշխատանքով, պատվով հասցրել էր իր ավարտին, ուրեմն և ճանաչում ստացած և միշտ բարեգործություն, առաքինություն անող, բարի համբավ ունեցող մարդուն Մկեռի եպիսկոպոսական աթոռը հովվող երեսունութամյա եպիսկոպոս Ներսես Լամբրոնացին վստահում է և հանձնարարում գրելու Սաղմոսների իր մեկնությունը, որը Սամվելը որակում է որպես «աստուածախումբ մատեան»: Ի վերջո Ներսես Լամբրոնացին չէր կարող պատահական, շարքային մի գրչի վստահել աստվածաշնչյան սաղմոսների իր մեկնությունների ընդօրինակումը, որոնց համար այնքան ցավում էր, որ հանկարծ մի չար դիպվածի պատճառով դրանք էլ չանհետանան, ինչպես իր մյուս գործերը՝ տաճիկ ավագակների կողմից հարձակման

³⁷Նույն տեղում:

ենթարկվելիս: Եվ ինչ-որ «տրուպ» գրիչ էլ իրեն թույլ չէր տա երազելու՝ մեռնելուց հետո «սրբասնունդ» եպիսկոպոսի ձեռքերով և օրհնությամբ դրվել դամբարան: Սամվելը որքան համեստանում է, բայց և գիտե իր արժեքը: Երեսունութ տարեկան եպիսկոպոսի վարքագրությունն ավարտելուց հետո, վերջում նորից մանրամասնորեն նշում է գրելու տեղի և ժամանակի մասին: «Գրեցաւ ի նախայիշատակեալ սուրբ ուխտս Սկևռայ առընթեր հայրենատուր ամրոցի տերանց մերոց Լամբրունի, յիշխանութեան մեծահանճար աստուածասէր Սևաստոսին Հեթմոյ, և ի վերակացութեան տեառն մերոյ Ներսիսի և եղբարց սոցին Ապիրատի և Շահնշահի:»³⁸

Մեջբերված հատվածի «հայրենատուր ամրոցի տերանց մերոց Լամբրունի» բառահոդվածն էլ ցույց է տալիս, որ ամրոցը և նրան առընթեր Սկևռա միաբանությունը, որի անդամն էր և Սամուել գրիչը, պատկանում է վերջինիս տերերին՝ «տերանց մերոց» և ինքն այնտեղ միայն հոգևոր ծառայող է, և ոչ տերերից մեկը: Այսինքն դրսից եկած է:

Դարձյալ նույն «Պատմութիւն վարուց...»-ից տեղեկանում ենք, որ երբ ՈԼ. /1181/ թվին, Աստվածածնի տոնին Ներսես Լամբրոնացին 29 տարեկանում ստանձնում է Սկևռի եպիսկոպոսական աթոռը և պատարագ մատուցում տոնի առիթով, այնտեղ ներկա է եղել Սամվելը ևս. «և բազմեալ /Ներսեսը. Հ.Հ./ ի քահանայական յաթոռն ի տոնի Իսկուհւոյն, ետ զխաղաղութիւն ժողովոյս ... **որոյ յաղորդեալ տեսութեամբ և ճաշակմամբ** ուրախութեամբ մեծաւ **մատուցաք փառս** Քրիստոսի:»³⁹

Ուրեմն արդեն 1181թ. Սամվելը Սկևռում էր: Սրանից որոշ տարիներ հետո է, որ ՈԼԹ. թվին Ներսեսը նրան հանձնարարում է գրելու սաղմոսների իր մեկնությունը: «և ինձ Սամուելի նվաստի հրաման ետ զսկսեալն ի նմանէ /Գևորգի. Հ.Հ./ ավարտել: Չոր

³⁸Ս. Անեցոյ «Հաւաքմունք...». Պատմութիւն վարուց...»1893թ., էջմիածին:

³⁹Նույն տեղում:

յոժարութեամբ յանձն առի և պինդ հավատով ի փառս Աստուծոյ կատարեցի ի թուիս ՈԼԹ.»:⁴⁰ Եվ նրա միակ փափագն էր իր մեռնելուց ետ իր ծերացած մարմինը Ներսեսի ձեռքով և օրհնությամբ դրվի «ի դամբարան հանգստեան ընդ սրբոց իմոց հարցն, որ այժմ յուպ եմ սոցին ծերութեան ալեօքս հոծեալ:»⁴¹ Այստեղից էլ տեղեկանում ենք, որ 1190 թվին /ՈԼԹ./ նա արդեն ծերացած էր:

Այս մանրամասները քննելուց հետո, վստահորեն կարելի է ասել, որ «Հավաքմունքի» հաղինակը՝ այն ավարտելուց հետո, շարունակել է իր գրական գործունեությունը առնվազն մինչև 1190 թիվ՝ գրելով և՛ Ներսես Լամբրոնացու կատարած Մաղմոսների մեկնությունը, և՛ նրա վարքագրությունը, նաև մեկնությունների հիշատակարանը, ի հայտ բերելով **Մամուէլ** անունը, որը համադրելով «նախագրեալ պատմութեան» մեջ հիշատակված «...և Մամուէլ ամենեքեան սոքա Անեցիք» հատվածի անվան հետ, հաստատել է երկու/երեք/ գործերի հեղինակի իր իրավունքները:

Փաստորեն Մամվել Անեցու վերջին տարիների գործունեության մասին բավականին նյութ են տալիս Լամբրոնացու՝ Մաղմոսների մեկնության հիշատակարանն ու նրա վարքագրությունը:

Եվս մի փաստ Մամվել Անեցու կյանքի տևողության վերաբերյալ:

Թեև ժամանակագրությունն ավարտվում է ՌՃՁԲ. թվին վերաբերվող արձանագրությամբ, ինչպես նշել է հրատարակիչը և փաստել ձեռագրի հաջորդ գրիչը, սակայն հենց նույն՝ 139-րդ էջի երկրորդ պարբերության մեջ արձանագրված նյութը հիմք է տալիս այդ ժամանակը երկարացնելու մինչև 1196 թիվ, մինչև Գրիգոր Տղա կաթողիկոսի զահակալության ավարտը: Ահա այդ հատվածը. «ՌՃՁԶ. ... փոխի մահուամբ առ Քրիստոս սուրբն՝ Ներսես, և յաջորդէ զայթոռն տէր Գրիգոր՝ եղբորորդին նորին՝

⁴⁰Նույն տեղում:

⁴¹Նույն տեղում:

տղայ կոչեցեալն ամս Ի.»⁴² և շարունակելով նրա փառավոր գործերի շարահարումը, խոսքն ավարտում է այսպես. «Եւ զկնի ինքն ևս փոխի մահուամբ առ Քրիստոս և կայ հանգուցեալ ի ասուրբ ուխտն Դրագարկ»:⁴³ Եթե Ներսես Շնորհալու մահվան և Գրիգոր Տղայի գահակալության տարուն, որ է ՌՃՀԶ ավելացնենք ևս քսան՝ Ի. տարի, կունենանք ՌՃՂԶ, երբ Սամվելն արդեն վաղուց ավարտել էր «Քրոնիկոնի գավազանը»: Սա նշանակում է, որ նա ապրել է Գրիգոր Տղայից հետո էլ, թե որքա՞ն, ճշգրիտ ասել չենք կարող:

Այդ դեպքում ինչու՞ է վերջակետ դրվել ՌՃՁԲ. թվի վրա, երբ Գրիգոր կաթողիկոսը դեռ լայն գործունեություն էր ծավալելու, և դեռ հենց նույն՝ ՈԼԹ. թվին նրա հետ խորհրդակցելուց հետո է Ներսես Սկևռա եպիսկոպոսը **դեռևս պարոն** Լևոնի խնդրանքով մեկնում Հոռոմոց թագավորին ընդառաջ: Այս հարցին դեռ կանդրադառնանք: Մնում է ենթադրել, որ որոշ ժամանակ անց, Սամվելը նորից է ձեռքն առել իր «Գաւազանը» և խմբագրումներ կատարել՝ գոնե այս հատվածում՝ նշելով Գրիգոր Տղայի աթոռակալության տարիների քանակը՝ Ի. և նրա մահն ու ամփոփման վայրը՝ Դրագարկ: Չէ՞ որ նախապես՝ ՌՃՀԶ, կամ թեկուզ հենց ՌՃՁԲ թվերին նա չէր կարող ասել, թե Գրիգորը քանի տարի պետք է գահակալեր, և նրա մահվան ժամանակն ու թաղվելիք վայրը իմանալ:

Այդ է հաստատում և նրա ժամանակակից ու հայրենակից Մխիթար Անեցու վկայությունը: Երբ վերջինս 1180-ական թվերի վերջին դիմում է իր մեկենասին՝ Հառիճա վանքի երեց Գևորգին՝ նրա հանձնարարականն ստանձնելու և գործն սկսելու պատրաստակամությամբ, Սամվելի „Հավաքմունքը,, արդեն ասպարեզի վրա էր, որ նրա ժամանակակիցը հնարավորություն է ունեցել նրան մատենագիրների շարքում դասելու՝ իրենից անմիջապես առաջ. «Տէր Յովհաննէս: Եւ Ասողիկ: Եւ

⁴²Ս. Անեցույ «Հաւաքմունք...». 1893թ., Էջմիածին:

⁴³Նույն տեղում:

Լաստիվերտցին: Եւ Կոզոանն: Եւ Սամուէլ երիցու: Իսկ ամենայնի վերջինն՝ այս ուր ի մենջս գրեալ:»⁴⁴

/Գևորգն ապրել է մինչև 1188 թիվը, իսկ նրա մահվան թվի մասին տես Մխիթար Անեցի. Մատեան աշխարհավկայ հանդիսարանաց. 1983թ. Երևան. աշխատությամբ Հ.Գ.Մարգարյանի. ծանոթագրություն: /

Ամենայն հավանականությամբ այդպես էլ եղել է: Ըստ երևույթին Սամվելն ապրել է մինչև 1196 թիվը, տեսել է Գրիգոր Տղայի մահը և այդ մասին լրացում կատարել ժամանակագրության մեջ, բայց չի հասցրել տեսնել և արձանագրել ոչ հաջորդ կաթողիկոսի գահակալության և ոչ էլ մանավանդ Մեծ պարոն Լևոնի թագավոր օծվելու փաստերը:

Իսկ վերջինը՝ Լևոնի Հայոց անկախ թագավոր օծվելը, որը տեղի է ունեցել 1197 թվին, այնքան էլ երկրորդական երևույթ չէր հայ իրականության, պատմության համար, որ վրիպեր նրա ուշադրությունից, մանավանդ որ այդ նշումը կլիներ մի ավետաբեր, հուսադրող վերջակետ՝ 12-րդ դարավարտին, Հայոց պատմության և հայ ժողովրդի համար:

Այս ամենից հետո կարող է հարց առաջանալ, թե ինչպո՞ւ է Անեցի Սամվելը հայտնվել Սկևռում: Այդ հարցի պատասխանն էլ կարող ենք ստանալ հենց իր՝ հեղինակի բացատրություններից՝ տրված և «Հաւաքմունքում» և Ներսէս Լամբրոնացու վարքագրության մեջ: Մեջբերենք այդ հատվածները համապատասխան գործերից:

«Յորժամ տեսին զանհնարին աղէտ կործանման զգլխավորի տեղոյս /Անիի. Հ.Հ./ անձնատուրք եղեալք ընդ ձեռամբ վիշապին կամաւ ելին փախստեամբ առ կայսրն Յունաց. և նոքա տիրեցին ընդհանուր աշխարհիս»:»⁴⁵ /Հայաստանին. Հ.Հ./

⁴⁴Մխիթարայ Անեցոյ «Պատմութիւն», Ս.Պետերբուրգ, 1879թ., էջ 15:

⁴⁵Ս. Անեցոյ «Հաւաքմունք...». Էջմիածին, 1893թ. :

«Եկն եհաս ի վերայ մեր վերջին աղքատութիւնս և տառապանք անհնարինք»:⁴⁶

«Ընդ նուազել թագաւորութեան և իշխանութեան Հայոց, յորժամ յափշտակեցաւ յԻսմայելացոցն մայրաքաղաքն Անի, և տարագրեցան թագաւորքն մեր ի գաւառս և յիշխանութիւնս արքային Յունաց...»⁴⁷

Միթե թեկուզ հենց այս հատվածների համեմատությունն էլ կարող է կասկածներ թողնել, թե այս երկու գործերը մի հեղինակի ձեռքի աշխատանք են: Եթե հատուկ չնշենք գործերի վերնագրերը, կթվա թե նույն բանը կրկնվել է տարբեր էջերում: Ընդ որում Անի մայրաքաղաք անվանումը շեշտված է «Պատմութիւն վարուցում», իսկ «Հաւաքմունքում»՝ «գլխաւորի տեղոյս» առանց գլխաւոր տեղի անունը տալու, որն ինքնին հասկանալի է, որ Անին է: Մի դեպքում կարծես սրտացավ հեղինակի բերանը չի բռնում կործանման առիթով «գլխաւորի տեղոյս» անունը տալ՝ Անի, մյուս դեպքում՝ ընդհակառակը, ուզում է մեկ անգամ ևս կրկնել իր համար սուրբ այդ անունը, կարծես դրանով իր կարոտն առնելով:

Սկևռի Սամվելը Անիի մասին գրում է մի սովորական վարքագրության մեջ և չէր կարող այլևս ասել «տեղոյս» կամ «քաղաքիս», որովհետև այդ դեպքում կհասկացվէր Լամբրոնը, Սկևռը: Եվ կամ ինչու՞ է շեշտել հենց միայն Անին. չէ՞ որ ողջ Հայաստանն էր այդ վիճակում: Եթե միայն Անին էր գրավվել անօրենների կողմից, ինչու՞ Օշինն իր Գանձակից պետք է ելնե՞րգար-հասներ Կիլիկիա: Ինչ խոսք, Սամվելը մեկ անգամ ևս հիշելով իր հայրենի քաղաքի՝ Անիի մասին, մեծ ցավ է ապրում նրա կործանված ճակատագրի համար: Բագրատունյաց թագավորության անկումից հետո, 11-րդ դարավերջից, Անին գտնվում էր այլազգիների՝ սկզբում հունաց, ապա արաբների տիրապետության տակ: Անընդհատ հարձակումներից, ձեռքից

⁴⁶Նույն տեղում:

⁴⁷Մ. Անեցոյ «Հաւաքմունք...». Պատմութիւն վարուց...»1893թ. Էջմիածին.

ձեռք անցնելու հետևանքով ավերվելով, Անին կորցրել էր իր վաղեմի փառքն ու հզորությունը, ինչպես և նկարագրում է Մամվել Անեցին: Կիլիկյան հայկական իշխանության հաստատումից հետո, հենց 12-րդ դարասկզբին, Բարսեղ Ա. կաթողիկոսի վերջին տարիներին կաթողիկոսական նստավայրը տեղափոխվել էր Կիլիկյան Հայաստան, Միս-Հռոմկլայ /տես՝ Մատթեոս Ուռհայեցի/, որը և քիչ-քիչ, աստիճանաբար դառնում է և՛ պետական, և՛ հոգևոր կենտրոն: Անիի «հազար ու մի եկեղեցեաց» հոգևորականներն էլ՝ չդիմանալով անվերջ ճնշումներին ու հալածանքներին, հետևել են ծայրագույն կարիքից ու տառապանքից հուսահատված բնակչությանը, որոնք ստիպված թողնում էին իրենց հայրենի բնօրրանը և հեռանում Կիլիկիա, կամ էլ այլ օտար երկրներ: Այդպես էլ երևի Մամվելն է հայտնվել Կիլիկյան Հայաստանում, ի մասնավորի՝ Լամբրոնին հարող Սկևռա ամրոցի միաբանությունում՝ շարունակելու իր հոգևոր առաքելությունը: Մանավանդ որ հոգևորականի համար մշտական, կայուն տեղ լինել չի կարող: Նրանք կարող են պաշտոնավարել տարբեր վայրերում՝ կախված եկեղեցու և վերադասի հրահանգներից: Այդպես է և մի շարք հայտնի վարդապետների հանգամանքում՝ Մխիթար Գոշ, Խաչատուր Տարոնացի, Կիրակոս Գանձակեցի, Վարդան Արևեցի և շատ ուրիշներ: Խաչատուր Տարոնեցին Տարոնից եկել հասել էր Հաղարծին՝ բերելով իր հետ «զխագն ի կողմանս արևելից, զանմարմին եղանակսն ի մարմին ածել, զարարեալսն իմաստնոց, որ ցայն ժամանակս չև էր սփռեալ ընդ աշխարհս»:⁴⁸ Իսկ Գանձակեցին ու Վարդան Արևելցին Հյուսիսային Հայաստանի Հաղպատից, Տավուշից հասել էին Միս: Գանձակեցին Հեթում առաջին թագավորի օրոք՝ 1240 թվին, հոգեգալստյան օրը, հենց այնտեղ սկսում է գրել իր «Պատմությունը», իսկ Վարդան Արևելցին 1248 թվին, Կոստանդին կաթողիկոսի հանձնարարությամբ նույն վայրում թարգմանել է

⁴⁸Կիրակոս Գանձակեցի, «Պատմություն Հայոց», Երևան, 1961թ, էջ 212:

Միխայել Ասորու «Ժամանակագրությունը» և «Յաղագս Քահանայության» աշխատանքները՝ իր «Տիեզերական Պատմութիւն»-ից առաջ: Փաստեր՝ որքան ուզեք:

Սամվել Անեցու կենսագրական տվյալներն ամբողջացնելու համար կարևոր ենք համարում մեկենասի՝ դրանով իսկ գրքի գրության ժամանակի հարցի քննումը, միաժամանակ ցույց տալու համար նրա գործունեության միջավայրն ու շփման եզրերը:

«Հաւաքմունքի» երրորդ էջում Սամվել Անեցին դիմում է իր մեկենասին բավականին ծավալուն խոսքով, որից մի հատված ներկայացնենք. «Իսկ իմ մոռացեալ զտգիտութիւն և զանուսումնութիւն իմ ի թախանձելոյ քո, Սրբազգեացոյ Գրիգոր, յաղթեցայ ի սիրոյ կամաց ձերոց, առ ի գրել, գոր կամեցար, և այժմ օժանդակեալ ի Հոգւոյն Սրբոյ ժողովեցից ի սոցանէ /բազմաթիվ հեղինակների գրքերից. Հ.Հ./ կարճ ի կարճոյ զախորժակս ձեր զբանից հանդէս, միայն ճշմարտութեան գնալով զհետ, ի յոլովիցն առաւել զերկոքումբքս թեակոխեսցուք ձեռնտու ունելով զնոսա, զԵւսեբի ասեմ, և զՄովսէս Խորենացի: Եւ նախ յԱդամայ սկսեալ կատարեսցուք ի Նոյ, և անտի մինչև ցԱբրահամ և անտի մինչև ցԾնունդն Քրիստոսի և ապա ըստ քրոնիկոնին գաւազանաւք զբաւեսցուք ի ներկայս. զաւելորդն թողլով, և զկարևորսն ի ներքս մուծանելով, թերևս հասանիցես փափագելոյն»:⁴⁹

Սա մի տեսակ հանձնառություն է առաջարկությունն ընդունելու, կատարելու մասին, միաժամանակ և նախնական պլան, ծրագիր նյութի ծավալի ընդգրկման և անելիքի վերաբերյալ, որի կատարմանը հասնում է հեղինակը՝ վերջակետելով «**ի ներկայս**» իր ապրած ժամանակները: Սրանից հետո նա էլի հաճախ է դիմում իր «**սրբազգեաց**» մեկենասին՝ ևս մեկ անգամ Գրիգոր անունը տալով, մեկ անգամ էլ «**հրամանատուիդ և պատուասիրի**» հորջորջմամբ, երբեմն էլ կողմնակի կերպով, ասես ընթերցողի և պատվիրատուի հետ

⁴⁹Ս. Անեցույ «Հաւաքմունք...». 1893թ. Էջմիածին.

գրույց անելով՝ մեկ արդեն կատարածի մասին հաշվետվություն տալով, ապա շարունակության մասին նորից հանձնառություն ստանձնելով, կամ նկարագրած ցավալի վիճակի՝ Հայ ազգի, Հայաստան աշխարհի վերաբերյալ իր ապրումներն ու զգացողությունները ներկայացնելով. «ՌԻՏՁ. Աւաղ, զի ոչ գոյր թագաւոր Հայոց՝ կարծեմ խափանեալ կամի այս գաւազանս»:⁵⁰ և քիչ ներքև՝ «բազում տրտմութեամբ վարանեալ եմ, նմին իրի գրեցի զայս գիծս»:⁵¹ Երբ արդեն «գծել» էր մինչև 1046 թիվը: Մինչև ժամանակագրության մոտ ավարտն էլ՝ 16 էջ առաջ, Մելիքջահի պատմությունն անելուց հետո էլ, նա դեռ դիմում է հղում իր մեկենասին, բայց անունը չտալով, այլ հորջորջելով նրան որպես **հրամանատու և պատվասեր**. «Եւ աստանոր զայսոսիկ ծանիցուք մերոյ հրամանատուիդ և պատուասիրի»:⁵²

Այժմ ժամանակն է պարզելու, թե ո՞վ է Սամվել Անեցու մեկենաս, պատվիրատու «սրբազգեաց» Գրիգորը, որին այդպես մեծարանքով, ակնածանքով է դիմում պատմիչը:

Մեզ հետաքրքրող ժամանաահատվածում բավականին խիտ է Գրիգոր անունների շարքը: 12-րդ դարում միայն Գրիգոր անունով չորս կաթողիկոս ենք ունեցել: Իվերջո ո՞վ է այն Գրիգորը, որի հանձնարարությամբ գրվում էր Սամվելի ժամանակագրությունը, և որը կենդանի էր դեռ 1196 թվի արձանագրումները նշելիս:

Այդ ժամանակի մանրագնին ուսումնասիրություն կատարելով՝ հանգել ենք այն եզրակացության, որ Սամվել Անեցու մեկենասը, «հրամանատուն» եղել է Գրիգոր և Ներսես Շնորհալի եղբայր կաթողիկոսների եղբորորդի Գրիգոր Ապիրատը, բայց ոչ իհարկե մյուս եղբորորդին՝ Գրիգոր Տղա կաթողիկոսը, ինչպես նշված է «Հայկական Հանրագիտարանում», քանի որ նրա մահվան ու թաղված վայրի մասին էլ է

⁵⁰Նույն տեղում:

⁵¹Նույն տեղում:

⁵²Ս. Անեցույ «Հաւաքմունք ...». 1893թ. Էջմիածին.

տեղեկությունն տրված գրքում: Իսկ այդ տեղեկությունները, որ տրված են Գրիգոր Տղայի մասին, Մամվալինը չհամարել չենք կարող: Եվ ահա թե ինչով է հիմնավորվում այդ կարծիքը:

Ըստ Մամվելի թվագրության՝ ՌՃՀԶ. թվին «սուրբն Ներսեսից» հետո, Գրիգոր և Ներսես կաթողիկոսների եղբոր որդին՝ Գրիգոր Տղան ստանձնում է կաթողիկոսական աթոռը: Իսկ մյուս եղբոր տղա Գրիգորը՝ Գրիգոր Ապիրատը, ըստ Վարդան Արևելցու վկայության «...և Գրիգորես Ապիրատն կոչեցեալ՝ չոքաւ Լամբրոն և ինսամեր գՏարսոնի վիճակն, որ և յամի 1195 նստաւ յաթոռն զկնի Գրիգորի Ե. Գահավիժի:»⁵³ Միքայել Ասորին էլ՝ առնչվողը Ներսես ու Գրիգոր կաթողիկոսների հետ և ժամանակակիցը Մամվելի, Հայոց Հայրապետների ցանկում նշում է. «Տեր Գրիգորես Ապիրատն կոչեցեալ ամս 7. սա ուներ բան վարդապետութեան:»⁵⁴ Թեև նա էլ իր «Ժամանակագրութեան» մեջ պատմում է, որ Ներսես Շնորհալու մահից հետո ավագ եղբորորդի Գրիգորը գրավում է կաթողիկոսական աթոռը, իսկ մյուս՝ իր հորեղբորորդի Գրիգորին ուղարկում է Լամբրոնի վիճակը ինսամելու, բայց քանի որ Ապիրատ անունը չի նշված, այդ հատվածի մեջբերում չենք անում:

Մի կողմ թողնելով Մամվելի և Վարդանի նշած թվերի տարբերությունը, այս ամենից կարելի է հետևեցնել, որ «հրամանատու և սրբազգեաց Գրիգորը» հենց Գրիգոր Ապիրատն է, որն հետագայում՝ Գրիգոր Ե. Գահավիժից հետո /որն հայտնի է նաև Քարավեժ անվամբ. Հ.Հ./ ստանձնում է կաթողիկոսական աթոռի ինսամակալությունը, ապա որոշ ժամանակ հետո այցելում արդեն թագավոր դարձած Լևոնին՝ փրկելու համար Ներսես Լամբրոնացու ավագ եղբայր և իր ազգական, Լամբրոնի տեր Հեթումին և պարզելու նախորդ՝ Գրիգոր Ե. կաթողիկոսի մահվան հանգամանքները և իր վախճանը գտնում Միսում, յոթը տարի

⁵³ Վարդան Արևելցի-Բարձրբերդեցի. «Պատմութիւն Տիեզերական», Մոսկվա, 1861թ:

⁵⁴ Տեառն Միխայելի Ասորույ «Յաղագս Քահանայութեան», . Յերուսաղէմ, 1871թ:

հովվապետությունը վարելուց հետո: Բայց այս ամենն արդեն Սամվելից հետո:

Ուրեմն Գրիգոր Ապիրատը 1176 թվին գալիս է Լամբրոն՝ **ըստ պատմագրաց**, որին առընթեր գտնվող Սկևռա միաբանությունում էր ամենայն հավանականությամբ արդեն գտնվում և Սամվել Անեցին, ինչպես ցույց տրվեց վերևում՝ **ինսխագրյալ** հատվածում «Հավաքմունքի» և «Պատմութիւն վարուց...»-ի հեղինակների նույնության հարցի քննությունը, որն արդեն հասցրել էր բավականին «**առաքինություններ**» անել: Եվ քանի որ նա սկսեց «խնամել զՏարսունի վիճակն»՝ ունենալով «բան վարդապետության», ապա շատ գործերի հետ մեկտեղ, ծանոթանալով Սամվելի գիտական պատրաստվածության մակարդակին, դեռ իր կաթողիկոս չեղած ժամանակ էլ նրան պատվիրել է նման պատասխանատու աշխատանք՝ գրելու ժամանակագրություն՝ Ադամից սկսելով հասցնել մինչև իրենց ժամանակները: Այս մտքի օգտին է խոսում և Սամվելի՝ իր մեկենասին դիմելու ձևը՝ «**սրբազգեաց**» մակդիրով որակելը և դուք-ով խոսելը: Դրանով արդյոք նա չի՞ ցանկացել հատուկ շեշտել և ընթերցողին էլ հուշել այն միտքը, որ Գրիգորը սուրբ այրերի՝ Գրիգոր և Ներսես կաթողիկոսների ազգից է: Եվ նա՝ Գրիգոր Ապիրատը, Տարսունի վիճակը խնամողն էր, որ դեռևս կենդանի էր, երբ Սամվելն արձանագրում էր Գրիգոր Տղա կաթողիկոսի մահվան թիվը և ամփոփման վայրը: Եթե մեկենասը Գրիգոր Տղան լիներ, ապա իր խոսքն ուղղելով նրան՝ իր պատվիրատուին, Սամվելը նրա իսկ մասին չէր ասի. «փոխի մահուամբ առ Քրիստոս սուրբն Ներսես և յաջորդէ զաթոռն տեր Գրիգոր՝ եղբորորդին նորին տղայ կոչեցեալ ամս Ի.»⁵⁵՝ իրար կողքի դնելով մեռածի «**սուրբն**» մեծարանքի և ապրողի, իշխողի «**տղայ կոչեցեալն**» ոչ մեծարական բնորոշիչները: Եվ այդ էլ այն դեպքում, երբ իր մեկենասին դիմում է «**սրբազգեաց, պատուասէր**» գերամեծար մակդիրներով: Ինչպե՞ս կարելի է կենդանի մարդուն

⁵⁵Ս. Անեցույ «Հավաքմունք...». 1893թ. Էջմիածին.

հաղորդել նրա մահվան և թաղված վայրի մասին, կամ էլ նորընծա կաթողիկոսին տեղեկացնել նրա գահակալության ժամկետը: Եվ կամ կարծես Գրիգոր Տղան չգիտեր, թե ինքն ո՞վ է, ու՞մ բարեկամն է:

Միքայել Ասորին երբ շարահարում է Ասորվոց պատրիարքների հաջորդականությունը, խոսքն ավարտում է իր անվան նշումով միայն, քանի որ դեռևս ինքն էր այդ ժամանակ գլխավորում Ասորվոց հովվապետական աթոռը՝ որպես հարյուրերորդ պատրիարք. «Ճ. Միխայլս ես:»⁵⁶, պարզ է, առանց նշում անելու իր աթոռակալության տարիների ընդհանուր քանակի մասին: Այդպես է վարվել և նրանից առաջ մեր Հովհաննես Դրասխանակերտցին. «Չկնի ապա հեքս ես ... Յովհաննես»⁵⁷՝ իրենով սահմանափակելով Հայոց կաթողիկոսների շարքը՝ առանց վերջնաժամկետը նշելու:

Ճիշտ է, Սամվելը գրել է ժամանակների, սերունդների համար, բայց և առաջին հերթին իր մեկենասի մոտ է հաշվետու և պատասխանատվություն կրում: Եթե մեկենասը լիներ Գրիգոր Տղան, ապա նրա մասին այդպես չէզոք, պատմական փաստի լոկ արձանագրմամբ չէր բավարարվի, և չէր հոգնի մեկ անգամ ևս հարգալից խոսքերով դիմելու նրան, եթե թեկուզ հետագայում լրացումներ կատարած լինի մահվան թվի և աթոռակալության ժամանակի վերաբերյալ:

Եվ եթե դարձյալ ի նկատի ունենանք Գրիգոր Տղայի ժամանակակից և նրան խորհուրդներ տվող Ասորվոց պատրիարք Միքայել Ասորու վկայությունը, որն ապացուցում է երկու ազգակից Գրիգորների միջև եղած եթե ոչ հակամարտությունը, ապա մեղմ ասած սառնությունը, կապված կաթողիկոսական աթոռի ժառանգման հետ, ապա Գրիգոր Տղա կաթողիկոսը դժվար թե իր անմիջական միջավայրի հոգևոր

⁵⁶Տեառն Միխայելի Ասորույ «Յաղագս Քահանայութեան». Յերուսաղէմ, 1871թ.:

⁵⁷ Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցեայ «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912թ.:

գործիչներին թողած՝ մեծ պատիվ ու պատասխանատվություն պահանջող գործը հանձնարարեր իր ախոյանի՝ Գրիգոր Ապիրատի հոգաձուլության տակ գտնվող Սկևռա միաբանության անդամին: Սամվելի չափավոր, սառը տոնն էլ՝ «տղայ կոչեցեալ» կարծես գալիս է ապացուցելու այս կարծիքը: Նա չէր կարող թույլ տալ իրեն գերագույն ակնածանքի խոսքերով դիմել մեկին, ապա նրան իսկ անվանել «տղայ կոչեցեալ»: Չէ՞ որ այդպես վարվելով նա կվիրավորեր իր «պատուասւէր» մեկենասի ինքնասիրությունը:

Ավելացնենք նաև, որ հենց այս «բան վարդապետութեան» ունեցող Գրիգոր Ապիրատի առաջարկով է իր հորողբայր Ներսես Շնորհալին գրել իր հայտնի «Ողբ Եդեսիոյ» պատմական արժեք ունեցող պոեմը,⁵⁸ երբ դեռ կաթողիկոս չէր:

Իսկ ինչ վերաբերվում է գործի գրության ժամանակին, ապա կարելի է ասել, որ գրելու վրա աշխատանքները կարող են սկսած լինել 1177-1179 թվերից՝ մինչև Գրիգորը հասցներ ճանաչել Սամվելի գիտական կարողությունները, և ձգված մինչև առնվազն 1186 թիվը՝ ներառելով իրենց մեջ հին պատմության, պատմիչների գործերի ուսումնասիրման, մի խոսքով նյութի հավաքման, մշակման և շարադրման բարդ աշխատանքները: Կարծում ենք այն կրել է աստիճանական, շարունակական բնույթ: Դիմելով իր մեկենասին, Սամվելը գրում է. «Արդ ով սրբազգեաց տեր իմ Գրիգոր հարկեցայ ի թախանձելոյ ձեր գեղկելի անձն իմ, ետու զանարհեստ անձն իմ ի մշակութիւն այս գործոյ, մոռանալով զբաջադմունս կենցաղականիս որ յարաժամ զգուէի գործել զառաքինութիւն: Ջանացի Եւսեբեայ պատմութիւնս կրկին գրելով:»⁵⁹ Սա այն պահն է, երբ արդեն հասցրել է շարադրել Եվսեբեոսի «Քրոնիկոնի», սեղմնագիրը՝ ժամանակագրությունն հասցնելով մինչև Քրիստոսի ծնունդը, այսինքն մեկ- երրորդից ավելին: Իհարկե առաքինություն անելուց չեն զգվում. նա երևի կամեցել է ասել, որ հոգնել է հենց այնպես գործ անել

⁵⁸Տես՝ Ներսես Շնորհալի. «Ողբ Եդեսիոյ», Երևան, 1982թ.:

⁵⁹Ս. Անեցույ «Հաւաքմունք...», Էջմիածին, 1893թ.:

«առաքինութիւն» անվան տակ, իսկ Գրիգորի առաջարկը կարգին, պատասխանատու գործ է, և ինքը կջանա այն ավարտին հասցնել: Թեև նման դժվար գործ ի կատար ածելու համար պահանջվում է ինքնամոռաց, անձնուրաց աշխատանք. «հարկեցա զեղկելի անձն իմ, ետու զանարիեստ անձն իմ ի մշակութիւն այս գործոյ, մոռանալով զբաջադմունս կենցաղականիս»⁶⁰ խոստովանում է նա, բայց չի հրաժարվում նման զոհաբերություններից: Նրա գրելու ոճից, խոսքի թափից և ոգևորությունից հասկացվում է նաև, որ նա ետևում է թողել իմաստնավորված տարիների պատկառելի քանակ, բայց գործի դժվարության մասին խոստովանանքը չի վերածվում ծերունական գանգատի, որովհետև նա դեռ լի է ոգով և գործելու, դժվարություններ հաղթահարելու վճռականությամբ: Նրա օրերը դեռ չեն երեկոյացել, ինչպես ինքն իր մասին նշում է Միքայել Ասորին, կամ Հովհաննէս Դրասխանակերտցին, որը շտապում է գրել, «վասն զի ծերութիւն ցավագին՝ մահ առ դուրս պատրաստ ունի, և տագնապ տարակուսից հապճեպ տայ պատմել զանցս անցից աղետիցս և անհնարին խռովութեանց հասելոց կալելոց զմեզ»:⁶¹

/Այս առիթով տեղին է հիշել մեծավաստակ գիտնական, արժանահիշատակ ակադեմիկոս Արարատ Ղարիբյանին, երբ անցյալ դարի 70-ականի սկզբներին կառավարության կողմից նրան հանձնարարվել էր շարունակել իր իսկ հիմնած գրաբար Համավարբառների կազմման աշխատանքների ղեկավարումն ու իր կազմելիք «Հայ-ռուսերեն» բառարանի կազմումն ու ավարտումը, տեսնել էր պետք, թե ինչպիսի անմիջական հրճվանքով և միայն իրեն հատուկ ոգևորությամբ էր ընդունում այդ հանձնարարականը, ձևակերպելով, թե կառավարությունից այդքան երկար ապրելու իրավունք են տվել իրեն: Այդ ժամանակ

⁶⁰Նույն տեղում:

⁶¹Յովհաննու Կայթողիկոսի Դրասխանակերտեցույ, Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912թ.:

նա 72 տարեկան էր: Այդպես է, երբ գիտես անելիքդ, տարիքդ չես նկատում: /

Ուրեմն Մամվելը գիրքն սկսել է գրել հասուն, բավականին գիտական փորձ կուտակած տարիքում, որը հաշվի առնելով է «սրբազգեաց» մեկենասը առաջարկել նրան նման պատասխանատու և ժամանակային տարողությամբ այդքան ընդգրկուն ու մեծածավալ գործ:

Իսկ գրելու ավարտը մնում է անորոշ, և ահա թե ինչու:

Մամվել Անեցու «Հաւաքմունք...»-ն ավարտվում է, ճիշտ կլինի ասել՝ ընդհատվում է ՌՃՁԲ. թվագրությամբ: Բայց սա չի նշանակում, որ նա գրել և ավարտել է հենց այդ թվին: Քանի որ դրանից առաջ, նախորդ՝ 138 էջում, երբ նշվում է Մլեհից հետո Ռուբինյան իշխանական՝ պարոնական աթոռն ստանձնած նրա եղբոր որդու՝ Ռուբենի աթոռակալության ժամկետը, պատմության ժամանակը ձգվում-հասնում է մինչև 1186 թիվ. «ՌՃԿԴ. Ի ՈԺԳ. թվին իշխանքն սպանին զչարասիրտն Մլեհ ի Սիս և բերեալ զՌուբէն՝ որդին Ստեֆանէի ... և եղին յաթոռն Հայոց Կիլիկիա ամս ԻԲ.»⁶² Եթե 1164 թվին՝ ՌՃԿԴ., երբ աթոռակալեց Ռուբենը, ավելացնենք իր իշխանավարման ԻԲ.՝ 22 տարիները, ապա կստացվի 1186՝ ՌՃՁԶ: Ուրեմն առնվազն մինչև այդ ժամանակ Մամվելը դեռ գրում էր: Իսկ գրքի վերջին՝ 139 էջի երկրորդ պարբերության նյութն էլ այդ ժամանակն ավելացնում է ևս տասը տարով. «ՌՃՀԶ. ի ՈՀԳ. թվին փոխի մահուամբ առ Քրիստոս սուրբն Ներսէս՝ և յաջորդէ զաթոռն տէր Գրիգոր՝ եղբորորդին նորին տղայ կոչեցեալն ամս Ի.»:⁶³ Եվ ապա նրա կատարած մեծաշուք գործերը շարադրելուց հետո, տեղյակի և ներկա գտնվողի վստահությամբ շարունակում. «Եւ զկնի ինքն ևս փոխի մահուամբ առ Քրիստոս և **կայիանգուցեալ** ի սուրբ ուխտն Դրազարկ»:⁶⁴ Այս փաստագրումով էլ պատմության ժամկետը

⁶²Ս.Անեցույ «Հաւաքմունք...», Էջմիածին 1893թ.:

⁶³Նույն տեղում:

⁶⁴Նույն տեղում:

հասնում է մինչև 1196 թիվ՝ ՌՃՂԶ: Այսքանից հետո ոչ մի խոսք չկա Լևոնի՝ Ռուբենի եղբոր ոչ պարոնության, որը Ռուբենից հետո տրվեց նրան, և ոչ էլ նրա թագավոր օծվելու մասին, որը պետք է լիներ 1197 թվին: Երևի այն պատճառով, որ պետք է հերթագայությամբ շարահարելով գար հասներ Հայոց կյանքում այս պատմական մեծ իրողությանը: Իսկ Լևոն թագավորի պարոնության որոշ տարիներ՝ սկսած 1187 թվից, համընկնում են Գրիգոր Տղայի կաթողիկոսության տարիների հետ, և գոնե պարոնության մասին Ռուբեն եղբորից հետո՝ նշում կլիներ: Դրա համար էլ գտնում ենք, որ նյութը կիսատ է: Գուցե և շարունակություն լինի դեռ ի հայտ չեկած ձեռագրերում:

Եվ արդյոք ք 1176-1182 թվերի միջև եղած վեց տարին բավարար ժամանակ է հազարամյակների կուտակված հսկայածավալ գրականությանը ծանոթանալու, մշակելու և գրի առնելու համար: Եվ կամ Գրիգորը չեկավ Լամբրոն ու միանգամից իր հանձնարարականն արեց Սամվելին: Նրա գիտական պատրաստվածությանը ծանոթանալու համար որոշ ժամանակ կպահանջվեր:

Բայց եթե նյութն ավարտվել է թեկուզ և հենց վերջին՝ ՌՃՁԲ. թվագրությամբ, Սամվելն առնվազն մի երկու տողով ամփոփում կտար իր կատարած դժվար աշխատանքին՝ որպես վերջնական հաշվետվություն իր մեկենասին, գործն ավարտելու մասին: Բնագիրն ավարտվում է միանգամից՝ Հունաց թագավորի մահով: Նա նույնիսկ խոսքն առաջ տանելու համար էլ հատուկ ձևակերպումներ է անում. «Իսկ մեք ի կարգ շարագրութեան գնացուք.» «Սկսցուք ուստի արժան է սկսանել» և այլ միջոցներ: Այնպես որ եթե գործն ավարտած լիներ այդ թվագրությամբ, նա չէր ծուլանա մի քանի խոսք գրել՝ դժվարություններն հաղթահարելու և «գաւազանաւ գրաւելու» գործն ավարտելու մասին, ինչպես արել է շատ հատվածներ գրելուց հետո:

«Աստանօր զխոստացեալ պարտսն հատուցից զմնացուածս բանից»⁶⁵ գրում է նա 115 էջում. և նման շատ հիշատակումներ:

Իսկ 135-րդ էջի «**Եւ գիտել պարտ է...**» պարբերությունից մինչև 136-րդ էջի «**... և այսպէս յարմարի կարգս թագաւորացն:**» չենք կարող Սամվելի ձեռքի գործ համարել այն պարզ պատճառով, որ այնտեղ խոսվում է Ռուբինյաց թագավորների մասին, որը Սամվելը չէր կարող անել ժամանակների անհամապատասխանության տեսակետից: Նա այդ Ռուբինյաց թագավորների ժամանակներում պարզապէս արդեն «**ի գոգս էր հանգստեան**»: Մեջբերենք այդ հատվածից մի փոքր կտոր: Գրքի 136 էջում ասվում է. «Եւ ապա Ռուբէն որդի Ստեփանէի նստի պարոն՝ ի ՌԺԳ. /1013՝. Հ.Հ./ թվին ամս ԻԲ. և ի ԶՃԼԵ. թվին մեռանի: / Ռուբենը 173 տարի ապրե՞լ է... Հ.Հ./ Եւ նստի եղբայրն իւր Լևոն Ժ. ամ պարոն և ԻԲ. ամս թագավոր և զկնի այլքն կարգաւ և այս ըստ ոմանց պատմագրաց: Իսկ մեք այդպէս ոչ եղաք»:⁶⁶ Նկատենք, որ արդեն 135 էջում ասված է Ռուբենի աթոռակալության մասին, և կրկնել նույնը բոլորովին ավելորդ կլինէր Սամվելի համար: Եվ տվյալ հատվածի գրիչը բացատրելով թե ինչու՝ շարունակում է. «Վասն այնր ես փոխեցի ըստ այլոց պատմագրաց, զի յարմարեցին ի շարս թագաւորացն Յունաց»:⁶⁷ Թվագրական սխալներով լի մի հատված, որտեղ խառնված են բոլոր տարեթվերը: Վերը միջանկյալ նշվեց Ռուբենի իշխանության և կյանքի տևողության կասկածելի անճշտությունները: Նախորդ Թորոսի մահվան թիվը՝ ԶՃԶ /906/ և նրա եղբայր Սլեհի աթոռակալության սկի գրը: Երբ Սամվելն է շարադրում իր նյութը, Թորոսի գերությունից փրկվելը և Կիլիկիա գալը նշում է «ի ՇՁԳ.» թվին, իսկ նշված հատվածում՝ «ի ՇՂԳ. թվին.»: Մի երկու էջ առաջ գրած նյութը նույն հեղինակը չէր մոռանա, որ անհետևողականորեն տասը տարով խառներ նույն

⁶⁵Ս.Անեցույ «Հաւաքմունք...», Էջմիածին, 1893թ.:

⁶⁶Նույն տեղում:

⁶⁷Նույն տեղում:

դեպքերի ժամանակները: Մի դեպքում Հունաց Պետիեռոսան կայսրը Կիլիկիա է արշավում «Ի ՇՁԱ. ամին» , իսկ այս հատվածում՝ «Ի ՇՁԶ.թվին»:

Եթե սա Սամվելի ձեռքն է, և խոսողն էլ ինքն է, ապա նա քանի՞ տարի է ապրել, որ ՈԼԹ. թվին, երբ գրվեց «աստուածախումբ մատենիս օրինակն ձեռամբ Սամուելի», նա արդեն «յուպ /էր/ եմ սոցին ծերութեան» և Լևոնն էլ դեռ չորս տարվա պարոն էր և ոչ թագավոր, և դեռ վեց-յոթը տարի էլ պիտի լիներ պարոն, ապա օծվեր թագավոր, որը հասնում է 1196-1197 թվերը, և դեռ 22 տարի էլ նստեր թագավոր, և դրանից հետո նոր պիտի գան թագավորների կարգն «ըստ պատմագրաց»: Այդ ո՞ր պատմագիրներն են Սամվելից առաջ գրել Ռուբինյան թագավորների մասին, երբ առաջին պատկավորը թագ պետք է ստանար միայն 1197 թվին՝ սա արդեն իսկապես «ըստ պատմագրաց»: Թիվ, որի շարահարմանը նա չի հասել: Եթե ընդունվի, որ այս հատվածը Սամվել Անեցունն է, նշանակում է, որ նա որքան ապրել էր, առնվազն այդքան էլ պետք է ապրած լինի, որ Ռուբինյան թագավորները հասցնեին կարգ կազմել, պատմիչներն էլ գրեին նրանց մասին, և ինքն էլ հասցներ կարդալ ու տեղեկություն ստանալ, ապա նոր միայն իր համաձայնությունն ու անհամաձայնությունն արտահայտեր նրանց ասածի վերաբերյալ: Մինչդեռ ամենավերջին շրջանի պատմիչներից նա հաճախակի հիշատակում է միայն Հովհաննես Սարկավազին, իսկ նա վախճանվել է 1129 թվին՝ Ռուբինյան թագավորներից շատ առաջ: Էլ չասենք «սրբազգեաց Գրիգոր» մեկենասի մասին, որը Սամվել Անացուն վկայակոչող մեր հիշատակած հեղինակների հետ միասին այդ ժամանակներում արդեն նույնպես «ոչ ևս էին»:

Քանի որ Սամվելի նպատակը եղել է ներկայացնել մարդկության պատմությունը ժամանակագրական կարգով, նա այդ արել է շատ սեղմ՝ թվագրության փաստագրման ձևով և շատ քիչ անգամ է ազատություն տվել իր մտքերին ու գրչին: Այդ իսկ պատճառով էլ միննույն նյութին մի քանի անգամ անդրադառնալ,

այն էլ ծավալուն կերպով, նա իրեն չէր կարող թույլ տալ ժամանակագրության պահանջներից, գրվածքի ծավալից, թեկուզ և ուժից ելնելով:

Պետք է կարծել, որ Ռուբինյան իշխանների, ապա և թագավորների շարքի, կարգի մասին սխալներով լեցուն այդ երկար քննությունը «Քրոնիկոնի» մեջ ներմուծվել է անհայտ գրչի կողմից հետագայում: Այդ է ապացուցում նաև այն, որ նա ընկած է հեղինակի շարադրանքի ՈԶ. և ՈԷ. թվերի միջև, իսկ բուն շարադրանքը շարունակվում է ՈԷ, ՈԺ, ՈԺԱ, ՈԺԲ. և այլն տարեթվերի հաջորդականությամբ՝ հասնելով ՈԻԹ. թիվը: Այն հատվածում /էջ 135/, որտեղ Մամվելը Ռուբինյան իշխանների՝ պարոնների շարքը հասցնելով մինչև իշխան-պարոն Լևոնի որդի Թորոսի կրոնավոր դառնալուց հետո մահը, և նրա եղբոր՝ Մլեհի իշխանավարելը ՈԶ. թվին «յամս Է.»՝ դեռ չհասած նրա եղբոր որդի Ռուբենի մասին նշումը, անմիջապես, նույն տողից իսկ շարունակում է. «Եւ ի սոյն ամի պառակտեցան Տաճիկքն յերկուս ազգս. մինն կոչեցաւ Ռուֆթիք և միւսն Սուննիք... և են հակառակք միմեանց»:⁶⁸ Այսինքն ավարտվել է Ռուբինյանների մասին տեղեկություն տալը այս հատվածում՝ պարոնությունը հասցնելով մինչև Մլեհ, և շարունակում է այլ երևույթի պատմությունը: Ապա Տաճիկների մասին խոսքն ընդհատելով՝ նոր պարբերությամբ շարունակվում է Ռուբինյան թագավորների կարգի մասին դատողություններով լի վերը նշված հատվածը, և նորից շարունակում նույն տաճիկների մասին կիսատ թողած պատմությունը՝ ՈԷ. թվից. «Իսկ ՈԷ. ամին այր մի Էուբ անուն և եղբայր իւր Շիրաքօ՝ որդիք Սուլիմանայ քուրդ ազգաւ ելին ի Դընսայ...»⁶⁹ և այլն, և պատմում նրանց առաջընթացի մասին:

Այս մանրակրկիտ քննությունից հետո, պարզ երևում է, որ Ռուբինյանների մասին 135 էջի «**Գիտել պարտ է...**» բառերով սկսվող և մինչև 136 էջ ձգվող նշված հատվածը գրիչի կողմից

⁶⁸Մ. Անեցույ «Հաւաքմունք...», Էջմիածին, 1893թ.:

⁶⁹Նույն տեղում:

հետո է խցկվել Սամվելի գործի մեջ, և համարել այն միջարկություն, սխալ կլինի: Քանի որ Սամվելը չէր կարող դատողություններ անել չեղածի, չտեսածի, չիմացածի, ապագայի՝ Ռուբինյան թագավորների կարգի մասին: Նա փաստորեն Ռուբինյանների մասին իր պատմությունը հասցրել է մինչև Ստեփանէի որդի Ռուբենը, ընդ որում այս հատվածից հետո, որով և ավարտվում է նրանց մասին հիշատակումը ժամակագրության մեջ: Թե չէ, ինչու՞ 1182 թվին վերջակետ դրած /ըստ գրքի/ գրողը իր շարադրանքից առաջ վագեր և անպատեհորեն ներկայացնէր այդ թվից հետո տեղի ունենալիք դեպքերը: Մանավանդ որ դեռ պետք է արձանագրէր Ստեփանէի որդի Ռուբենի ԻԲ. տարի իշխանավարելու փաստը: Դա նրա ոճին հատուկ էլ չէ. նա վայրիվերումներ, խառնափնթորումներ թույլ չի տալիս իրեն, այլ ինչպէս որ տունն են կառուցում շարքով, կարգով, այնպէս էլ նա իր «Գաւազանն» է հյուսում՝ հերթագայությամբ շարահարելով: Եվ եթէ ուզենար այդ մասին գրել, կգրէր համապատասխան տեղում, որին չի հասել:

Անգամ ոճն էլ տարբեր է. անպատասխանատվություն պատմական թվերի հանդեպ, չկա Սամվելի համեստությունը, իր մասին խոսելիս՝ խոնարհությունը:

Այս հատվածի նման մի «խմբագրում» էլ կա 133 էջում. «և յայսմ ամի էառ Ստեֆանէ հայրն Լևոնի թագավորի զՄարաշ»:⁷⁰ Այսպէս կարող է խոսել Լևոնի թագավոր լինելու մասին տեղյակ և հետընթաց ուսումնասիրություն արած մեկը, որ գուցէ և հենց քննված հատվածի հեղինակն է:

Երևի սրանք այն գրիչի ձեռքի գործն են, որի մասին նյութի ավարտին նշում է ավելի ուշ շրջանի ընդօրինակողը, և որը ժամանակագրությունը հասցրել է մինչև ՉՁԲ.՝ 1335 թիվը, մինչև Լևոն մեծի՝ Լևոն երկրորդի թոռ Լևոնը, որը և կարող էր գրել Լևոն առաջին թագավորի և նրանից հետո եկած թագավորների մասին

⁷⁰Ս. Անեցոյ «Հաւաքմունք...». Էջմիածին, 1893թ. :

այդպես. «և զկնի այլքն կարգաւ և այս ըստ ոմանց պատմագրաց»:⁷¹

Սամվել Անեցու գրչին չի պատկանում նաև Ներսես Լամբրոնացու Սաղմոսների մեկնության առաջին հիշատակարանին հաջորդող 234 էջի «Ամենապատճառն սկիզբն էության...» բառերով սկսվող պարբերությունը մինչև վերջ՝ 243 էջ, քանի որ այն գրված է Լևոն երկրորդ թագավորի օրոք՝ 13-րդ դարի երրորդ քառորդում և հասնում է մինչև նրա կին՝ թագուհի Կիրանեի մահն ու Հեթում թագաժառանգը, թեև դարձյալ Սաղմոսների մեկնության հիշատակարան է, և հեղինակի անունն էլ՝ անհայտ:

Իհարկե մեր նպատակից դուրս է գրվածքի՝ «Հաւաքմունք...»-ի ամբողջականության հարցի քննումը, որովհետև դա կարելի է անել միայն ձեռքի տակ ունենալով Սամվել Անեցուն վերագրվող բոլոր ձեռագիր օրինակները, որի հնարավորությունը չունենք: Այսքանն էլ արվեց այն պատճառով, որ այն առնչվում էր հեղինակի կյանքի, երկարակեցության հետ:

Եթե իմի բերելու լինենք նրա կենսագրական տվյալներն ու ամփոփենք, ապա կարող ենք ասել հետևյալը.

Սամվել Անեցին ծնվել է 12-րդ դարի սկզբին, մոտ՝ 1110 թվին: Ուսանել է սկզբում առ ոտս Գևորգի՝ «վարդապետին իմոյ», որն ուղղումներ էր կատարել «մինչև ցղիր թուականիս մեր»⁷², ապա Սարգիս Փառիսոսցու / ՚ / իմա՝ Հովհաննես Սարկավազ Փառիսոսցու մոտ: 1124 թվին Վրաց Դավիթ թագավորի կողմից Անիի գրավման ժամանակ եղել է պաշարվածների մեջ: Ուսում ստանալուց հետո իր հոգևոր ծառայությունն է կատարել Անիի Կաթողիկե եկեղեցում՝ որպես քահանա: 1161 թվին, երբ Վրաց Գեորգի թագավորը գրավել է Անին, Սամվելը ականատես ու մասնակիցն է եղել դեպքերին և օգնել է պատերազմական գործողությունների ամփոփագիրը կազմելուն: Անօրենների

⁷¹Նույն տեղում:

⁷²Նույն տեղում:

հաճախակի հարձակումներից, Անին ձեռքից ձեռք անցնելու, դրանից իսկ ժողովրդի ծայր աղքատության և անհուսության հասնելու պատճառով, նրանց հետ, կամ պաշտոնի բերումով հեռացել է Անիից և հաստատվել Կիլիկյան Հայաստանի Լամբրոն ամրոցի մոտ գտնվող Սկևռում: Արդեն 1181 թվին նրան կարելի է գտնել Սկևռա միաբանության շարքերում՝ Ներսես Լամբրոնացու պատարագն ունկնդրելիս: Երբ 1176 թվին Լամբրոնի վիճակն ստանձնում է Գրիգոր Ապիրատը՝ ծանոթանալով Սամվելի գիտական պատրաստվածության մակարդակին, հանձնարարում է գրել ժամանակագրություն՝ «սկսեալ յԱդամայ» մինչև իրենց ժամանակները: Սամվելն էլ ստանձնելով հանձնարարականը՝ ուսումնասիրելով իրենից առաջ եղած հսկայածավալ գրականությունը, գործն սկսում և ավարտում է 1186 թվից հետո, 1190 –ից առաջ, թեև հրատարակված գիրքն ավարտվում է 1182 թվանշումով: Դրանից հետո՝ 1190 թվին Ներսես Լամբրոնացին է նրան հահձնարարում ընդօրինակելու Սաղմոսների իր հեղինակած մեկնությունը: Այդ էլ կատարելով, ավարտելով հիշատակարանով, Սամվելը գրում է նաև Ներսես Լամբրոնացու վարքագրությունը: Նա ըստ իր խոսքերի, արել է և ուրիշ «առաքինություններ»՝ գործեր, որոնք ցավոք, դեռևս անհայտ են մնացել և չեն լուսաբանվել:

Կյանքի վախճանի մոտավոր թիվը կարելի է համարել 1196-1197 թվերի միջև ընկած ժամանակը, այն պատճառով, որ նա նշել է Գրիգոր Տղա կաթողիկոսի մահվան ժամանակը՝ 1196 թիվ, բայց չի նշել հայ իրականության և պատմության համար այնպիսի մի կարևոր իրադարձության՝ Հայոց թագավորության վերականգնման փաստը՝ Լևոն թագավորի օժմամբ, որ ենթադրել է տալիս, թե նա չի հասցրել այդ տեսնել:

Մենք էլ, հետևելով նրա օրինակին, մեր կարողությունների սահմաններում փորձեցինք տալ նրա կյանքի և գրական գործունեության վերաբերյալ մանրագնին ուսումնասիրության արդյունքը, որոշակի գաղափար կազմել տալու համար հեղինակի՝ իր իսկ խոսքերով ասած, «ովն, ուստն, և զիարդն»

բացահայտելիս, «զի մի մնացել տարակոյս յառաջել ժամանակին սորին քննողի ո՞վն, և ու՞ստն, և զիա՞րդն:»⁷³

Միաժամանակ մեր հարգանքի տուրքն ենք մատուցում արժանահիշատակ Արշակ Տեր-Միքելեանին, որ «Հաւաքմունքի» հետ միասին հրատարակել է նաև «Պատմութիւն վարուց Ներսիսի Եպիսկոպոսին» գործը՝ հնարավորություն ընձեռելով ուսումնասիրողին՝ զուգադրելու և համեմատելու այդ երկու աշխատանքները և եզրակացությունների հանգելու: Քանի որ մենք չունենք տարբեր երկրների գրադարանները շրջելու և այնտեղից նյութ քաղելու հնարավորություն, որն արել է մեծարգո զիտնականը:

Մամվել Անեցու վերաբերյալ ուսումնասիրության համար գործածված գրականության ցանկ

1. Մամուել քահանայի Անեցոյ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», 1893թ., Էջմիածին:
2. « Պատմութիւն» Մատթեոսի Ուռհայեցոյ, 1869թ., Երուսաղէմ:
3. Ժամանակագրութիւն Տեառն Միխայելի Ասորոյ Պատրիարքի, 1871թ., Երուսաղէմ:
4. Միսիթարայ Անեցոյ «Պատմութիւն», Ս.Պետերբուրգ, 1879թ.:
5. Վարդան Արեւելցի-Բարձրաբերդեցի. «Պատմութիւն Տիեզերական», Մոսկվա, 1861թ.:
6. «Պատմութիւն» Արիստակէայ Վարդապետի Լաստիվերտեցոյ, Ի Վենետիկ, յամի 1901 ՌՅԾ:
7. Կիրակոս Գանձակեցի. « Պատմութիւն Հայոց», Երևան, 1961թ.:
8. Ներսէս Շնորհալի. «Ողբ Եղեսիոյ». Երևան 1982թ.:
9. Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912թ.:
10. Ուխտանէս Եպիսկոպոս. «Պատմութիւն Հայոց», Վաղարշապատ, 1871թ.:

⁷³Ս.Անեցոյ «Հաւաքմունք...», «Պատմութիւն Վարուց...», Էջմիածին, 1893թ.:

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՏԱՌԵՐԻ ՀԱՃԱԽՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մանուկյան Անժելա
ԳԱԱ լեզվի ինստիտուտ
Ուռուտյան Ռոբերտ
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Հայտնի է, որ բոլոր բնական լեզուներն ունեն իրենց հատուկ տառերի բաշխման հաճախություն: Այդ բաշխումը բացահայտելու համար դիմում են տեքստային տեղեկատվության վերլուծությանը: Տառերի հաճախության վերլուծությունը ենթադրում է, որ տեքստում տվյալ տառի հանդես գալու հավանականությունը տվյալ լեզվի բավականաչափ երկար տարբեր տեքստերի դեպքում իրարից քիչ են տարբերվում: Տառերի հաճախության հաշվարկը կատարվում է ըստ հետևյալ բանաձևի՝ $Freqx = Qx / Qall$, որտեղ $Freqx$ -ը տառի հաճախությունն է, Qx -ը՝ x տառի հանդիպելու քանակը, $Qall$ -ը՝ տեքստի տառերի ընդհանուր քանակը: Հաճախությունը սովորաբար ներկայացվում է տոկոսներով, վերջնական արդյունքները՝ ըստ հետևյալ բանաձևի՝ $Freqx = 100$:

Հ. Աճառյանը իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության ներածությունն մեջ ներկայացնում է տառերի և հնչյունների իր կատարած հաշվարկը գրաբարի, արևմտահայերենի և արևելահայերենի համար: Ինչպես նշում է հեղինակը. «Տառերի հաշվի մեջ բացարձակապես հետևել եմ ձայնական գրության»¹: Ահա արևելահայերենի համար Հ.Աճառյանի ստացած աղյուսակը²:

¹ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, հ.1, Ներածություն, Ե., 1955, էջ 265:

² Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 277:

ա ք գ դ զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ
ճ մ յ
2290 213 176 151 107 1880 813 264 44 850 322 112 171 490 289 66 166
39 764 780

ն շ չ պ ջ ռ ս վ տ ր ց ու փ ք օ
1711 140 231 212 76 150 406 990 555 1367 301 708 49 306 820

Նման աշխատանքներ հետազայում կատարել են
Է.Աղայանը³ և Ա. Սարգսյանը⁴ գրաբարի տեքստերի համար:
Վերջիններս անցկացրել են գրաբարի հնչույթների հաճախության
վերլուծություն և ստացել են որոշ չափով տարբերվող
հաջորդականություն:

Հետազայում Ա.Սարգսյանը հնչույթների հաճախության
վերլուծություն է կատարել նաև 19-20-րդ դդ. հայ գրողների
ստեղծագործությունների հիման վրա⁵:

Արևելահայերեն՝ Ա Ն Ե Բ Ի Ը Մ Ո Ի Յ Ո Վ Կ Ս Ս Լ Յ Հ Ք Թ
Գ Չ Բ Դ Պ Ղ Ծ Խ Ռ Զ Փ Ժ Զ Ճ Ֆ:

Արևմտահայերեն՝ Ա Ն Է Բ Ը Ի Ո Ի Գ Յ Վ Օ Մ Դ Ք Թ Ս Հ Յ
Չ Լ Փ Բ Դ Չ Շ Ռ Խ Զ Չ Ժ Ֆ:

Երկրորդ տողում բացակայում են որոշ հնչույթներ, քանի
որ համապատասխան տառերը այլ կերպ են հնչում
արևելահայերենում: Սակայն այբուբենի տառերի հաճախության
հաշվարկի համար չենք կարող օգտագործել նշված
աշխատությունների տվյալները, քանի որ, ինչպես նշվեց, դրանք
նվիրված են հնչույթների քննությանը, երբ, օրինակ, **ե** և **է**, **ո** և **օ**
տառերը դիտվում են որպես մեկ հնչույթ, որոշ բաղաձայնների
համար (**ձ-ց**, **բ-փ** և այլն) հաշվառվում են արտասանական
տարբերակներ, իսկ արևմտահայերենում շատ բաղաձայններ այլ
կերպ են հնչում:

³ Է. Աղայան, Գրաբարի քերականություն, հ.1, Ե., 1964:

⁴ Ա.Սարգսյան, Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը, Ե., 1975:

⁵ Ա.Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985:

Արդեն ասվել է՝ գոյություն ունեն այս կամ այն լեզվում տառերի բաշխման բազմաթիվ տարբեր աղյուսակներ, սակայն դրանցից և ոչ մեկը չի պարունակում վերջնական տվյալներ, տարբեր աղյուսակներում տառերի հերթականությունը կարող են տարբեր լինել:

Տառերի հաճախությունները կախված են տեքստի հեղինակի ոճից, թեմայից, ստեղծման ժամանակից և տեքստի այլ բնութագրերից: Թեև չկա մի որոշակի հաջորդականություն, որը կարող է հաշվի առնել տեքստերի բոլոր տեսակները, կան, սակայն, տառերի բաշխման ընդհանուր օրինաչափություններ, որոնք կարելի է վեր հանել վերլուծելով, հաշվարկելով և համեմատելով նույն ժամանակաշրջանի տարբեր բնագավառների տեքստեր:

Քանի որ մեր նպատակն է վեր հանել ժամանակակից հայերենի տառերի հաճախությունը, ընտրվել են տարբեր բնագավառների մոտավորապես միևնույն երկարությունն ունեցող տեքստեր (մոտ 1000-ական բառ), որոնք լույս են տեսել 2000թ. հետո: Տեքստերի ընդհանուր ընտրանքը գերազանցում է 10000 բառը: Տեքստերն (T1 - T10) իրենց նշանակումներով հետևյալներն են (տե՛ս Աղյուսակ 1).

T1 (Ֆիզ.)-**Ֆիզիկա** (Հայկական վիքիպեդիայի «Ֆիզիկա» հոդվածը),

T2 (Ճարտ.1)- **Ճարտարապետություն** 1(Ալեքսանդր Թամանյանի Ճարտարապետություն կյանքին և գործունեությանը նվիրված տեքստը),

T3 (Օրենք) -**Կրթության Կրթությանմասինօրենքի** տեքստը,

T4 (Մամ.) - **Մամուլ** (համացանցի մամուլի տեսությունից),

T5 (Գեղ.գ) - **Ժամանակակից գեղարվեստական գեղարվեստական գրականություն** (Կարինե Խողիկյանի «Յոթերորդ օրը» պատմվածքի տեքստը),

T6 (Գիտ.գ.) - **Լեզվաբանություն** (Լ.Հովսեփյանի «Լեզվաբանությունը Հայաստանում» ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կայքէջի հոդվածը՝ <http://language.sci.am/>),

T7 (Քիմ.) - **Քիմիա** (հատված քիմիայի դպրոցական VII դասարանի դասագրքից),

T8 (Կրոն) - **Կրոն** («Կրոնի ազատությունը Հայաստանում» Մ.Երանոսյանի, Վ.Իշխանյանի, Ա.Իշխանյանի ուսումնասիրությունից մի հատված),

T9 (Հաս.) - **Հասարակագիտություն** (դպրոցական VIII դասարանի դասագրքից «Ժողովրդավարության սկզբունքները» հատվածը),

T10 (Ճարտ.2) – **Ճարտարապետություն 2** (Մ.Հասարայանի «Հայկական ճարտարապետություն» աշխատությունից հատված):

Վերլուծելով նշված տեքստերը (նախապես դրանցից հետաքննելով թվերը, կետադրական ու այլ նշանները և թողնելով միայն հայերենի այբուբենի տառերը)՝ կազմվել են դրանց տառերի հաճախությունների աղյուսակներ, որոնք ինչ-որ չափով իրարից տարբերվում են, միավորելով դրանք և կիրառելով վերը նշված բանաձևը՝ հայերենի այբուբենի համար ըստ տառերի հաճախությունների ստացվել է հետևյալ դասավորությունը (տե՛ս Աղյուսակ 1): Աղյուսակի առաջին տողում նշվում են տեքստերը (T1-T10), 2-11 սյունակներում տրվում են համապատասխան բնագավառի համար ստացված տառերի քանակը, 12-րդ սյունակում՝ տառերի ընդհանուր քանակը, վերջին՝ 13-րդ սյունակում ներկայացվում են տառերի հաճախությունները՝ տոկոսներով՝ ըստ վերը նշված բանաձևի:

Տառերի այս հաջորդականությունը կարելի է ժամանակակից հայերենի համար ընդունել օբյեկտիվ իրողություն, քանի որ այն կազմված է տարբեր բնագավառների տեքստերի հիման վրա (դասավորությունը ներկայացվում է թվերով՝ այբբենական կարգով, հաճախության նվազմամբ և համապատասխան տոկոսներով): Ստորև տրվում է տեքստերի

տառերի հաջորդականությունը հաճախությունների նվազմամբ՝ տոկոսներով.

Ա Ն Բ Ե Ի Ու Կ Մ Ո Տ Յ Վ Ս Թ Հ Լ Ց Ը Դ Գ
17,3 10,9 7,5 6,4 5,6 4,9 4,0 3,9 3,6 3,3 3,2 2,5 2,2 2,1 2,0 1,7 1,6 1,5 1,4
Ք Բ Պ Ղ Ծ Ջ Է և Շ Ռ Խ Չ Ջ Ժ Ձ Փ Ճ Օ Ֆ
1,3 1,2 1,1 1,1 0,9 0,9 0,9 0,9 0,8 0,7 0,6 0,5 0,4 0,3 0,3 0,3 0,3 0,2 0,1

Սույն դասավորության, ինչպես նաև այբբենական դասավորության համար կազմվել են գծանկարներ ըստ տառերի քանակի և տոկոսների (Գծանկարներ 1, 2, 3,) և տեքստերի տառերի ծածկույթը նկարագրող աղյուսակ (Աղյուսակ 2) և պատկեր (Պատկեր 1): Այս պատկերից երևում է, որ հաճախության շարքի տառերի 1-ին տասնյակը ծածկում է տեքստի համարյա 68%, երկրորդը՝ մոտավորապես 20%, երրորդը՝ մոտ 10%, իսկ վերջին 9 տառը՝ տեքստի ընդամենը 3%:

Նմանատիպ աշխատանք կատարվել է նաև տեքստերի բառերի սկզբնատառերի համար: Սկզբնատառերի հաճախությունների այս հաջորդականությունը ստացվել է վերը նշված եղանակով: Ստորև տրվում է տեքստի սկզբնատառերի հաջորդականությունը՝ հաճախության նվազմամբ (տոկոսներով).

Ա Հ Մ Կ Է Ե Ն Ո Բ Տ Ու Ի Պ Ս Գ Դ Թ Ք Լ Վ
10,8 10,1 6,5 5,9 5,8 5,0 4,9 4,9 4 4 3,3 3,1 3,0 3,0 2,9 2,6 2,2 1,9 1,8 1,7


Շ Չ Օ Փ Ջ ժ Խ Ը Ճ Ծ Ձ Ֆ Ջ Յ Ց Ց Ռ Ղ Ը և
1,5 1,2 1,2 1,1 1,0 1,0 1,0 0,9 0,8 0,7 0,6 0,5 0,4 0,2 0,2 0,2 0,1 0 0

Այս հաշվարկները հնարավորություն ընձեռեցին ստանալ նաև նշված բնագավառների տեքստերի բառերի միջին երկարությունը. արդյունքները տե՞ս Աղյուսակ 3-ում:


Աղյուսակ 1. Տառերի ընդհանուր հաճախությունը՝ ըստ տեքստի բնագավառների

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
	Ֆիզ.	Ճարտ.1	Օրենք	Մամ.	Գեղ.գ.	Գիտ.գ.	Քիմ.	Կրոն	Հաս.	Ճարտ.2	Ընդ	%
	T1	T2	T3	T4	T5	T6	T7	T8	T9	T10	.	
ա	1075	1326	1593	1079	676	1532	1317	1350	1501	1275	12724	17.34
բ	85	81	77	65	53	143	102	69	95	71	841	1.15
գ	120	109	170	67	52	130	79	92	61	111	991	1.35
դ	102	86	66	80	89	81	86	107	183	128	1008	1.37
ե	496	458	257	434	384	542	596	563	469	518	4717	6.43
զ	99	39	40	37	25	150	84	79	59	41	653	0.89
է	69	64	37	74	83	31	97	41	87	53	636	0.87
ը	111	110	89	84	67	94	156	119	166	108	1104	1.50
թ	132	131	259	114	50	163	169	167	251	125	1561	2.13
ժ	17	25	15	21	11	14	23	19	80	8	233	0.32
ի	537	418	336	334	251	364	580	485	394	430	4129	5.63
լ	126	144	42	139	102	165	171	127	108	109	1233	1.68
խ	40	61	35	52	30	40	28	57	55	37	435	0.59
ծ	52	80	76	37	46	58	110	81	73	86	699	0.95
կ	311	270	403	187	130	331	333	355	304	310	2934	4.00
հ	129	157	180	131	78	186	132	214	148	135	1490	2.03
ձ	19	21	36	22	19	20	26	13	25	37	238	0.32
ղ	60	77	70	90	63	57	85	88	118	93	801	1.09
լ	60	77	70	90	63	57	85	88	118	93	801	1.09
ճ	13	39	20	15	9	12	12	18	13	44	195	0.27
մ	251	220	328	205	233	330	413	284	370	242	2876	3.92
ծ	247	214	256	179	110	274	225	297	328	197	2327	3.17
ն	769	744	907	669	411	995	931	904	977	720	8027	10.94
շ	36	84	38	55	45	59	46	36	72	78	549	0.75
ն	527	245	202	245	167	157	296	259	319	233	2650	3.61
չ	26	24	20	52	79	19	47	36	48	31	382	0.52
պ	40	98	103	88	62	79	94	90	94	90	838	1.14
զ	37	19	25	40	22	18	40	36	34	31	302	0.41
ն	49	47	41	48	54	74	55	41	43	58	510	0.70
ս	154	138	228	136	116	147	173	204	164	153	1613	2.20
վ	154	152	178	141	127	182	207	218	285	200	1844	2.51
տ	264	277	299	226	164	200	305	229	220	250	2434	3.32
ր	589	547	618	458	375	581	737	207	762	648	5522	7.53
գ	125	78	96	122	161	101	115	161	94	149	1202	1.64
ու	338	258	506	245	202	447	388	391	579	278	3632	4.95
փ	14	15	17	37	21	17	36	17	33	14	221	0.30
ք	58	82	72	113	78	56	118	117	173	109	976	1.33
լ	66	69	52	26	26	79	81	72	83	73	627	0.85
օ	14	14	14	13	11	5	28	21	18	7	145	0.20
ֆ	43	4	3	1	0	1	9	3	2	4	70	0.10
												100.0


Գծանկար 1



Գծանկար 2




Գծանկար 3



Աղյուսակ 2

Տեքստի ծածկույթը տասնյակներով

Տասնյակ	Տոկոս
Ա-Տ	67.7
Յ-Գ	19.6
Ք-Ռ	9.7
Խ-Ֆ	3.03



Պատկեր 1. Տեքստի ծածկույթը հաճախության շարքի տասնյակներով

Աղյուսակ 3. Բառի միջին երկարությունը ըստ տեքստի բնագավառի

Տեքստի համարը	Բնագավառը	Տեքստի տառերի քանակը	Բառերի քանակը	Բառի միջին երկարությունը
T1	Ֆիզիկա	7394	1030	7,2
T2	Ճարտ.1	7025	1055	6,1
T3	Օրենք	7804	1022	7,6
T4	Մամուլ	6161	1080	5,7
T5	Գեղ. գրակ.	4682	1045	4,5
T6	Լեզվաբանութ.	7934	1032	7,7
T7	Քիմիա	8530	1498	5,0
T8	Կրոն	7667	1189	6,4
T9	Հասարակագիտ.	8888	1268	7,0
T10	Ճարտ.2	7284	1244	5,1

Анджела Манукян, Роберт Урутян – Частотный анализ букв армянского алфавита. – В статье приводятся результаты подсчета частот букв алфавита современного армянского языка. Для объективности полученных результатов выбраны тексты примерно равной длины, относящиеся к разным областям: физика, химия, языкознание и т.д. Подсчитана также средняя длина слова в различных текстах.

2014

ՀԱՉՈՒՅԹԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՇՇԵՐԲԱՅԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գրիգորյան Գայանե
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Լ. Վ. Շչերբան, լինելով Բողունն դե Կուրտենեի աշակերտը Սանկտ Պետերբուրգի համալսարանում, ստեղծագործաբար զարգացնում էր իր ուսուցչի բազմաթիվ լեզվաբանական գաղափարները՝ շատ հաճախ դրանք զգալիորեն վերամշակման ենթարկելով: Հենց շնորհիվ Շչերբայի՝ արևմտաեվրոպական լեզվաբանները ծանոթացան *հնչույթ* հասկացությանը և հնչութաբանության տեսությանը: Չնայած այս տեսության արմատները ամփոփված են Բողուննի աշխատություններում, սակայն Շչերբան է առաջին անգամ տվել դրանց հետևողական նկարագրությունը և այն կարևոր հարցի պատասխանը, թե ինչպես է հնչաշղթայում լեզուն կրողների կողմից տեղի ունենում հնչյունների ընկլումը և հնչույթի ընտրությունը: Հնչունաբանական հետազոտությունների ամբողջ պատմության ընթացքում մինչև Շչերբան հնչյունների առանձնացումը հնչաշղթայում ընդունում էին որպես երևութ, որն ինքնըստիսքյան ենթադրվում է, և կարծում էին, որ տարբեր հնչյունները միավորվում են ուղղակի ըստ հնչյունական նմանության:

Լև Վլադիմիրի Շչերբան (1880 –1944) ծնվել է Մինսկի նահանգի Բգումեն քաղաքում, մեծացել Կիևում: Գիմնազիան ավարտելուց հետո 1898-ին ընդունվել է Կիևի համալսարանի բնական գիտությունների ֆակուլտետ, իսկ 1899 - ին

տեղափոխվել Պետերբուրգի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետ, որի հետ էլ կապված է եղել իր ամբողջ կյանքի ընթացքում: 1903թ. ավարտելուց հետո Շչերբան հանձնում է մագիստրոսական քննությունները և սկսում աշխատել համեմատական քերականության և սանսկրիտի ամբիոնում՝ միաժամանակ կադետական կորպուսում դասավանդելով ռուսաց լեզու: 1906թ. նա գործուղվում է արտասահման: Իտալիայում սովորում է տոսկանյան բարբառները, Ֆրանսիայում աշխատում է Ռուսպոլի փորձառական հնչյունաբանության լաբորատորիայում, Գերմանիայում ինքնուրույնաբար ուսումնասիրում է գերմաներեն որոշ բարբառներ, որոնք հետագայում նկարագրում է իր դոկտորական ատենախոսության մեջ: 1909թ. վերադառնալով Սանկտ Պետերբուրգ՝ ընտրվում է որպես պրիվատ-դոցենտ և դառնում պահապանը փորձարարական հնչյունաբանության լաբորատորիայի՝ հիմնադրված դեռևս 1899-ին, որի հետագա գործունեության համար նա ձեռք է բերում տարբեր սարքավորումներ և գրքեր: 1912 թվականին Շչերբան պաշտպանում է մագիստրոսական թեզը՝ «Ռուսերենի ձայնավորները որակական և քանակական հարաբերակցության մեջ» (Русские гласные в качественном и количественном отношении), որտեղ շարադրված են հնչույթի տեսության հիմնական դրույթները, իսկ 1915թ.՝ դոկտորական թեզը՝ «Восточнолужицкое наречие»: 1916-ին Պետրոգրադի համալսարանում արժանանում է *արտակարգ պրոֆեսոր* տիտղոսին: 1924թ. Շչերբան դառնում է գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1943-ին ընտրվում որպես լիիրավ անդամ:

Շչերբայի գիտական հետաքրքրությունները լայն էին ու բազմազան: Նա քննարկում էր ընդհանուր լեզվաբանական խնդիրներ՝ լեզվի ու խոսքի, նյութականի ու ոչ նյութականի հարաբերությունը, խոսքի մասերի դասակարգման սկզբունքները, երկլեզվության և լեզուների փոխազդեցության

հարցեր, բառագիտության և քերականության հարաբերակցությունը, բառագիտության և բառարանագրության խնդիրներ, վերլուծում էր լեզվական նորմերի հասկացությունը: Նա կարևորում էր լեզվական տարբեր փորձարկումները (ոչ միայն հնչյունաբանական) տեսական խնդիրների լուծման ժամանակ: Նա հետաքրքրվում էր գիտության տեսական դրույթների կիրառման հարցերով, հետևաբար զբաղվում էր նաև գրաֆիկայի և ուղղագրության խնդիրներով, օտար լեզուների դասավանդման մեթոդիկայով: Շատ գաղափարներ, որոնք Շչերբան երբեմն արտահայտում էր հպանցիկ և հանպատրաստից, զարգացան 20-րդ դարի երկրորդ կեսի հետազոտողների աշխատություններում: Ստորև կքննարկվեն Շչերբայի միայն հնչյունաբանական հայացքները՝ շարադրված 20-ական թվականներին:

Հնչյութաբանության բնագավառում Շչերբան, իր իսկ խոսքերով, հետևում էր իր ուսուցչին՝ Բոդուեն դե Կուրտենենին, սակայն նա այնքան զարգացրեց և լրացրեց իր ուսուցչի գազափարները, որ ըստ էության ստեղծեց հետևողական հնչյութաբանական տեսությունը, որը շարադրված է իր մագիստրոսական թեզում՝ «Русские гласные в качественном и количественном отношении» (1912 г):

Մի շարք հնչյութաբանական տեսական դրույթների մասին, որոնք կարևոր էին հնչյութաբանական հետազոտության բնագավառում, Շչերբան դեռևս խոսել է 1909թ. իր գրած «Սուբյեկտիվ եւ օբյեկտիվ մեթոդը հնչյունաբանության մեջ» («Субъективный и объективный метод в фонетике») հոդվածում: Համաձայն լինելով Բոդուենի հայացքներին՝ Շչերբան խոսում է հնչյութների մասին որպես «խոսքի հնչյունական պատկերացումների», որոնք առաջանում են ձայնային և բնախոսական գործընթացների ազդեցությամբ, ընդ որում ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ «մենք պետք է միշտ դիմենք տվյալ լեզվով խոսողի անհատական գիտակցությանը, քանի որ մենք ցանկանում ենք իմանալ, թե որ

տարբերություններն է նա օգտագործում լեզվական հաղորդակցման նպատակների համար, և բացի նրա գիտակցությունից մենք այլ աղբյուր չունենք, – ուստի լեզվաբանի համար այդքան արժեքավոր են նույնիսկ բնիկների միամիտ հայտարարություններն ու դիտարկումները – դրանք մեծ մասամբ առավել մեծ արժեք ունեն, քան այն գիտնականների ուսումնասիրությունները, որոնք պատկանում են այլ լեզվական խմբի»: Այստեղ արդեն դրվում է է փորձարկումների գաղափարը, որը լայնորեն սկսում է կիրառվել՝ հնարավորություն տալով ընկալելու լեզվակիրների հնչյունական տարբերությունները (այսպես կոչված, աուդիտորական փորձարկումները), կարևորվում են հնչյութական տարբերությունները, որոնք կատարում են իմաստատարբերակիչ դեր և լսողի՝ մայրենի լեզվի տարբեր հնչյութների ընկալման հարցը (հետագայում այս կախվածությունը սկսեցին բնութագրել որպես հնչյութական մաղ՝ *фонологическое сито*): Վերջին միտքը Շչերբան բացատրում է հետևյալ կերպ. *ռուսերենում бел – белъ բառերում արտասանվում են որակապես տարբեր ձայնավորներ, որոնք ֆրանսերենում համապատասխանում են è [ɛ] և é [e]*, «բայց նորմալ ռուս մարդու գիտակցության համար այդ տարբերությունը, լինելով հաջորդող բաղաձայնի ֆունկցիա և անմիջականորեն չգուգորդվելով իմաստի ինչ-ինչ նրբերանգներով, ամենևին գորություն չունի»: Սակայն իտալերենում նույնիսկ հնչման չնչին տարբերությունը հնարավորություն է տալիս տարբերակել *pesca*-ն (ձկնորսություն) *pesca*-ից (դեղձ):

Իր հետագա քննարկումներում Շչերբան ընդգծում է, որ օտար լեզվի հնչյունների նկարագրության ժամանակ շատ կարևոր է ամրագրել հենց այն միավորները, որոնք տարբերակվում են տվյալ լեզուն կրողների կողմից: Պետք չէ հենվել անձնական ընկալման վրա, քանի որ նույնիսկ սուր լսողություն ունեցող ականջը կարող է լսել ոչ նա, ինչը կա, այլ նա, թե ինչ է սովոր լսելու, որը սեփական մտածողության գուգորդման կիրառման արդյունքն է:

«Ռուսերենի ձայնավորներ» հոդածում այս գաղափարները ներառված են հնչույթի տեսության «Ներածություն» բաժնում: Ըստ հեղինակի՝ իր համար Բոդուեն դե Կուրտենեի գաղափարները հանդիսացել են մեկնարկային կետ, սակայն «պայմանավորված այն հանգամանքով, որ Բոդուենը իր տեսության մեջ ոչ ամենն է ներկայացրել ամբողջությամբ ու լիովին, կարծես միանգամայն տեղին է մանրամասն հետաքննել որոշ հասկացություններ»: Շչերբան, ըստ էության, ստեղծում է յուրահատուկ տեսություն՝ օգտագործելով միայն Բոդուենի՝ հնչույթի հասկացությունը և դրանց հնչյունական տարբերակները՝ դիվերգենտները, որոնք առաջանում են՝ կախված հնչյունական միջավայրից: Նա իր քննարկումը սկսում է խոսքի շղթան առանձին հնչյունների բաժանելով: Օգտագործելով հոգեբանական եզրույթներ՝ լեզվաբանը ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ որոշ տարբեր հեշտությամբ մեկուսացվում են, ինչպես, a, e, s, որի վրա էլ հիմնվում է գրագիտության ուսուցումը: Հոգեբանության տեսանկյունից հնչյունների առանձնացումը պետք է հենված լինի համեմատության և վերլուծության վրա: «Մենք ճանաչում ենք s և n տարրերը can բառում որպես նույնական տարրեր՝ соn բառի սկզբի և վերջի տարրերի հետ և դրանով իսկ գիտակցում ենք միջանկյալ a և o տարրերը»: Հնչույթների առանձնացման այսպիսի ընթացակարգ է նկարագրել Տրուբեցկոյը, որն էլ այժմ օգտագործվում է ժամանակակից հնչութաբանների ճնշող մեծամասնության կողմից: Շչերբան, սակայն, կարծում է, որ հնչյունների առանձնացման համար ավելի հիմնարար պատճառ կա. «իմաստային պատկերացումների տարրերը հաճախ զուգադրվում են հնչյունային պատկերացումների տարրերի հետ. այսպես, l-ն пил, бил, был բառերում տալիս է անցյալ ժամանակի պատկերացում, իսկ a-ն корова, вода բառերում զուգորդվում է սուբյեկտի պատկերացման հետ, u-ն корову, воду բառերում՝ օբյեկտի, և այլն: Այդպիսի զուգորդումների շնորհիվ էլ հնչյունական պատկերացումների տարրերը ստանում են

որոշակի ինքնուրույնություն»: Որպես հնչյունական պատկերացումների տարրերի ինքնուրույնության ապացույցներից մեկը, որոնց համար Շչերբան հետազայում օգտագործում է *հնչույթ* տերմինը, բերվում են զուգադրական կազմավորումներ. tr'as (трас) -ի փոխարեն tr'os` tr'esu-ի դեպքում, s'ek-ի փոխարեն s'ok` s'eku (ceky)-ի դեպքում` ըստ неcy – неc, рpeбy – рpeб մոդելի և այլն: Այսպիսով, ըստ Շչերբայի, հնչաշղթայի գծային (սինտագմատիկ) անդամատումը ձևաբանական անդամատման արդյունք է և ըստ այն հանգամանքի, որ առանձին հնչյունը կարող է հարաբերվել իմաստային միավորի` ձևային հետ (այսինքն, ժամանակակից եզրութաբանության մեջ կատարել կոնստիտուտիվ` հիմնական, ձևավորող գործառույթ): Մա արտացոլված է հնչույթի առաջին պայմանական ձևակերպման մեջ. «Դա տվյալ լեզվի ընդհանուր արտասանական պատկերացումների նվազագույն տարրն է, որն ընդունակ է զուգորդվելու այդ լեզվի մեջ եղած իմաստային պատկերացումներին»: Շչերբան լիովին հրաժարվում էր ընդունել հնչույթի տարբերակումը` հիմնված զուգորդային վերլուծության վրա (հնչաշղթաների համեմատություն` san-son, da-ta և այլն) որը շատ լավ երևում է հետևյալից. «Այս սահմանումից հետևում է, որ չնայած իրար մոտիկ գտնվող լեզուներում , S, K, T , S' և այլն հանդիսանում են ինքնուրույն հնչույթներ, սակայն դա ամենևին էլ պարտադիր չէ. կարելի է պատկերացնել լեզու, որտեղ բոլոր վանկերը բաց են և բաղկացած որևէ բաղաձայնից և a ձայնավորից, և այդպիսի լեզվում հնչույթներ կլինեն sa, ka, ta և այլն , այլ ոչ թե կառանձնանան գիտակցությամբ»:

Շչերբան հնչույթներն անվանում էր «պատկերացում-տեսակներ», մինչդեռ, ըստ էության, խոսքի յուրաքանչյուր հնչույթի համապատասխանում է մի քանի հնչյունական երանգներ (նոր եզրույթով` ալոֆոններ): Միննույն հնչույթի երանգների ամբողջությունը և տարբեր հնչույթների տարբերակումը նա բացատրում էր իմաստային հարաբերություններով: Այն դեպքերում, երբ տարբեր

հնչողություններ չեն կարող գործածվել բառերը տարբերակելու համար, դրանք ներկայացնում են միևնույն հնչույթը, ընդհակառակը, «մենք տարբերակում ենք այն ամենը, որը ունակ է ինքնիրեն զուգորդվելու նոր նշանակության հետ»: Дети և детки բառերում մենք ընկալում ենք t' և t-ն որպես երկու առանձին հնչույթներ, քանի որ одеть/одет, разуть/разут, тук/тюк բառագույգերում դրանք տարբերակում են իմաստները, սակայն մենք առաջին ձայնավորի տարբեր երանգները ընկալում ենք որպես մեկ հնչույթ, քանի որ ռուսերենում չենք կարող գտնել ոչ մի դեպք, որտեղ իմաստի տարբերակումը՝ դիֆերենցիացիան, կաջակցվեր զուտ այդ երկու նրբերանգներով, և այսպիսի դեպք հնարավոր չէ պատկերացնել նույնիսկ ռուսերեն արհեստական բառում: Բոլորովին հակառակ պատկերն ենք տեսնում Ֆրանսերենում, որտեղ de' (մատնոց) և dais (հովանոց) բառերում իմաստի ամբողջ տարբերությունը հենվում է երկու հնչույթների՝ [e] և [ɛ] տարբերակման վրա»: Շչերբան բերում է բազմաթիվ օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ պատճառը ոչ թե հնչյունական տարբերությունների, այլ այդ տարբերությունները զանազան իմաստների հարաբերակցության հնարավորության մեջ է, և այն հնչյունները, որոնք մի լեզվում մեկ հնչույթի նրբերանգներ են, մեկ այլ լեզվում կարող են լինել տարբեր հնչույթներ:

Այն փաստը, որ հնչույթի տարբեր երանգները (ալոֆոնները) հայտնվում են տարբեր հնչյունական պայմաններում, այլ հնչույթների հարևանությամբ, ըստ Բոդուենի բացատրված է այն բանով, որ արտասանության մտադրությունը և կատարումը չեն համընկնում: Շչերբան նշում է, որ հնչույթների երանգները համընկնում են Բոդուենի դիվերգենտների հետ, բայց «հակառակը միշտ չէ, որ արդարացի է, այսինքն ոչ բոլոր դիվերգենտները կլինեն հնչույթի երանգներ, քանի որ Բոդուենի հասկացությունն ավելի լայն է: Այն ներառում է նաև այն դեպքերը, երբ մենք ստուգաբանական զգացողության ներքո

նույնական ենք ընկալում այն, ինչ այլ դեպքերում տարբերակում ենք»:

Շչերբան ենթադրում էր, որ հնչույթը, որպես որոշակի հնչյունական հասկացություն, կարելի է հարաբերակցել իր նրբերանգներից մեկի հետ. «Հնչույթներ են այն նրբերանգները, որոնք գտնվում են շրջապատող պայմաններից նվազագույն կախվածության մեջ»: Այս ձևակերպումը անկասկած անհաջող է, քանի որ հանգում է այն մտքին, որ ոչ բոլոր երանգներն են ներկայացնում հնչույթը, և իբր գոյություն ունի հնչյունների երկու կատեգորիա՝ հնչույթ և նրա նրբերանգները: Շչերբան ի նկատի չունեի այսպիսի մեկնաբանում: Դա երևում է այն բանից, որ հետագայում, ձայնավորները նկարագրելիս, նա խոսում է հնչույթների՝ մի քանի երանգների բաշխման մասին, դրանց թվում ներառելով նաև «տիպային երանգը»: Հետագայում, «Ֆրանսերենի հնչյունաբանություն» աշխատության մեջ հնչույթի և նրա նրբերանգների միջև հարաբերությունը ներկայացվում է որպես ընդհանուրի և մասնավորի հարաբերություն: Հնչույթները հնչյունական տիպեր են, որոնք դիֆերենցացնում են բառերն ու նրա ձևերը, այսինքն՝ ծառայում են մարդկային հաղորդակցման նպատակներին: «Իրականում արտաբերվող տարբեր հնչյունները, լինելով այն մասնավորը, որում իրականանում է ընդհանուրը, կանվանենք հնչույթի նրբերանգներ: Մեկ հնչույթի նրբերանգների մեջ սովորաբար լինում է մեկը, որը տարբեր պատճառներով հանդիսանում է ամենատիպայինը տվյալ հնչույթի համար. այն արտաբերվում է իզոլացված ձևով և հենց դա էլ գիտակցվում է մեր կողմից որպես խոսքային տարր: Մնացած բոլոր նրբերանգները մեր կողմից նորմալ չեն գիտակցվում՝ որպես այդ տիպիկ նրբերանգի տարբերակ...»>> (Շչերբա, 1937):

Ավարտելով իր խոսքը հնչույթի մասին՝ Շչերբան տալիս է հետևյալ վերջնական սահմանումը. «Հնչույթը տվյալ լեզվի հնչյունական նվազագույն պատկերն է, որը կարող է զուգորդվել իմաստային հասկացություններով, տարբերակել բառերը և

առանձնացվել խոսքում՝ առանց խաթարելու բառի հնչյունական կառուցվածքը: Այս սահմանման մեջ նշված են հնչույթի բնութագրման արդեն գրեթե բոլոր բնութագրող մասերը (չկա միայն ճանաչողական ֆունկցիան), որոնք այսօր էլ նշվում են՝ նրա նվազագույն գծայնությունը, որոշակի, հիմնարար(կոնստիտուտիվ) և տարբերակող (դիֆերենցող) ֆունկցիաները:

Ընդգծելով, որ լեզվի հնչյունները նկարագրելիս պետք է հստակ տարբերակել մեկ հնչույթի նրբերանգները (ալլոֆոնները) և տարբեր հնչույթները՝ Շչերբան միաժամանակ նշում է, որ հնչույթների և նրբերանգներ միջև բացարձակ սահման չկա, և «ըստ էության, գոյություն ունեն անկախ և ավելի քիչ անկախ հնչույթներ: Այլ ձայնավորների հետ համեմատած՝ այդպիսի ավելի ոչ ինքնուրույն հնչույթ է ռուսերենի ԵԼ-ն, որը որոշակի պայմաններում կարող էր առանձին հնչույթ չլինել: Հնարավոր է նաև հակառակը. որոշ նրբերանգներ կարող են դառնալ հատուկ հնչույթներ»: Այս նկատառումները հնարավորություն են տալիս լեզվի հնչյունական կառուցվածքի պատմության նկարագրության ելք գտնելու, որը «մի կողմից հանգում է գիտակցության միջից որոշ հնչյունական տարբերությունների անհետացմանը, մյուս կողմից՝ որոշ նրբերանգների գիտակցմանը, նոր հնչույթների առաջացմանը»: Ավելի ուշ, այդ գործընթացները կոչվեցին հնչյունական տարբերությունների դեֆոնոլոգիզացիա և ֆոնոլոգիզացիա:

Այսպիսով, Շչերբայի շարադրանքը պարունակում է հնչութաբանական տեսության հիմնական դրույթները՝ լեզվի հնչյունների նկարագրման նկատմամբ հնչութաբանական և հնչյունաբանական մոտեցման սահմանազատումը, հնչույթի սահմանումը և նրա գործառույթները, հնչաշղթայի տրոհման չափանիշները նվազագույն (ամենակարճ) հնչյունական միավորների, այսինքն՝ սինտագմատիկ տրոհման հիմնավորումը (որը դեռևս անտեսվում է արևմտյան շատ հնչութաբանների կողմից), տարբեր հնչյունների՝ մեկ հնչույթի պատկանելու

հիմնավորումը, այսինքն՝ հնչույթի պարադիգմատիկ նույնացման չափանիշները: Շչերբան գտավ լեզվաբանական չափանիշներ՝ հիմնավորելու հնչույթի տեսությունը, որը տարբերվում էր Բոդուենի հոգեբանական մեկնաբանությունից:

Ռուսերենի ձայնավորների հնչունական բնութագրերը նկարագրելիս Շչերբան հենվում էր տարբեր փորձերի արդյունքների վրա՝ օգտագործելով այն ժամանակ գոյություն ունեցող սարքերը և մեթոդները: Ձայնաբանական բնութագրերը արվում էին կամերտոնի օգնությամբ, ինչպես նաև անմիջական չափման եղանակով, Հերմաննի (Hermann 1890) մեթոդով, կիմոգրաֆիկ կորերի ձևով, որոնք ստացվում էին հատուկ սարքերի օգտագործման շնորհիվ: Արտաբերության որոշման համար օգտագործվում էր պալատոգրաֆիան և անմիջական դիտարկումները, տևողությունը հաշվվում էր կիմոգրաֆիկ ձայնագրություններով:

Դիտարկելով ձայնավորների ավոֆոնները՝ հեղինակը հատկապես անդրադառնում է դրանց առանձնահատկություններին, երբ դրանք գտնվում են փափուկ բաղաձայնների հարևանությամբ: Նա նշում է ձայնավորի հատուկ հնչողությունը, որը հարակից է փափուկ բաղաձայնին՝ ուշադրություն դարձնելով նրա հնչութաբանական նշանակության վրա: «Թվում է՝ a, o, u ձայնավորներից առաջ գտնվող բաղաձայնների «փափկության» մեր ընկալումը պայմանավորված է հիմնականում ձայնավորի միջնալեզվային տարրով, իսկ p, k բառասկզբում՝ բացառապես միայն այդ տարրով»: Այս եզրակացությունը (բազմիցս հաստատված հետագա հետազոտողների կողմից) կարևոր է հնչութաբանական հատկանիշների հարաբերակցության, նրա ընկալման և հնչունական իրականացման առումով, այսինքն՝ հնչունաբանության և հնչութաբանության միջև կապի հատուկ բնույթով:

Շչերբան նկատել է հնչման և արտաբերության էական փոփոխություններ ձայնավորների կրճատման դեպքում, երբ

նրանք գտնվում են փափուկ բաղաձայնների միջև, երբ «լեզուն չի հասցնում ընդունել ճիշտ դիրք», իսկ а, о, u ձայնավորների փոխարեն зять, тѣтя, люди բառերում կարող են ի հայտ գալ հնչյունների այլ տեսակներ: Այս դիտարկումը ևս հետազայում հաստատվեց ձայնաբանական հետազոտություններում:

Անշեշտ ձայնավորների համար Շչերբան նշում է փոքր լարվածությունը, թույլ արտասանությունը և անհստակությունը՝ շեշտակիրների համեմատ: Անշեշտ ձայնավորների որակական ռեդուկցիայի հիմնական պատճառն այն է, որ անշեշտ ձայնավորների տևողությունը շեշտակիրների համեմատ նվազում է. «Փոքր քանակը անմիջականորեն ազդում է որակի վրա, քանի որ խոսքի օրգանները, չհասցնելով ընդունել այն դիրքը, որն անհրաժեշտ է որոշակի որակի արտաբերության համար, մնում են ...կես ճանապարհին.», «անշեշտ ձայնավորների որակական փոփոխությունների անմիջական պատճառը դրանց քանակական ռեդուկցիան է. ձայնավորները որակապես նվազում են շեշտի բացակայության ազդեցությամբ»: Շչերբան հընթացս նշում է, որ անշեշտ վանկերում փափուկ բաղաձայններից և j-ից հետո ոչ о կա և ոչ էլ а, ընդ որում, «ոչ միայն արտասանության մեջ, այլև հոգեբանորեն, այսինքն՝ կա միայն դրա մտադրությունը», իսկ դրանց փոխարեն արտասանվում է а, е: голова = galava, плясать = pl'esat': Այս փաստարկը ըստ էության բանավեճ է Բոդունի հայացքների դեմ, ով համարում էր, որ բոլոր հնչյունները ձևային սահմաններում դիրքի հետ կապված փոփոխություններ կրելով (чередующиеся), մեկ հնչյուրի դիվերգենտներ* են: Այնպես որ, այստեղ Շչերբան բացահայտ կերպով չի համաձայնում իր ուսուցչի հայացքներին:

Շչերբան ձայնավորների քանակական բնութագրերը ուսումնասիրել է հանգամանորեն՝ հաշվի առնելով հնչյունական տարբեր դիրքերը: Շեշտակիր ձայնավորները, ըստ սարքավորումների տվյալների, ընդհանուր առմամբ մեկ ու կես անգամ ավելի տևական են, քան անշեշտները: Հնչյունաբանը նշում է առավել նուրբ տարբերություններ. շեշտակիր

ձայնավորները ավելի տևական են շփական բաղաձայններից առաջ՝ պայթականների հետ համեմատած, ավելի երկարատև են ձայնեղներից առաջ՝ ի համեմատ խուլերի: Նույն օրինակափոխությունն է գործում նաև անշեշտ ձայնավորների դեպքում: Այս տվյալները նման են այլ լեզուներում ստացված տվյալների և արտացոլում են համընդհանուր օրինակափոխություններ:

"Ռուսերենի ձայնավորների» մեջ Շչերբան երկու անգամ անդրադառնում է արտասանության ոճին: Սկզբում խոսելով քիչ թե շատ հստակ խոսքի ընկալման մասին (ընդ որում տարբերությունները կարող են լինել շատ մեծ)՝ նա կարծում է, որ կա բառի մի ընդհանուր հնչյունական պատկերացում՝ հնչյունական բառ-տիպ: Երկրորդ անգամ նա անդրադառնում է այս գաղափարին անշեշտ ձայնավորների հետ կապված, որոնց հնչութական ինքնությունը որոշվում է դանդաղ խոսքում, երբ արտասանության մեջ «արտացոլվում է յուրաքանչյուր բառի կատարյալ հնչյունական պատկերը», որը կախված չէ ուղղագրությունից:

* (дивергенты – [< лат. *divergens, divergentis, расходящийся* в разные стороны] лингв. варианты фонемы, звуки речи, различные по произношению в зависимости от положения в слове, напр. л – л' в словах **СТОЛ** и **СТОЛИК**.)

«Բառի կատարյալ հնչյունական պատկերի» գոյության մասին Շչերբան գրում է ավելի ուշ հատուկ հոդվածում (1915), որտեղ ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ բառի իդեալական, ամբողջական հնչութական կազմը ի հայտ է գալիս հստակ արտասանության պարագայում, օրինակ՝ գրուցակցին ավելի քիչ ծանոթ բառերի օգտագործման, բառի ընդգծման անհրաժեշտության, երեխայի սխալ արտասանությունը ուղղելու դեպքում և այլն: Ավելի ուշ Շչերբան առաջարկում է հատուկ եզրույթ այդ ոճի համար՝ ամբողջական ոճ (полный стиль)՝ ի

տարբերություն խոսակցականի, որտեղ հնչութական տարբերությունները թաքնվում են: Այսպիսով, Շչերբան առաջարկում է լեզվաբանական չափանիշ՝ արտասանության ոճերի տարբերական համար, այն դեպքում, երբ եվրոպական լեզվաբանության մեջ այսպիսի չափանիշ չկար, այլ միայն նկարագրվում էր հաղորդակցման իրավիճակը:

Շչերբան իր հետագա գործունեության ընթացքում քննարկել է ընդհանուր հնչունաբանության շատ տեսական խնդիրներ՝ ներկայացնելով իր տեսակետները Լենինգրադի համալսարանում դասախոսական դասընթացների և սեմինարների ընթացքում: Նրա արտահայտած որոշ գաղափարներ արտացոլվել են առանձին աշխատություններում, որոնք հրատարակվել են ետմահու: Շչերբայի տեսակետները խոսքի հնչունների արտասանության և դասակարգման վերաբերյալ ներկայացվել է նրա աշակերտներից մեկի՝ Մ. Ի. Մատուսևիչի կողմից [Матусевич, 1951], ինչպես նաև հետմահու հրատարակված հոդվածում [Шерб, 1982]:

Շչերբայի շնորհիվ հնչույթի հասկացությունը հայտնի դարձավ Արևմտյան Եվրոպայի լեզվաբաններին: Նրա աշխատանքների շնորհիվ ավարտվեց լեզվի հնչունական կողմի «մինչհնչութաբանական» ժամանակահատվածը և 20-րդ դարի առաջին տասնամյակներից սկսվեց հնչունական հետազոտությունների նոր փուլ:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ «ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔԻ
ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԵՎ ԳՐԱԲԱՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՏԻՊԵՐԸ

Ղուկասյան Սևակ
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Երեմիայի գիրքը բաղկացած է 52 գլուխներից, որում կան զգալի թվով հարցական նախադասություններ: Այսպես, աշխարհաբար տարբերակում կա 146 հարցում, իսկ գրաբարյանում՝ 145, սակայն այնպես չէ, որ աշխարհաբարյան հարցման դիմաց՝ գրաբարյանում միշտ ունենք նույնպես հարցում: Լինում են նաև շեղումներ. մի շարք դեպքերում աշխարհաբար հարցական նախադասության դիմաց գրաբարյանում հանդես են գալիս պատմողական նախադասությունները, հանդիպում են նաև բացականչական նախադասություններ: Այս փոխհարաբերությունը դրսևորում է այսպիսի բաշխվածություն. աշխարհաբարում՝ պատմողական, գրաբարում՝ հարցական; աշխարհաբարում՝ հարցական, գրաբարում՝ պատմողական; աշխարհաբարում՝ հարցական, գրաբարում՝ նույնպես հարցական; աշխարհաբարում՝ բացականչական և պատմողական, իսկ գրաբարում՝ հարցական և բացականչական:

Սույն ուսումնասիրությունը կատարվել է ըստ արևելահայերեն Աստվածաշնչի օրինակների, սակայն զուգահեռաբար տալիս ենք նաև գրաբար տարբերակները, որպեսզի գաղափար կազմենք, թե ինչ տեսք ունեն դրանք հին հայերենում: Ժամանակակից գրական արևելահայերենի մեջբերումները քաղված են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ 1994թ. Աստվածաշնչից, իսկ գրաբարյանը՝ Հայաստանի Աստվածաշնչային ընկերության՝ 1997 թ. հրատարակածից:

Այժմ ըստ համապատասխան հերթականությունների

բերենք այդ դրսևորումները.

Ա. Աշխարհաբարը՝ պատմողական, գրաբարը՝ հարցական.

1. «Բարձրացրո՛ւ աչքերդ, ուղիղ դեպի առա՛ջ նայիր եւ տե՛ս, թէ քո ճանապարհներին ո՛ր ասես որ պղծութեամբ չթաթախուեցիր»- Ամբարձ գաչս քո յուղղութիւն՝ եւ տես. ո՛ր ոչ թաթաւեցար. ի ճանապարհս քո նստար... (Երեմ.,3,2):

2. «... Խայտառակ եղան, որովհետեւ ձախողուեցին, բայց ամօթի զգացում ունեցողների պէս չպատկառեցին եւ իրենց կրած անարգանքի մասին չմտածեցին...»- ասում է Տէրը» - ... Յամօթ եղե՞ն զի պակասեցան. եւ ոչ որպէս ամաչեցեալք ամաչեցին, եւ զանարգանս իւրեանց ոչ առին ի միտ ..., ասէ Տէր: (Երեմ.6,15):

3. «...Ականջ դրէք եւ լսեցէք. այդ բանը չեն ուզում խոստովանել, մարդ չկայ, որ զղջայ իր չարութիւնների համար եւ ասի, թէ ինչ գործեցի»-... Ունկն դիր եւ լուարուք ոչ այդպէս խօսին՝, եւ ոչ գոյ մարդ որ զղջանայ ի չարեաց իւրոց, եւ ասէ թէ Չի՞նչ գործեցի...:(Երեմ.8,65):

4. «...Ով իմաստուն այր է, թող հասկանայ այս բանը, եւ ում տրուած է Տիրոջ բերանի խօսքը, թող նա մեզ պատմի, թէ ինչի համար կորստեան դատապարտեաց երկիրը...»-...Ով այր իմաստուն՝ եւ ի միտ առցէ զայս, եւ առ ո՛ւմ բան բերանոյ Տեառն, պատմեցէ մեզ թէ վասն էր կորեաւ երկիր...: (9,12):

5. «Դու մահ պիտի գտնես, որովհետեւ Տիրոջ անունից մարգարէացար եւ ասացիր, թէ այս Տունը պիտի դառնայ Մելումի նման... - ... Չի՞ մարգարէացար յանուն Տեառն եւ ասացեր՝ թէ Իբրեւ զՄելումն եղիցի տունս այս... (26,9):

6. «...Իսկ դու քեզ համար մեծ-մեծ բաներ եւ խնդրում. մի՛ խնդրիր, որովհետեւ, -ասում է Տէրը,- ահա իւրաքանչիւր մարմնի եւ չարիք եմ բերելու, իսկ քո անձը ամենուրեք... քեզ եմ պարգեւելու իբրեւ փրկութիւն»... Եւ դու խնդրես քեզ մեծամե՞ծս. մի խնդրէր. զի ահա եւ ածից չարիս ի վերայ ամենայն մարմնոյ, ասէ Տէր, եւ տաց քեզ զանձն քո ի գիւտս յամենայն տեղոց ուր եւ

երթայցես անդր: (Երեմ.,45,5):

7. «...Այսպես է ասում Զօրութիւնների Տէրը. «Այլեւս իմաստութիւն չկայ թեմանում, հանճարեղները խելակորոյս եղան. գնաց նրա իմաստութիւնը, ծաղրի առարկայ դարձաւ նրա երկիրը...»- Ի վերայ Եդովմայ այսպէս ասէ Տէր զօրութեանց. Ո՞չ եւս գոյ իմաստութիւն ի թեման. կորեա՛ւ խորհուրդ ի հանճարեաց. գնա՛ց իմաստութիւն նոցա: Խաբեցաւ տեղի նորա... (Երեմ.,49,7):

Բ.Աշխարհաբարը՝ հարցական, գրաբարը՝ պատմողական.

1. «...Չէ՞ որ այն օրը, երբ եւ նրանց հանեցի Եգիպտացիների երկրից ու մինչեւ այսօր, ամէն առաւօտ կանուխ ձեր հայերին խստագոյնս խրատեղի...»-...Ձի վկայութեամբ եղի վկայութիւն հարցն ձերոց յաւուրն հանելոյ իմոյ գնոսա յերկրէն Եգիպտացոց մինչեւ ցայսօր. կամխել ընդ առաւօտս եւ դնել վկայութիւն... (Երեմ.,11,7):

2. Ո՞վ Զօրութիւնների Տէր, որ արդար ես կշռում ... այնպէս արա, որ տեսնեմ քո վրէժխնդրութիւնը նրանցից. չէ՞ որ իմ աղերսանքը ես քեզ յայտնեցի: - Եւ Տէ՛ր զօրութեանց, որ կշռես զիրաւունս..., տեսից առ ի քէն զվրէժխնդրութիւն ի վերայ նոցա. զի առ քեզ յայտնեցի զաղերս իմ (Երեմ.,20,12):

3. «Այսպէս է ասում Տէրը «Եթէ ցերեկուայ ու գիշերուայ, երկնքի ու երկրի մասին իմ ուխտը չեմ հաստատել, ապա Յակոբի եւ իմ ծառայ Դաւթի սերունդը կ'անարգե՞մ, Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի սերնդի վրայ նրա սերնդից իշխան չե՞մ դնի... « - ...Այսպէս ասէ Տէր. Եթէ զուխտ իմ զտուրնջեան ու զգիշերոյ եւ երկնից եւ երկրի հաստատութեամբ ոչ կարգեցի, Ապա եւ զգաւակն Յակոբոյ զԴաւթի ծառայի իմոյ անարգեցից, չառնուլ ի գաւակէ նորա իշխան ի վերայ գաւակին Աբրահամա եւ Իսահակայ եւ Յակոբայ... (Երեմ., 33,25-26):

4. «... Եւ Յուդայի երկրի բոլոր մնացորդները, որ բնակւում են Եգիպտացիների երկրում, պիտի իմանան, թէ ում խօսքն է

հաստատուելու՝ ի՞մը, թե՛ իրենցը...»-...Եւ ապրեալքն ի որոյ դարձցին յերկրէս Եգիպտացոց յերկիրն Յուդայ՝ արք սակաւք թուով. եւ ծանիցեն ամենայն մնացորդքն Յուդայ որ բնակեալ են յերկրիդ Եգիպտացոց, թե՛ ո՛յր քան կայ, ի՛մ թե՛ նոցա (Երեմ., 44, 8):

5. Լսեցէ՛ք, ուրեմն Տիրոջ խորհուրդը, որ նա խորհել է եղոմայեցիների մասին... «Միթէ՛ չեն խփում հօտի վերջին ոչխարներին, որ գնան, կանգնած չմնան, եւ հօտը չցրուի: ... » - Վասն այդորիկ լուարուք զխորհուրդ Տեառն գոր խորհեցաւ ի վերայ Եղովմայեցոց. ...եթէ ոչ հարցին յետինք ոչխարացն, բայց եթէ հաւիտեան կայցեն, քակտումն նոցա (Երեմ. 49 20)

6. «Այն օրերին եւ այն ժամանակ,- ասում է Տէրը,- պիտի գան Իսրայելի որդիները, նրանք եւ Յուդայի երկրի որդիները՝ միասին, պիտի շրջեն ու լալով գան դէպի իրենց Տէր Աստուածը... . չէ՞ որ ուխտը յաւիտենական է, եւ դրանք չպիտի մոռացուեն:...» - ... Յաւուրսն յայնոսիկ եւ ի ժամանակին յայնմիկ, ասէ Տէր, եկեացեն որդիքն Իսրայելի, ինքեանք եւ որդիքն Յուդայ ի միասին, շրջեսցին եւ լալով գայցեն առ Տէր Աստուած... զի ուխտ յաւիտենից է, եւ ոչ մոռացին՝ (Երեմ. 50 4-5):

7. «...Չէ՞ որ Աստուած հատուցող է, Տէրն ինքը պիտի հատուցի նրա պատիժը եւ սաստիկ հարբեցնի նրա զօրավարներին ու նրա իմաստուններին, նրա իշխաններին, նրա զօրագլուխներին ու նրա զօրաւոր մարդկանց... » -....զի Աստուած հատուծիչ է, ինքն Տէր հատուցանէ նմա զհատուցումն: Եւ արբեուցէ արբեցութեամբ զզօրավարս նորա եւ զիմաստունս նորա, զիշխանս նորա եւ զզօրագլուխս նորա եւ զզօրաւորս նորա... (Երեմ., 51, 56-57):

Գ. Աշխարհաբարը՝ հարցական, գրաբարը նույնպէս հարցական.

1. Տէրը, խօսքն ինձ ուղղելով, ասաց. «Ի՞նչ ես տեսնում, Երեմիա՛» - Եւ եղեւ քան Տեառն առ իս եւ ասէ, Ձի՞նչ տեսանես, Երեմիա (Երեմ., 1, 11):

2. Չասացին էլ՝ «Ո՞ւր է՝ Տէրը, որ մեզ հանեց Եգիպտացիների

երկրից եւ առաջնորդեց մեզ անապատում, անծայր ու անուղի, անջուր ու անպտուղ երկրում, որտեղով մարդ չէր անցել եւ ուր չէր բնակուել մարդու որդին:...» -Եւ ոչ ասացին՝ ո՞ւր է՝ Տէր որ եհան զմեզ յերկրէն Եգիպտացոց, եւ առաջնորդեաց մեզ յանապատին, յանբաւ եւ անկախ եւ անջուր եւ անպտուղ երկրին եւ ի ստուերս մահու, յերկիր՝ ընդ որ ոչ անց մարդ, եւ ոչ բնակեաց ի նմա որդի մարդոյ. ... (Երեմ., 2, 6):

3.«...Արդ, անցէ՛ք քետիմացիների կղզիներն ու նայեցէ՛ք, մա՛րդ ուղարկեցէք նաեւ Կեդար ու լա՛ւ տեղեկացէք, տեսէ՛ք եղե՛լ է այդպիսի բան. ազգերն իրենց աստուածներին փոխե՛լ են, թէեւ նրանք աստուածներ էլ չեն, բայց իմ ժողովուրդն իր փառքը փոխանակեց նրանց հետ, որոնցից օգուտ չի ունենալու: ... » -Արդ անցէք ընդ կղզիս Քետիմցոց եւ տեսէք, եւ ի Կեդար առաքեցէք եւ իսելամուտ եղերուք յոյժ, եւ տեսէք եթէ եղե՛ւ այսպիսի ինչ. եթէ փոխեցի՞ն ազգին զաստուածս իւրեանց, եւ նոքա ոչ են Աստուածք. եւ ժողովուրդ իմ փոխեաց զփառս իւր, ուստի ոչ ոգտիցին (Երեմ., 2, 10-11):

4. Լսեցէ՛ք Տիրոջ պատգամը, այսպէս է ասում Տէրը. «Միթէ եւ Իսրայելի համար անապա՞տ եղայ կամ աւեր ու խոպանացեալ երկի՞ր, որ իմ ժողովուրդն ասաց «Անտերունչ կը շրջենք, բայց քեզ մօտ չենք գայ... » - Լուարուք զպատգամ Տեառն. այսպէս ասէ Տէր . միթէ անապա՞տ եղէ տանդ Իսրայելի, կամ աւեր երկիր խոպանացեա՞լ. զի՛ ասաց ժողովուրդ իմ, Անտերունչք շրջեսցուք եւ առ քեզ ոչ եկեսցուք (Երեմ., 2, 31):

5. «...Բայց այն օրն էլ,- ասում է քո Տէր Աստուածը, ձեզ ձեր վախճանին չեմ հասցնելու. եւ երբ ասելու լինեն՝ «Մեր Տէր Աստուածն այս ամէնն ինչն է՛ւ արեց մեզ», կ'ասես նրանց «Քանի որ ինձ լքեցիք եւ ձեր երկրում ծառայեցիք օտար աստուածներին. այդպէս էլ օտարներին էք ծառայելու մի երկրում, որը ձերը չի լինելու» -Եւ եղիցի յաւուր յայնմիկ ասէ Տէր Աստուած քո՞՛ ոչ արարից զձեզ ի վախճան: Եւ եղիցի յորժամ ասիցէք՝ վասն է՞ր արար Տէր Աստուած մեր մեզ զայս ամենայն. ասիցես ցնոսս, փոխանակ զի թողէք զիս եւ ծառայեցէք աստուածոց օտարաց

յերկրի ձերում, նոյնպէս ծառայեսցիք օտարաց յերկրի՝ որ ոչ ձերիցէ (Երեմ., 5, 18-19):

Դ. Աշխարհաբարը՝ հարցական, գրաբարը՝ բացականչական.

1.«Ո՞վ կը տար իմ գլխին ջուր եւ իմ աչքերին՝ արտասուքի աղբիւրներ, որ ես գօր ու գիշեր ողբայի այս ժողովրդին եւ իմ ժողովրդի դստեր վիրաւորներին:... » - Ո՞ւտայր գլուխ իմ ջուր, եւ գաչս իմ աղբերս արտասուաց, եւ լայի գժողովուրդս գայս՝ գտիւ եւ զգիշեր եւ զվիրաւորեալս դստեր ժողովրդեան իմոյ Երեմ.- 9, 1):
2.«Ո՞վ կը տար ինձ անապատում մի խղճուկ օթեւան:...» - Ո՞ւտայր ինձ յանապատի դոյզս օթեւանս... (Երեմ.- 9, 2):

Ե. Աշխարհաբարը՝ բացականչական և պատմողական, գրաբարը՝ հարցական և բացականչական.

«...Ինչպէ՛ս կործանուեց, ողբացէ՛ք, ինչպէ՛ս դարձրեց նա իր թիկունքը. ամաչեց, ծաղրելի դարձաւ...» - Զիա ըդ փոփոխեցաւ. ողբս առէք. զիա ըդ դարձոյց զթիկունս իւր, ամաչեաց եւ եղեւ ի ծաղր... (Երեմ., 48, 39):

Ghukasyan Sevak –Types of communication of “The Book of the Prophet Jeremiah” in Ashkarabar and Grabar Variants. – These types in the indicated variants are discussed only on the basis of interrogative sentences. Communication types are distributed as follows: a) Ashkarabar – declarative, Grabar – interrogative. b) Ashkarabar – interrogative, Grabar – declarative. c) Ashkarabar – interrogative, Grabar – also interrogative. d) Ashkarabar – interrogative, Grabar – exclamatory. e) Ashkarabar – exclamatory and declarative, Grabar – interrogative and exclamatory.

The greatest number of interrogative sentences are of type b), then - a), and other types are represented by one or two examples. Note the number of interrogative sentences – 141 in Ashkarabar and 148 in

Grabar.

Гукасян Севак – Коммуникативные типы “Книги Иеремии” библии на ашхарабаре и грабаре. В статье исследуются типы коммуникации в вариантах “Книги Иеремии” библии на ашхарабаре и грабаре. Эти типы в указанных вариантах рассмотрены только на основе вопросительных предложений. Коммуникационные типы распределены следующим образом: а) ашхарабар – повествовательный, грабар – вопросительный. б) ашхарабар – вопросительный, грабар – повествовательный. в) ашхарабар – вопросительный, грабар – также вопросительный. г) ашхарабар – вопросительный, грабар – восклицательный. д) ашхарабар – восклицательный и повествовательный, грабар – вопросительный и восклицательный.

Из перечисленных наибольшее количество случаев по типу б), затем - а), а остальные типы представлены двумя и одним примерами. Заметим, что в ашхарабаре 141 вопросительное предложение, а в грабаре -148.

2015

ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՂԴԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԸ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Հովսեփյան Լիանա

Բանաս. գիտ. դոկտոր
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Գրաբարում և ընդհանրապես հայերենում խոսքի մասերը, բացի բայերից, իրենց այսպես կոչված բառաբանային ձևով քերականորեն նշույթավորված չեն: Ածական անունը նույնպես չունի խոսքիմասային պատկանելությունը որոշող ձևաբանական հատկանիշ, ավելին, գրաբարում առկա է անունների մի զգալի քանակություն, որոնք կարող են հանդես գալ ն՝ որպես գոյական, ն՝ որպես ածական: Այդուհանդերձ, գրաբարի քերականական համակարգում ածականները որպես ինքնուրույն խոսքի մաս առանձնացնելու հիմքը ոչ միայն նրանց իմաստային կողմն է՝ առարկայի որակական կամ հարաբերական հատկանիշ ցույց տալը, այլև մի շարք ձևական չափանիշներ՝ համեմատության աստիճանների առկայությունը, հոլովման համակարգի միայն իրենց բնորոշ առանձնահատկությունները, ինչպես նաև շարահյուսական գործառույթների շրջանակը: Որպես ածականների խոսքիմասային ցուցիչ բաղադրյալ բառերի դեպքում կարող է հանդես գալ նաև բառակազմական հատկանիշը՝ որոշակի ածականակերտ ածանցների և բառաբարդման որոշակի կաղապարների տեսքով:

Նախաձանցներից ակնհայտ ածականակերտ գործառույթ ունի ժխտական նախաձանցների իմաստային խումբը, բացի չ-աձանցից, որը կարող է դրվել զանազան խոսքի մասերի (այդ թվում նաև ածականների) վրա որպես տրամաբանական բացասման ցուցիչ՝ *չաստուած*, *չքահանայ* (գոյ.), *չբարի* (ած.),

չմարդկապես (մակր.) և այլն, և խոսքի մասերի փոխակերպիչի դեր չի կատարում: Մյուս ժխտականները՝ **ան-, ապ-, դժ-, տ-**, տարբեր խոսքի մասերից կազմում են ժխտական կամ բացառողական իմաստով ածականներ: Ինչ վերաբերում է ածականակերտ վերջածանցներին, ապա դրանցից ամենակարևորները իրենց փոխակերպական արժեքով կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով (օրինակների վերևում դրված Գ, Մ, Դբ ցուցիչները նշանակում են, որ տվյալ բառը խոսքիմասային երկարժեքություն ունի):

Ածականակերտ վերջածանցներ	Անփոխակերպ կառավար	Փ ո խ ա կ ե ր պ ա կ ա ն կ ա դ ա պ ա ր ն ե ր				
		Ա→Ա	Գ→Ա	Թ→Ա	Ղ→Ա	Բ→Ա
-ագար	-	խելագար	-	-	-	-
(ա)զին	զուարթագին	ուժզին	-	-	տառապագին	-
-ագոյն	ագահագոն	առիւծագոյն	-	իքնագոյն	իմացագոյն	զկնիագոյն ^Մ
-ագան	սրբագան	աստուածագան	-	ամենագան	-	-
(-ած)	-	-	-	-	կատաղած	-
- ածոյ	-	-	-	-	կոփածոյ	-
ուածոյ	-	-	-	-	մանուածոյ	-
-ակ	անուշակ	կամակ	-	-	բուժակ	-
-ական	ագատական	արքայական	երկական	Իմոյական	լավական ^Գ	յանկարական
(-կան)	-	բժկան	-	-	-	-
-ակար	-	վնասակար	-	-	-	-
-ային	ամբար-	աշնա-	-	մերային	-	-

	ձային	նայ ին				
(-այն)	-	-	միայն ^Մ	ամենայն	-	-
-անի	-	լեզուանի	-	-	-	-
անուտ	-	-	-	-	հոսանուտ	-
-ատ	կրճատ	ականջատ	-	-	-	-
արեն/-երեն	յունարեն	արենսերեն	-	-	-	-
-ացու	սպականացու	մահացու	-	-	-	-
-աւետ	ուրախաւետ	ծաղկաւետ	-	-	-	-
-աւոր	-	կամարաւոր	եաթնաւոր	-	զգայաւոր	-
-եալ	բարձրեալ	-	-	-	անիծեալ ^{ՉԲ}	-
-եայ	-	կաշեայ	-	-	-	-
-եան	-	եղեմեան	հագարեան	-	-	-
-եղ	-	հանճարեղ	-	-	-	արագեղ
-եղէն	-	արծաթեղէն	-	-	-	-
-ենի	քաղցրենի	հայրենի	-	-	-	-
-եցիկ	-	զեղեցիկ	-	-	-	-
-ի ¹	դալարի	ազգի	-	-	-	-
-ի ²	-	-	-	-	ըղձալի ^{ՉԲ}	-
-իկ	հանդարտիկ ^Մ	տոհմիկ	-	-	մուրացիկ ^Գ	-
-ին	դժուարին	առաւատին	(երեքին ^Թ)	իւրոյին	-	-
-իչ	-	-	-	-	գաւրացուցիչ	-
-կէն	-	կոճկէն	-	-	-	-
-կոտ	դանդաղկոտ	վախկոտ	-	-	գայրացկոտ	-
-նի	յայտնի	-	-	-	-	գաղտնի ^Մ
-ող	աջող	-	-	-	-	-
-ոյ	աջոյ	ազդոյ	-	-	եփոյ	ստաջոյ

-ոտ	հիւանդոտ	խնամոտ	-	-	թափառոտ	-
-ու	-	-	-	-	հատու	-
-ուկ	ողորմուկ	-	-	-	առուկ	-
-ուն	խաղաղուն	խոհուն	-	-	աճուն	-
-ունակ	նման- ունակ	նման- ունակ	քառ- ունակ	մեր- ունակ	բնականակ	նախ- ունակ
-ունի	ծերունի ^օ	արքունի	-	-	-	-
-ուչ	-	-	-	-	վայելուչ	-
-ուտ	ծանծա- դուտ	ապառա- ծուտ	-	-	-	-

Սակայն նույնիսկ բուն ածականակերտ ածանցներով կազմված բառերը կարող են ենթարկվել հետագա գոյականացման կամ գործածվել փոխանվանաբար, այնպես որ ածականների որոշման միջոցը դառնում է նրանց հիմնական շարահյուսական գործառույթը որոշչային պաշտոններում: Ածականը գրաբարում թեքվող (հոլովվող) խոսքի մաս է, հետևաբար օժտված է անվանական՝ հոլովի, թվի և առկայացման քերականական կարգերով, սակայն այդ կարգերն ունի ոչ թե՛ ինքնակա կերպով, այլ որպես առգոյականական խոսքի մաս՝ արտահայտելով այն գոյականի քերականական կարգերը, որի որակական բնութագրմանն է ծառայում: Սա հատկապես վերաբերում է առկայացման կարգին, երբ ածականն իր վրա է վերցնում գոյականի հոդերը (օր.՝ *շամբշտոն Շամիրամ*):

Բուն ածականին հատուկ քերականական կարգն է բաղդատականության (համեմատականության) կարգը, որը սակայն հայերենում, ներառյալ և գրաբարը, լիակատար ձևաբանական արտահայտություն չունի և կարող է դրսևորվել ինչպես հատուկ մասնիկներով, ուղեկցող բառերով, այնպես էր շարահյուսական որոշակի կառույցներով՝ նկարագրական եղանակով: Բովանդակության պլանում ևս համեմատականության կարգը հստակ հակադրություններ չի ստեղծում ըստ աստիճանների (դրական, բաղդատական, գերադրական): Կարելի է ասել, որ համեմատականության

իմաստային համակարգում փաստորեն գործ ունենք տվյալ հատկանիշի առավել կամ պասս չափի դրսևորման հետ համեմատությամբ կամ առանց համեմատության: Ըստ այդմ կարելի է առանձնացնել երկու իմաստայթ և համապատասխանաբար՝ երկու ենթակարգ՝ բուն համեմատականություն (հատկանիշի տարբեր չափերի առկայություն երկու առարկաների, կամ միևնույն առարկայի երկու վիճակների մեջ) և սաստկականություն՝ հատկանիշի դրսևորման ավելի բարձր աստիճանի առկայություն մեկ առարկայի մեջ առանց համեմատության: Ընդ որում, երկու ենթակարգում էլ պայմանականորեն հնարավոր է տարբերակել երեք աստիճան՝ դրական, բաղդատական և գերադրական՝ համեմատականության ենթակարգում և դրական, սաստկական և բացարձակ՝ սաստկականության ենթակարգում: Այսպիսի բաժանման պայմանականությունը բխում է նրանից, որ այս առանձնացված աստիճանները արտահայտության պլանում ձևական հստակ հակադրություն չունեն և միևնույն ձևը տարբեր խոսքաշարերում կարող է հանդես գալ մե՛րթ որպես բաղդատական, մե՛րթ որպես գերադրական, մե՛րթ որպես սաստկական կամ բացարձակ:

Առավել հստակ դրսևորում ունի համեմատականության ենթակարգի բաղդատական աստիճանը, թեև հիմնականում կազմվում է նկարագրական եղանակով՝ ածականի դրական (անփոփոխ) աստիճանի և **քան** բառի կապակցությամբ, ընդ որում, համեմատվող առարկայի անվանումը դրվում է **զ** նախդիր ունեցող որոշյալ հայցականով՝ *բազում եղեն, քան զհեր զլիտյ իմոյ 1 . հատու քան զամենայն սուր երկսայրի. հզաւր է բորբոքումն նորա քան զհրոյ. թեթև քան զաւղ* և այլն: Բաղդատական աստիճանը կարող է արտահայտվել նաև **ևս**, **առաւել** բառերի ուղեկցությամբ՝ կա՛մ առանձին (*երանելի ևս էր. զևս հնարաւորն. զևս գերազանցն. լաւ ևս լիցի առաւել ևս զիտուն*), կա՛մ **քան+զ** կապակցության հետ (*մեծ ևս քան զայս*): Բառակազմական եղանակով բաղդատական աստիճանը կազմվում է **-ազոյն**

ածանցի հավելումով ածականական հիմքին՝ *համեստ հայեցուածովք, համեստագոյն* ևս ձայնիւ. ուսուցանէր մանկագոյն աշակերտացն. պարտէր ընչեղագոյն գոլ քան զարքայ. առաւել քան զիս էին քեզ հարագատագոյնք. ամրագունի ևս տեղոյ էլեալ ի խնդիր. քան զՀերակղէս, ասէ, ևս զաւրագոյն էր. ևս լաւագունի, քան զինքն. և ևս առաւելագոյն էր ոսկւով. չեմ անմտագոյն քան զքեզ. մի թէ իմաստնագոյն իցես քան զԴանիէլ. որոց խառնուած առողջագոյն զհաստատութիւն կենաց գործէ. նախ խոնարհագոյն և առակախաւս բանիք ... իմաստացուցեալ ևն:

Ինչպէս երևում է օրինակներից, **-ագոյն** ածանցի առկայությամբ էլ բաղդատական աստիճանի կազմությանը մասնակցում են **քան+գ** նախդիր կառույցը և **առաւել, ևս** բառերը՝ սաստկացնելով համեմատականության իմաստը, որը V դարում բավարար չափով չէր կարող արտահայտվել միայն ագոյն ածանցով, քանի որ վերջինս բազմագործառական էր և լիովին «մասնագիտացված» չէր բաղդատականության արտահայտման համար: Մասնավորապէս, **-ագոյն** ածանցով երբեմն կազմվում էր նաև գերադրական աստիճանը, որ պարզ է դառնում խոսքաշարից, օր.՝ *և թէպէտ և արհամարհելի էին առ նախանձու, սակայն լաւագոյնք էին և երևէին յամենայնի. քան զթուլագոյնս ի թագաւորաց. ոմանս լաւագոյնս յաշակերտաց իւրոց. և առաւելագոյն հնագանդեալ նմա ըստ աւրինաց Աստուծոյ. բայց ոչ միայն զմեծամեծսն, այլ առաւել ևս զթերթնագոյնս բարձրագոյնս՝ անարգամեծարն Քրիստոս ... յարգէ. ինքն Քրիստոս ոչ անդէն ի սկզբանն զբարձրագոյնսն և անհասագոյնսն որոտաց ևն:* Ավելի հաճախ, սակայն, **-ագոյն** ածանցը պարզապէս ածականակերտ արժէք ունի՝ սաստկականության երանգով և նշում է հատկանշի մեծ չափի առկայությունն առանց համեմատության՝ *որք ի պատուականագոյն* («շատ պատվական») *ազգն երթեալ էին. իսկ նորա միանգամայն զճշմատագոյնն* (=զճշմարիտն) *առաջի եղեալ. քանզի տեղեկագոյնք* («լավ տեղյակ») և *ընդելականք էին հոգւոյն տունն իսրայելական. ի վարս և ի գնացս խոհեմագոյն* («շատ խոհեմ») և *հանճարեղ իրատուք. գորմէ պարտ էր մեզ*

հրաշափառագուննիւ անցանել բանիւ. վասն որոյ թողեալ այնուհետև զպերճագոյն հանդերձս, խարազնագգեստ եղեալ. զի թէպէտ և ծերագոյն («բավական ծեր») էր՝ երիտասարդապէս հարդարեաց և մղեաց զձակատն. բարձրագոյն («շատ բարձր») բարբառով ի փառաւորութիւն դառնայ. մի ոք հանդգնագոյն («չափազանց հանդուգն») վասն ասացելոցն զմեզ համարեսցի. վասն խեցքեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք էին. որք էին սուրբք և զուարթագոյնք. ծանրագոյն («խիստ ծանր») պատուհասիք ի բանդս, ի տանջանս, ի գելարանս. արք զգաստք և զգուշագոյնք նն:

Որ **-ագոյն** ածանցը վերըբերված օրինակներում բաղդատական կամ գերադրական աստիճանի իմաստ չունի, այլ պարզապէս հատկանշի մեծ չափ է նշանակում, ցույց են տալիս և միննույն նախադասության կամ խոսքաշարի մեջ առկա մյուս ածականները՝ դրված ուղիղ ձևով, այսպէս կոչված դրական աստիճանով: Դրանք մեծ մասամբ արտահայտչական նպատակադրումով բերված հոմանիշների շարքեր են, որոնց մեջ **-ագոյն** ածանցով ձևերը չեն առանձնանում որպէս հատկապէս համեմատականության աստիճանի դրսևորում. հմմտ.՝ *ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեան, առաւել զգազանամիտ, զվայրենագոյն, զճիւղաբարոյ կողմանցն. ճառս յաճախագոյնս, դիրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս* և այլն:

Շատ դեպքերում էլ **-ագոյն** ածանցը հավելուրդային արժեք ունի, քանի որ սերող հիմքն ինքնին արտահայտում է տվյալ հատկանիշը, հատկապէս տեղանիշ ածականների և մակբայների մեջ՝ **հեռագոյն ի նմանէ իբր քառասուն հեռագոյն ասպարիսաւ. բացագոյն ի քաղաքէ նորին աւելի քան երեք հարիւր ասպարիսաւ ի հիւսիսոյ. սակաւ ինչ բարձրագոյնյ** երկրէ. **ներքսագոյն քան զպարիսպն. նմանագոյնս որպէս ինձ՝ և քեզ գործէ վտանգս. ապա թէ այլագգագոյն ինչ խորհիս համատեալ:** Կազմում է նաև տեղի և ժամանակի ածականներ ու մակբայներ՝ *վերագոյն, վաղագոյն, յառաջագոյն, կանխագոյն, նախագոյն* և այլն, որոնք համեմատականության երանգ չունեն (**-ագոյն** ածանցը հանդէս է

գալիս որպես *-ապէս* ածանցի հոմանիշ՝ *նմանապէս, այլապէս, նախապէս, կանխապէս* և այլն): Բուն իմաստով գերադրական աստիճանի գոյությունը գրաբարում, ինչպես նշվեց, պետք է ընդունել պայմանականորեն: Գրաբարի քերականություններում ընդունված է նշել, որ ածականների գերադրական աստիճանը կազմվում է *յոյժ, կարի, սաստիկ, անհնարին, յետին, երիցս* և նման բառերի օգնությամբ, նկարագրական եղանակով՝ *զկահ և զկարասի բազում սաստիկ յոյժ. և էր նա գեղեցիկ յոյժ տեսանելով. կարի զարաւոր են յոյժ. մի կարի արդար լինիր. կարի յոյժ ուրախ եղէ. որք էին յոյժ տղայք. ի լեառն մի բարձր յոյժ. յետին չար է, քան զամենայն չարիս. երիցս երանելեաց նախահարց առաքինութիւնս ևն:*

Ինչպէս տեսնում ենք, այստեղ ևս առարկայի հատկանիշը հիմնականում առնվում է առանց այլ առարկաների հետ ունեցած հարաբերության: Փաստորեն նշվում է միայն տվյալ հատկանիշի առանձնահատուկ, բարձր չափի առկայությունը այսպես կոչված էլատիվի՝ հատկանիշի բացարձակ չափի կամ էքսցեսիվի՝ հատկանիշի ավելցուկության արժեքով՝ հատկապես հուզաարտահայտչական բնույթի խոսքաշարերում: Կարելի է ասել, որ իրականում գրաբարի ածականների մեջ գերադրականության կամ սաստկականության իմաստն արտահայտվում է առավելապես բառային և ոչ թե քերականական միջոցներով:

Բառակազմական (ածանցման) միջոցով գերադրականը կազմվում է **-ագոյն** ածանցի օգնությամբ, ինչպէս ցույց տրվեց վերը բերված օրինակներով. հմմտ. նաև՝ *քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանց այնոցիկ և ամենեցուն քաջ*: Օրինակը ցայտուն կերպով վկայում է, որ գերադրականության իմաստը պայմանավորված է ոչ այնքան ածականի բառաձևով (մի դեպքում՝ **-ագոյն** ածանցով, մյուս դեպքում՝ պարզ *քաջ* հիմքով), որքան շարահյուսական կառուցվածքով և *ամենեքին (ամենեցուն, ամենեցունց)* բառի առկայությամբ: Թերևս այս կառույցի ազդեցությամբ գրաբարի

հետագա շրջանում ձևավորվում է գերադրականության արտահայտման ևս մի բառակազմական միջոց: *Ամեն-* արմատը բաղադրությունների մեջ սկսում է վերածվել ածանցակերպի՝ «բոլորից ավելի» իմաստով (*ամենաբարի, ամենաբարձր*), սակայն *ամեն-* սկզբնաբաղադրիչով V դարից վկայված կազմությունները դարձյալ բացարձակ գերադրականի իմաստ ունեն՝ առանց համեմատության, այսինքն՝ *ամենաբաղձ դաշտն Այրարատոյ նշանակում է «խիստ բաղձալի, հույժ ցանկալի»* կամ՝ «ամեն բանով բաղձալի» կամ նույնիսկ՝ «ամենքի համար բաղձալի» և ոչ թե «ամենից ավելի բաղձալի», *ամենաբարի թագաւոր* «ծայրագոյն բարի» [բացատրությունը ըստ ՆՀԲ-ի], *հնազանդեալ ըստ ամենահեշտ լծովն, որ թեթն է առաքինեաց* «կարի հեշտին և հեշտալի, քաղցր յոյժ» [ՆՀԲ]:

Գերադրականության որոշ երանգ են պարունակում նաև ածականների կրկնությամբ կազմված բարդությունները՝ *մեծամեծ, մանրամանր, ջերմաջերմ, դառնադառն կամ վերլուծական բաղադրությունները՝ յոյժ յոյժ, քաջ քաջ, ամուր ամուր* և այլն:

Նկարագրված առանձնահատկությունները թույլ են տալիս ասելու, որ դասական գրաբարում ածականների բաղդատականության կարգը լիակատար քերականացված չի եղել և դրա իմաստագործառական դրսևորումները միջանկյալ դիրք են գրավել քերականական և բառակազմական մակարդակների միջև:

Liana Hovsepyan – Category of Degrees of Comparison in Classical Old Armenian.– The parts of speech in Armenian (including classical Old Armenian as well), with the exception of verbs, are not grammatically marked. The adjectives also have no morphological formants indicating this part of speech. The forms of nouns and adjectives, adjectives and adverbs are often similar. However there are some formal characteristics, e.g. degrees of comparison, for distinguishing adjectives as a separate part of speech. Two sub-

categories can be differentiated in the category of comparison: the sub-category of comparison and the sub-category of intensity. In both cases the grammatical meanings can be expressed by morphological and/or word-forming means. This fact signifies that the category of degrees of comparison in Old Armenian had not been completely grammaticalized and occupied intermediate place between the grammatical and the word-formative levels.

Овсеян Лиана – Категория сравнительности прилагательных в классическом древнеармянском языке.– В армянском языке (включая древнеармянский) так наз. исходные формы частей речи, за исключением глаголов, морфологически немаркированы. Прилагательные также не имеют грамматического показателя частеречной принадлежности. Нередки также случаи формального совпадения прилагательных и существительных, а также прилагательных и наречий. Тем не менее, имеется ряд формальных показателей, в частности, наличие степеней сравнения, позволяющих выделять прилагательные как самостоятельную часть речи. В категории степеней сравнения, исходя из формальносемантических особенностей, можно выделить подкатегории собственно сравнения и интенсивности проявления признака. В обоих случаях грамматические значения могут выражаться как морфологическими, так и лексическими средствами. Это свидетельствует о том, что категория степеней сравнения в древнеармянском языке не подверглась полной грамматикализации, и ее проявления занимают промежуточное положение между грамматическим и словообразовательным уровнями.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2013

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ----- 3

Գրիգորյան Գայանե, Արդի փորձառական հնչյունաբանության վիճակը արտերկրում-----5

Գրիգորյան Գայանե, Թվականների սխալ և ճիշտ արտաբերությունը -----16

Հովհաննիսյան Հայկանուշ, Մամվել Անեցու կյանքն ու գրական գործունեությունը -----25

Մանուկյան Անժելա, Ուտուտյան Ռոբերտ, Հայերենի այբուբենի տառերի հաճախության վերլուծություն-----62

2014

Գրիգորյան Գայանե, Հնչույթի տեսությունը և հնչյունաբանության ինդիքներն ըստ Շչերբայի -----71

Ղուկասյան Սևակ, Աստվածաշնչի «Երեմիայի մարգարեություն» գրքի աշխարհաբար և գրաբար հարցումների հաղորդակցման տիպերը ----- 84

2015

Հովսեփյան Լիանա, Ածականների բաղդատականության կարգը դասական գրաբարում-----91

**ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ**

ՊՐԱԿ Ա

Ձևավորումը և էջադրումը՝

Ա. Օհանջանյանի